
ԱՐՄԵՆԻ ՎԱՆՔ, Армени ванк*, Armeni vank' - Ա ն ա պ ա տ (վանք) Լեոնային Կիլիկիայում, Լամբրոն բերդից արլ, տ Արմեն:

ԱՐՄՏԱՆԱ Ս ԳԵՎՈՐԳ, Армтана Св Геворг, Armtana St Gevorg, **Ս Գևորգի վանք** – **Վ ա ն ք Մեծ** Հայքի Բարձր Հայք աշխ-ի Գարանաղի գավ-ում, Մեծ Արմտան գ-ից հրա-արչ: Նոր ժամանակներում մի սո-վորական մատուռ էր: Զպետք է շփոթել նույն գավ-ում գտնվող Կա-մախի Ս Գևորգ և Ուոխի Ս Գևորգ վանքերի հետ:

ԱՐՄՏՈԼ, Армотл, Armtol – **Վ ա ն ք Արմ** Հայաստանում, Բիթ-լիսի նահ-ի Բիթլիս ք-ում, **տ Ամրը-դղու վանք**:

ԱՐՄՏՈԼՈՒ ՎԱՆՔ, Армотлу ванк*, Armtolu vank' – **Վ ա ն ք Արմ** Հայաստանում, Բիթլիսի նահ-ի Բիթլիս ք-ում, **տ Ամրդղու վանք**:

ԱՐՇԱՐՈՒՆՅԱՑ ՎԱՆՔ, Арша-рунѧц ванк*, Aršarunyac' vank' – **Վ ա ն ք Մեծ** Հայքի Այրարատ աշխ-ի Արշարունիք գավ-ում: Եր-բեմն նաև այսպես է կոչվել Կա-մրըջաձորի վանքը (տ):

ԱՐՋԱԿԱՊ, Арджакан, Arjakar – **Ե կ ե դ ե ց ի** ներկայիս Նախիջևա-նի Ինքնավար Հանրապետության Շահբուլղի շրջ-ի Քյուլուս (Քուլլք) գ-ում: Հնում մտել է Մեծ Հայքի Այու-նիք աշխ-ի Ճահուկ գավ-ի մեջ: Հավանաբար կառուցվել է 13–14-րդ դդ: Այժմ ավերակ է: Գ-ի մյուս եկե-ղեցին, որ կանգուն էր մինչև 1890-ական թթ, կոչվում է Ս Գրիգոր:

ԱՐՋԱԿՈՒ Ս ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, Арджаку Св Аствац'ад'иц, Arjaku St Astvacacin – **Վ ա ն ք Արմ** Հա-յաստանում, Վանի նահ-ի Արճակ գ-ի մոտ, **տ Արճակի Ս Աստվածածին**:

ԱՐՋԱԿՈՒ ՎԱՆՔ, Арджаку ванк*, Arjaku vank' – **Վ ա ն ք Արմ** Հայաստանում, Վանի նահ-ի Արճակ գ-ի մոտ, **տ Արճակի Ս Աստվածածին**:

ԱՐՋԱՌԵԿ, Арджар'ек, Arja- r'ek – **Վ ա ն ք Մեծ** Հայքի Այրա-րատ աշխ-ի Ուրծաձոր գավ-ում, **տ Արջառեբեկ**:

ԱՐՋԱՌԵՐԵԿ, Арджар'ерек, Ar- jar'erek, Անապատ Ուրծա, Աջառե-րեկ, Արջառեկ, Ուրծա անապատ, Ուրծա վանք – **Վ ա ն ք Մեծ** Հայքի Այրարատ աշխ-ի Ուրծաձոր գավ-ում, Սազրա բերդի մոտ: Համայնրի մեջ մտնում էին Ս Աստվածածին, Ս Հակոբ, Ս Սարգիս եկեղեցիները, օ-ժանդակ կառույցներ և պարիսպներ: Հիշատակված է 15-րդ դ: Ղ. Ալի-

շանը, ի նկատի ունենալով անուն- ների իմաստային մոտիկությունը, հնարավոր է համարել Ա նույնաց- նել Երևանի նահ-ի Երևանի գավ-ի Ջամուշբասան գ-ի (հետագայում՝ Աղիղբենդ, այժմ՝ անբնակ, Հայաս- տանի Հանրապետության Արարա- տի մարզում) հետ: Միջին դդ եղել է Հայ գրչության կենտրոն, որտեղ գրվել են ձեռագրեր:

ԱՐՋՆԱՂԲՅՈՒՐ, Арджнаг'бюр, Arjnaγbyur – **Ու խ տ ա տ ե դ ի Արմ** Հայաստանում, Սասունում, Տավրոս լ-ան լանջին: Մոտակայքում բխում էին սառնորակ աղբյուրներ:

ԱՐՋՈՒՆՃԻ ՎԱՆՔ, Аржоар-ч'и ванк*, Arjogarci vank', Առջուռոխձ, Ս Աստվածածին, Արջուռոխձ – **Վ ա ն ք Կարսի մարզի Կաղզվանի** օկրուգում, Անի մայրաքաղաքի մո- տակայքում գտնվող Արջուռոխձ, (այժմ՝ Ալաջա) գ-ում: Եկեղեցին կոչվում էր Ս Աստվածածին, մա- տուռներից մեկը՝ Ս Լուսավորիչ: 20- րդ դ սկզբներին գտնվում էր ա- վերված վիճակում: Այստեղ պահ- պանվում էր 1211 թ Հաղպատում ընդօրինակված մի Ավետարան, որն այժմ գտնվում է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարա- նում (ձեռ. թիվ 6288):

ԱՐՋՈՆԻՅ ՎԱՆՔ, Арджониц ванк*, Arjonic' vank' – **Վ ա ն ք Մեծ** Հայքի Տուրուբերան աշխ-ի Աղիո- վիտ (Քաջբերունիք) գավ-ում, **տ Առջևենից վանք**:

ԱՐՋՈՅ ՎԱՆՔ, Аржоц ванк*, Arjoc' vank' – **Վ ա ն ք Մեծ** Հայքի Այրարատ աշխ-ի Ոստան Հայոց գավ-ում, **տ Աղջուց վանք**:

ԱՐՋՐՈ ՎԱՆՔ, Аржро ванк*, Arjro vank' – **Վ ա ն ք Արմ** Հա- յաստանում, Վանի նահ-ում, համա- նուն գավ-ի Արձկեի գվոկ-ի Արջրա (Արձրա) գ-ում: Միջին դդ եղել է Հայ գրչության կենտրոն, պահպանվել են 14–15-րդ դդ այստեղ ընդօրի- նակված մի քանի ձեռագրեր:

ԱՐՋՐՈՒՍԻՃ, Арджуар'иц*, Ar- juar'ic – **Վ ա ն ք Կարսի մարզի Կաղզվանի օկրուգում, տ Արջուռոձի վանք**:

ԱՐՋՈՒՆԻՅ ՎԱՆՔ, Арджуниц ванк*, Arjunic' vank' – **Վ ա ն ք** Հայաստանում, **տ Առջևենից վանք**:

ԱՐՏԱԶԻ ՎԱՆՔ, Артази ванк*, Artazi vank' – **Վ ա ն ք Պարսկա- Հայաստանում, Մակուի գավ-ում, տ Ս Թաղեի վանք**:

ԱՐՏԱՇԱՏԻ ՄԵՆԱՍՏԱՆ, Арта- шати менастан, Artasati menastan – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապե- տություն Արարատի մարզում, **տ Խոր Վիրապ**:

ԱՐՏԱՎԱԶԱ ԱՊԱՐԱՆՔ, Арта- ваза апаранк*, Artavaza aparank' – **Վ ա ն ք Մեծ** Հայքի Այրարատ աշխ-ի Նիգ գավ-ում, **տ Արտավազ- դա Ս Աստվածածին**:

ԱՐՏԱՎԱԶԱՎԱՆՔ, Артаваза- ванк*, Artavazavank' – **Վ ա ն ք Մեծ** Հայքի Այրարատ աշխ-ի Նիգ գավ-ում, **տ Արտավազդա Ս Աստ- վածածին**:

ԱՐՏԱՎԱԶԴԱ ԱՊԱՐԱՆՔ, Арта- вазда апаранк*, Artavazda apa- rank' – **Վ ա ն ք Մեծ** Հայքի Այ- րարատ աշխ-ի Նիգ գավ-ում, **տ Արտավազդա Ս Աստվածածին**:

ԱՐՏԱՎԱԶԴԱ Ս ԱՍՏՎԱԾԱ- ԾԻՆ, Артавазда Св Аствац'ад'иц, Artavazda St Astvacacin, Անապատ, Արտավազա ապարանք, Արտավա- զավանք, Արտավազդա ապարանք, Արտավազդավանք, Արտավազդի ապարանք, Արտավազդի վանք, Արտավազի ապարանք, Արտավազի վանք – **Վ ա ն ք Մեծ** Հայքի Այ- րարատ աշխ-ի Նիգ գավ-ում: Ավե- րակները գտնվում են Հայաստանի

Հանրապետության Կոտայքի մարզի Բջին գ-ից ոչ հեռու: Ղ. Ալիշանի են- թաղրությունը՝ հիմնադրվել է 9-րդ դ: Ուրիշները, հաշվի առնելով եկե-ղեցու վրայի 1161 թ արձանագրու- թյունը, որը փորագրել է Սարգիս գրիչը, գտնում են, որ վանքը կա- ոուցվել է նույն թ, Վահրամի և Մխիթարի ջանքերով: Եկեղեցու դռների վրա կան 12–13-րդ դդ մի քանի արձանագրություններ: Հա- մեմատաբար լավ են պահպանվել եկեղեցու ավերակները, իսկ օժան- դակ շինություններն ու պարիսպ- ները հաղիվ նշմարվում են: Ոմանք այն նույնացնում են այժմյան Ար- զական գ-ի եկեղեցու հետ:

ԱՐՏԱՎԱԶԴԱՎԱՆՔ, Артавазда- ванк*, Artavazdavank' – **Վ ա ն ք Մեծ** Հայքի Այրարատ աշխ-ի Նիգ գավ-ում, **տ Արտավազդա Ս Աստ- վածածին**:

ԱՐՏԱՎԱԶԴԻ ԱՊԱՐԱՆՔ, Арта- вазди апаранк, Artavazdi aparank' – **Վ ա ն ք Մեծ** Հայքի Այրարատ աշխ-ի Նիգ գավ-ում, **տ Արտա- վազդա Ս Աստվածածին**:

ԱՐՏԱՎԱԶԴԻԿ, Артаваздик, Artavazdik – **Ե կ ե ղ ե ց ի** (մատուռ) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Բյուրական գ-ի մոտ, տ Արտավասիկ:

ԱՐՏԱՎԱԶԴԻԿ, Артаваздик, Artavazdik – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արտավազ գ-ի մոտ:

ԱՐՏԱՎԱԶԴԻ ՎԱՆՔ, Артавазди ванк*, Artavazdi vank' – **Վ ա ն ք** Մեծ Հայքի Այրարատ աշխ-ի Նիզ գավ-ում, տ Արտավազրա Ս Աստվածածին:

ԱՐՏԱՎԱԶԻ ԱՊԱՐԱՆՔ, Артавази апаранк, Artavazi aparank' – **Վ ա ն ք** Մեծ Հայքի Այրարատ աշխ-ի Նիզ գավ-ում, տ Արտավազրա Ս Աստվածածին:

ԱՐՏԱՎԱԶԻ ԱՊԱՐԱՆՔ, Артавази апаранк, Artavazi aparank' – **Վ ա ն ք** (անապատ) Մեծ Հայքի Սյունիք աշխ-ում:

ԱՐՏԱՎԱԶԻԿ, Артавазик, Artavazik – **Ե կ ե ղ ե ց ի** (մատուռ) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Բյուրական գ-ի մոտ, տ Արտավասիկ:

ԱՐՏԱՎԱԶԻ ՎԱՆՔ, Артавази ванк*, Artavazi vank' – **Վ ա ն ք** Մեծ Հայքի Այրարատ աշխ-ի Նիզ գավ-ում, տ Արտավազրա Ս Աստվածածին:

ԱՐՏԱՎԱՍԻԿ, Артаवासик, Artavasik, Արդավազիկ, Արդավասիկ, Արտավազդիկ, Արտավազիկ, Հովհաննես ս Աստվածածին, Տիրամոր եկեղեցի – **Ե կ ե ղ ե ց ի** (մատուռ) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Բյուրական գ-ից մոտ 1 կմ արև, ձորակում: Հնում՝ Այրարատ աշխ-ի Արագածոտն գավ-ում: Կառուցվել է 7-րդ դ: Գմբեթավոր, խաչաձև հատակագծով, կարմրավուն սրբատաշ տուֆաքարից շարված, փոքր, բայց ակնհաս ճո շինություն է: Վերանորոգվել է 12-րդ դ, ապա՝ 1959–1960 թթ: Այժմ կիսավիլված վիճակում է: Դրանից արլ պահպանվում է կանգուն մի կոթող-խաչքար: Ըստ ավանդության՝ այստեղ մահացած մի ճգնավոր մնում է անթաղ, և հրեշտակը նրա համար տեղ է պատրաստում ասելով՝ «Արդ աւասիկ, երթ և ամփոփեցեա գայն», որից էլ եկեղեցին ստացել է Ա անունը: Մեկ այլ ավանդությանը՝ կառուցել է ոմն

Արտավազդ, և շինություն փոքրության պատճառով, փաղաքշարար կոչվել է Ա: 1467 թ ձեռագրական մի հիշատակարանում մատնանշված Բյուրականի վանքը (մենարան) հավանաբար հենց Ա-ն է: Եղել է հայ գրչության կենտրոն, որտեղ 15-րդ դ 50–80-ական թթ գրվել է «Ժողովածոյ քերթուածոց» տաղարանը և ընդօրինակվել «Հիսուս Որդի» գիրքը:

ԱՐՏԵՐԻ Ս ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, Артери Св Аствац'ац'ян, Arteri St Astvacacin – **Վ ա ն ք** Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Վանա լճի հը կողմում, Աղթամար կղզուց արմ գտնվող Արտեր կղզում: Բաղկացած էր երկու եկեղեցիներից, որոնցից մեկի պատի վրա թողնված արձանագրությունը ընթերցվում էր՝ «1292 թ ի հայրապետութեան տեառն Ստեփաննոսի...» խոսքերը: Վանքը նորոգել է տվել Հակոբ վարդապետը 1766 թ: 19-րդ դ վանքն ավերված ու լքված էր, կղզին՝ անմարդաբնակ:

ԱՐՏԻՅ ՎԱՆՔ, Артиц ванк*, Artic' vank' – **Վ ա ն ք** Մեծ Հայքի Տուրուբերան աշխ-ի Տարոն գավ-ում, Մշո Ս Կարապետ վանքից ոչ հեռու գտնված Արտից գյուղ (Արտերթ) գ-ում:

ԱՐՅԱՆԻ Ս ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, Арцахи Св Аствац'ац'ян, Arc'axi St Astvacacin – **Վ ա ն ք** Մեծ Հայքի Ուտիք աշխ-ի Գարդման գավ-ում, տ Լեղանի Ս Աստվածածին:

ԱՐՈՒԲԱՆԱ, Арубана, Arubana – **Պ ա շ տ ա մ ու ն ք ի վ ա յ ը** Հնագույն Հայաստանում, Ուրարտուում: Ոմանք տեղադրում են ուշ ժամանակների Աղբակ գավ-ի Ս Բարդուղիմոս վանքի տարածքում:

ԱՐՈՒՃԻ Ս ԳՐԻԳՈՐ, Аруц'и Св Григор, Aruci St Grigor – **Ե կ ե ղ ե ց ի, վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արուձ գ-ում: Կառուցվել է Գրիգոր Մամիկոնյան (622–685) իշխանի ջանքերով: Օգտագործված է կարմրավուն տուֆ, ունի խաչաձև հատակագիծ: Մեր ժամանակներում վերանորոգվել է առանց զմբեթի:

ԱՐՓԱՅԻ Ս ՍՏԵՓԱՆՈՍԻ ՎԱՆՔ, Арп'аѣи Св Степ'аноси ванк*, Arp'ayi St Step'anosi vank' – **Ե կ ե ղ ե ց ի** Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի

գ-ում, տ Ս Աստվածածին: ԱՐՓԱՅՈՒ Ս ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, Арп'аѣи Св Аствац'ац'ян, Arp'ayu St Astvacacin – **Ե կ ե ղ ե ց ի** (վանք) Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի գ-ում, տ Ս Աստվածածին:

ԱՐՔԱ, Арк'а, Ark'a – **Վ ա ն ք** Հայաստանում: Տեղադրությունը՝ անորոշ: Այստեղ 1486 թ Ալեքսանոս եպիսկոպոսը ընդօրինակել է Ավետարան: Հմմտ Արքայից վանք:

ԱՐՔԱԿԱՂԻՆ, Арк'акаг'ян, Ark'akag'yan, Արքակաղն, Արքակաղնի վանք, Արքայաղնի վանք, Արքայակաղն, Արքայակաղնի վանք, Արքայկաղնի վանք, Ոճկատար, Ոճկրտոր, Հաճկատար, Հաճոյակատար – **Վ ա ն ք** Կիլիկիայի Հայկական թագավորությունում: Եպիսկոպոսանիստ վանք էր: Գտնվում էր Մսիս (Մամեստիա) ք-ից հը-արը, Նուր լ-ան կաղնիների, սոսիների, ձիթենիների անտառների մեջ: Ա է կոչվել կաղնուտներով չըջապատված լինելու համար: Հիմնադրման ժամանակը հայտնի չէ, հիշատակվում է 12-րդ դ կեսերից: Ուներ հազվագյուտ և հայերեն ձոխ ձեռագրերի հավաքածու: 1206–1208 թթ եղել է կաթողիկոսանիստ: Հայկական երաժշտության և գրչության հայտնի կենտրոն էր, որի մասին իր ձառերում գովասանքով է արտահայտվել Հովհաննես Երզնկացին: Այստեղ հորինվել են եկեղեցական մեղեդիներ՝ «Մանրուամուրներ» և «Կցուրդքներ»:

Ա-ում գրված ձեռագրերից մի քանիսը պահպանվել են: Ա-ում են թաղված Կիլիկիայի թագավոր Լևոն 2-րդի (1198–1219) հայրը՝ Ստեփանեն, Հայոց կաթողիկոս Գրիգոր Զ Ապիրատը (1194–1203) և ուրիշներ: Վանքը կործանվել է 1269 թ երկրաշարժից, որից հետո մասնակի վերանորոգումներ կատարվել են, սակայն այն այլևս չի հասել իր նախկին վիճակին: Ավերակները պահպանվել են առ այսօր: Ա-ի մասին հիշատակություններ ունեն հայ պատմիչները (Վարդան Արենյցի, Կիրակոս Գանձակեցի, Սմբատ Սպարապետ, Հովհաննես Երզնկացի), ժամանակագիրներն ու գրիչները: Այստեղ է կրթություն ստացել նշանավոր առակագիր Վարդան Այգեկցին, որը եղել է միաբանության անդամ:

ԱՐՔԱԿԱՂՆԻ ՎԱՆՔ, Арк'а-

каг*ни ванк*, Ark'akayni vank' – Վ ա ն ք Կիլիկիայի Հայկական թագավորությունում, տ Արքակաղին:

ԱՐՔԱՅԱԶՆԻ ՎԱՆՔ, Арк*а-йазни ванк*, Ark'ayazni vank' – Վ ա ն ք Կիլիկիայի Հայկական թագավորությունում, տ Արքակաղին:

ԱՐՔԱՅԱԿԱՂՆ, Арк*айакаг*н, Ark'ayakayn – Վ ա ն ք Կիլիկիայի Հայկական թագավորությունում, տ Արքակաղին:

ԱՐՔԱՅԱԿԱՂՆԻ ՎԱՆՔ, Арк*айакаг*ни ванк*, Ark'ayakayni vank' – Վ ա ն ք Կիլիկիայի Հայկական թագավորությունում, տ Արքակաղին:

ԱՐՔԱՅԻ ՎԱՆՔ, Арк*айи ванк*, Ark'ayi vank' – Վ ա ն ք Մեծ Հայքի Տուրուբերան աշխ-ի Տարոն գավ-ում, տ Արքայից վանք:

ԱՐՔԱՅԻՑ ՎԱՆՔ, Арк*айиц ванк*, Ark'ayic' vank', Արքայի վանք – Վ ա ն ք Մեծ Հայքի Տու-րուբերան աշխ-ի Տարոն գավ-ում, Արքավանք (Արգավանք) գ-ում: Եղել է Հայ գրչության կենտրոն: Հիշատակվում է 14–15-րդ դդ ձե-ռագրական հիշատակարաններում: Այստեղ են գործել գրիչներ Հով-հաննես քահանայի դուստր Վառ-վառը, Ալեքսիանոս եպիսկոպոսը, Մանուկը, կաղմարարներ Դավիթը, Եսային և ուրիշներ:

ԱՐՔԱՅԿԱՂՆԻ ՎԱՆՔ, Арк*ай-каг*ни ванк*, Ark'aykayni vank' – Վ ա ն ք Կիլիկիայի Հայկական թագավորությունում, տ Արքակաղին:

ԱՐՔԱՅՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ, Арк*ают*ян Ар*бюр, Ark'ayut'yan Aybyur, Կահնի Բահաչտ – Ա ղ -բ յ ու թ Ր Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Համանուն գավ-ի Ծատա-լի գվդկ-ի Օլաման (Ալաման) գ-ից 4–5 կմ հը, հարթավայրում: Հոր-դաբուխ աղբյուր էր, որի վրա կա-ռուցված էր մատուռ: Աղբյուրը և մատուռը պաշտվում էր չրճակայքի Հայ ու ասորի բնակիչների կողմից: Քրդերը թարգմանաբար անվանվում էին Կահնի բահաչտ:

ԱՐՔԱՎԱՆՔ, Арк*аванк*, Ark'a-vank' – Վ ա ն ք Մեծ Հայքի Տու-րուբերան աշխ-ի Տարոն գավ-ում, տ Արքայից վանք:

ԱՔԹԱՀ, Ак*т'аh, Ak't'ah – Վ ա ն ք Մեծ Հայքի Աղձնիք աշխ-ում, Սասունում: 9-րդ դ վանքը կո-ղոպտել ու ավերել է արաբական

հրոսակների պարագլուխ Ալ-Ալա իբն-Ահմադը: Մ. Աբեդյանը և Կ. Մելիք-Օհանջանյանը նույնացնում են Մարութա Ս Աստվածածին վան-քին:

ԱՔՈՒԼՅԱՑ ՍԱՀՐԻ ԱՍՏՎԱԾԱ-ԾԻՆ, Ак*уляц Сахри Аствац*ац*иh, Ak'ulac' Sahri Astvacacin – Ու խ - տ ա տ ե ղ ի Մեծ Հայքի Վասպու-րական աշխ-ի Գողթն գավ-ում, Ագուլխի չրճ-ում:

Բ

ԲԱԳԱՎԱՆԻ Ս ՀՈՎՀԱՆՆԵՍ, Багавани Св hOвhаннес, Bagavani St Hovhannes – Վ ա ն ք Արմ Հա-յաստանում, էրզրումի նահ-ում, Բա-յազետի գավ-ի Դիաղինի գվդկ-ում, Վանք գ-ում, տ Ս Հովհաննես:

ԲԱԳԱՎԱՆՈՒ ՎԱՆՔ, Багавану ванк*, Bagavanu vank' – Վ ա ն ք Արմ Հայաստանում, էրզրումի նահ-ում, Բայազետի գավ-ի Դիաղինի գվդկ-ի Վանք գ-ում, տ Ս Հովհան-նես:

ԲԱԳԲԱՐՏՈՒԻ ՏԱՃԱՐ, Багбар-туи тац*ар, Bagbartui tačar – Հ ե թ ա ն ո ս ա կ ա ն տ ա ճ ա Ր Հնագույն Հայաստանում, Մուսասիր ք-ում: Կառուցված է եղել Նալդի աստծո կնոջ՝ Բագբարտուի պատ-վին:

ԲԱԳՆԱՅՐ, Багнайр, Bagnayr, Ս Աստվածածին, Բգնեք, Բրգնեք, Բքնայր, Ղոզլիճայի վանք, Մայր Լուսո վանք – Վ ա ն ք Մեծ Հայքի Այրարատ աշխ-ի Շիրակ գավ-ի Բագնայր գ-ում: Ավերակները պահ-պանվել էին մինչև 1920-ական թթ Կարսի մարզի Կաղզվանի օկրուգի Ղոզլիճա գ-ում: Վանքի համալիրի մեջ մտնում էին չորս եկեղեցիներ, որոնցից գլխավորը Ս Աստվածա-ծինն էր՝ կառուցված 1012 թ՝ Սըմ-բատ Պահլավունի մագիստրոսի նա-խաձեռնությամբ: Սա գմբեթավոր, սյունազարդ գավիթով, Հոռոմոսի վանքին նման գեղեցիկ շինություն էր: Քիչ հը-արլ գտնվում էին ևս երկու, բայց համեմատաբար մեծ՝ Ս Երրորդություն անունը կրող եկե-ղեցիները: Սրանց բոլորի վրա կա-լին Հայերեն վիմագիր արձանա-գրություններ, որոնցից ամենահինը

1042, իսկ ամենանորը՝ 1266 թթ էին: Արձանագրությունները հիմնակա-նում ունենին նվիրատվական բովան-դակություն: Բ միջին դդ եղել է Հա-յաստանի գրչության խոշոր կենտ-րոններից մեկը: Մեղ են հասել այս-տեղ գրված և ընդօրինակված ավելի քան 10 ձեռագրեր (11–13-րդ դդ): Վանքն անչքացել է 14–15-րդ դդ:

ԲԱԳՎԱՆՈՒ ՎԱՆՔ, Багвану ванк*, Bagvanu vank' – Վ ա ն ք Արմ Հայաստանում, էրզրումի նահ-ում, Բայազետի գավ-ի Դիաղինի գվդկ-ի Վանք գ-ի մոտ, տ Ս Հով-հաննես:

ԲԱԳՐԱՏՈՒՆ, Багратун, Bagra-tun – Վ ա ն ք (*), ու խ տ ա - տ ե ղ ի Արմ Հայաստանում, Նար-բերդի նահ-ում, Համանուն գավ-ի Ակնա գվդկ-ի Կոյունան գ-ի մոտ, տ Բագրատունիք:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՔ, Багратуник*, Bagratunik' – Վ ա ն ք (*), ու խ - տ ա տ ե ղ ի Արմ Հայաստանում, Նարբերդի նահ-ում, Ակնա գվդկ-ի Կոյունան գ-ի մոտ:

ԲԱԳՐԵՎԱՆԴԻ ՎԱՆՔ, Багре-ванди ванк*, Bagrevandi vank' – Վ ա ն ք Արմ Հայաստանում, էրզ-րումի նահ-ում, Բայազետի գավ-ի Դիաղինի գվդկ-ի Վանք գ-ում, տ Ս Հովհաննես:

ԲԱԴԱԼԻ ԺԱՄ, Бадали жам, Badali žam – Ե կ ե ղ ե ց ի Հա-յաստանի Հանրապետության Արա-գածոտնի մարզի Ոսկեվազ գ-ում, 5–17-րդ դդ կառույց է: Գ-ի մյուս եկեղեցին կոչվում է Ս Հովհաննես:

ԲԱԴԱՄԱՆԻ ՎԱՆՔ, Бадамлуи ванк*, Badamlui vank' – Վ ա ն ք ներկայիս Նախիջվանի Ինքնավար Հանրապետության Ծահրուգի չրճ-ի Բաղամյու գ-ում: Հնում՝ Օծուխի Ս Աստվածածին (տ):

ԲԱԴԵՆԻՑ ՎԱՆՔ, Бадениц ванк*, Badenic' vank' – Վ ա ն ք Հայաստանում: Տեղադրությունը՝ անորոշ: Արդյո՞ք Հայաստանի Հան-րապետության Լոռու մարզի Բա-ղենք գ-ում չէր գտնվում:

ԲԱԶԵՆԻՑ Ս ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, Ба-зеиц Св Аствац*ац*иh, Bazeic' St Astvacacin – Վ ա ն ք Արմ Հայաս-տանում, Բիթլիսի նահ-ում, Սպար-կերտ գվդկ-ի Բագենց (Բագմենից) գ-ում, տ Բագենից վանք:

ԲԱԶԵՆԻՑ Ս ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, Базениц Св Аствац*ац*иh, Ва-

zenic՝ St Astvacacin – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Սպարկերտ գվոկ-ի Բազենց (Բազմենից) գ-ում, տ Բազենից վանք:

ԲԱԶԵՆԻՑ Ս ԷԶՄԻԱԾԻՆ, Базениц Св Эджмиац’ян, Bazenic՝ St Eǰmiacin – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Համանուն գավ-ի Թիմար գվոկ-ի Բազենից գ-ում, տ Բազենից վանք:

ԲԱԶԵՆԻՑ ՎԱՆՔ, Базениц ванк*, Bazenic՝ vanկ՝, Ս Աստվածածին, Բազենից Ս Աստվածածին – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Սպարկերտ գվոկ-ի Բազենց (Բազմենից) գ-ի մոտ, բլրի վրա: Ճարտարապետական ուշագրավ կառույց էր: Եղել է միջնադարյան Հայկական գրչության կենտրոն, որտեղ գրված ձեռագրերից մի քանիսը այժմ պահվում են Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում և արտասահմանյան Հայկական ձեռագրատներում: Բազենից անվան «ղ»-ի և «դ»-ի չփոթմամբ գրականություն մեջ երբեմն հիշատակված է Բազենից, Բազենց, Բազնից և այլ սխալ ձևերով:

ԲԱԶԵՆՑ, Базенц, Bazenc՝ – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Սպարկերտ գվոկ-ի Բազենց (Բազմենից) գ-ում, տ Բազենից վանք:

ԲԱԶԵՆՑ Ս ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, Базенц Св Аствац’ад’ян, Bazenc՝ St Astvacacin – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Սպարկերտ գվոկ-ի Բազենց (Բազմենից) գ-ում, տ Բազենից վանք:

ԲԱԶՄՈՑ, Базмоц, Bazmoc՝ – Վ ա ն ք (ուխտատեղի) Հայաստանում, տեղագրությունը՝ անորոշ: Եղել է միջնադարյան Հայկական գրչության կենտրոն: Մեղ են հասել այստեղ գրված մի քանի ձեռագրեր, որոնց հիշատակարաններից մեկում այն մատնանշված է:

ԲԱԶՆԻՑ, Базниц, Baznic՝ – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Սպարկերտ գվոկ-ի Բազենց (Բազմենից) գ-ում, տ Բազենից վանք:

ԲԱԶՆԻՑ Ս ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, Базниц Св Аствац’ад’ян, Baznic՝ St Astvacacin – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Սպարկերտ գվոկ-ի Բազենց (Բազմենից) գ-ում, տ Բազենից վանք:

ԲԱԶՆԻՑ ԲԱԶԵԻՑ Ս ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, Базниц Базеиц Св Аствац’ад’ян, Baznic՝ Bazeic՝ St Astvacacin – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Սպարկերտ գվոկ-ի Բազենց (Բազմենից) գ-ում, տ Բազենից վանք:

ԲԱԶՆԻՑ ՎԱՆՔ, Базниц ванк*, Baznic՝ vanկ՝ – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Սպարկերտ գվոկ-ի Բազենց (Բազմենից) գ-ում, տ Բազենից վանք:

ԲԱԶՈՒ, Базу, Bazu – Վ ա ն ք Մեծ Հայքի Տուրուբերան աշխ-ի Տարոն գավ-ում: Բ գ-ի անունով նաև այսպես է կոչվել Ս Կարապետ վանքը (տ):

ԲԱԶՈՒ ՎԱՆՔ, Базу ванк*, Bazu vanկ՝ – Վ ա ն ք Մեծ Հայքի Տուրուբերան աշխ-ի Տարոն գավ-ում: Ս Կարապետ:

ԲԱԺԱԿԱՑ ՎԱՆՔ, Бажакац ванк*, Bajakac՝ vanկ՝ – Վ ա ն ք Մեծ Հայքի Սյունիք աշխ-ում:

ԲԱԼԱՆՈՒ, Балахор*, Balaxor՝, Բալախորի Ս Գևորգ, Բալախոր, Բալախորի Ս Գևորգ, Պալախոր, Պալախոր, Պալախորու Ս Գևորգ – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Էրզրումի նահ-ում, Համանուն գավ-ի Բաբերդի գվոկ-ում, Բաբերդ ք-ից մոտ 25 կմ հս-արմ, Բալախոռ գ-ի մոտ, մի բլրի լանջին: Եկեղեցին կոչվում էր Ս Գևորգ: Առաջին անգամ հիշատակվում է Կարինի Ս Աստվածածին եկեղեցում պահպանված 15-րդ դ հայերեն Ավետարանի հիշատակարանում: Պալախոռ ձևով հիշատակում է Գրիգոր Դարանազցին (16–17-րդ դդ): Ավերվել ու լքվել է 19-րդ դ:

ԲԱԼԱՆՈՒԻ Ս ԳԵՎՈՐԳ, Балахор’я Св Геворг, Balaxor’i St Gevorg – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Էրզրումի նահ-ում, Բաբերդի գվոկ-ի Բալախոռ գ-ի մոտ, տ Բալախոռ:

ԲԱԼԱՆՈՐ, Балахор, Balaxor – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Էրզրումի նահ-ում, Բաբերդի գվոկ-ի Բալախոռ գ-ի մոտ, տ Բալախոռ:

ԲԱԼԱՆՈՐԻ Ս ԳԵՎՈՐԳ, Балахор’я Св Геворг, Balaxori St Gevorg –

Վ ա ն ք Արմ Հայաստանում, Էրզրումի նահ-ում, Բաբերդի գվոկ-ի Բալախոռ գ-ի մոտ, տ Բալախոռ:

ԲԱԼԻ, Бали, Bali – Վ ա յ ը Մեծ Հայքի Աղձնիք աշխ-ում: Ենթադրվում է, որ վանք է եղել, տ Պալի:

ԲԱԼԻԶՈՐԻ ՎԱՆՔ, Балицзори ванк*, Balijori vanկ՝ – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Նիզանի գվոկ-ի մոտ, տ Բարակաձորի Ս Աստվածածին:

ԲԱԼՍԱՄՈՆ, Балсамон, Balsamon – Վ ա ն ք Փոքր Հայքում, Մալաթիա ք-ի մոտ, տ Դայր Բարսումա:

ԲԱԼՈՒԻ ԼԵՌ, Балуи лер*, Balui ler՝ – Լ ե ո Արմ Հայաստանում, Դիարբեքի նահ-ի Բալու ք-ի մոտ, տ Ս Մեսրոպի լեռ:

ԲԱԼՈՒԻ ՀԱՅՊԱԹ, Балуи хАйпат*, Balui Haypat՝ – Ու խ տ ա – տ ե ղ ի Արմ Հայաստանում, Դիարբեքի նահ-ում, Արդնիի գավ-ի Բալուի գվոկ-ի Ձևթ գ-ում, տ Հայպրթոր:

ԲԱՆՏԱՂԵԿԻ ԵԿԵՂԵՑԻ, Бахтаг’еки екер’едц, Baxtag’eki ekeyec’i – Ե կ ե ղ ե ց ի Մեծ Հայքի Շիրակ գավ-ում, Անի մք-ում, տ Նաչուտի եկեղեցի:

ԲԱԿՈՒՐԻ ՎԱՆՔ, Бакури ванк*, Bakuri vanկ՝ – Գ յ ու ղ ե վ ա ն ք (•) Մեծ Հայքի Սյունիք աշխ-ի Բաղբ-Քաշունիք գավ-ում: Հիշատակում են 10–13-րդ դդ Հայ պատմիչները: Ըստ Հին Հարկացուցակի՝ (13-րդ դ) Տաթևի վանքին տալիս էր 12 միավոր դրամ հարկ:

ԲԱՂԱԲՈՒՐԶԻ ՎԱՆՔ, Баг’а-бурджи ванк*, Bag’aburǰi vanկ՝ – Վ ա ն ք Մեծ Հայքի Սյունիք աշխ-ում: Հավանաբար այսպես է կոչվել Բաղբուրջ գ-ի (պատմական Բելսերջի, այժմ՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում) Ս Հոփսիմե եկեղեցին:

ԲԱՂԱԿԻ ՔԱՐ, Баг’аки к’ар, Bag’aki k’ar – Վ ա ն ք Մեծ Հայքի Սյունիք աշխ-ի Ջորք գավ-ի Բաղակի Քար բերդում, տ Բաղակու վանք:

ԲԱՂԱԿՈՒ ՎԱՆՔ, Баг’аку ванк*, Bag’aku vanկ՝, Բաղակի Քար, Բաղակու Քար – Վ ա ն ք Մեծ Հայքի Սյունիք աշխ-ի Ջորք (Կապան) գավ-ում, Բաղակի Քար բերդում: Ավերակները գտնվում են Հայաստանի Հանրապետության Սյունիքի

մարդի Կապան ք-ից մոտ 18 կմ հսարմ, Կապան-Քաջարան խճուղու կիսաճանապարհին: Կանգուն էր մինչև 1923 թ: Ըստ ավանդության՝ այդպես է կոչվել Միսակյան Բաղակ նահապետի անունով: Բ վ հշատակում են 10-13-րդ դդ հայ պատմիչները:

ԲԱՂԱԿՈՒ ՔԱՐ, Баг*аку К*ар, Багакu К*ар - Վ ա ն ք Մեծ Հայքի Սյունիք աշխ-ի Բաղակի Քար բերդում, տ Բաղակու վանք:

ԲԱՂԴԱԴՈՒ, Баг*аду, Багдаду - Ե կ ե դ ե ց ի այժմյան Վրաստանի Հանրապետության Բոլնիս քտա-ում:

ԲԱՂԻՐԽԱՆԻ ՎԱՆՔ, Баг*ир-хани ванк*, Багирхани ванк', Բաղրրխան, Բողրխան, Բովարխանի վանք - Վ ա ն ք Մեծ Հայքի Արցախ աշխ-ի Նաչեն գավ-ում: Գտնվում է Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջ-ում, Բաղրրխան լ-ան լանջին: Կառուցվել է 13-րդ դ: Պարսպապատ է, ունի քառակուսի հատակագիծ, օժանդակ շինություններ: Վանքի միակ եկեղեցին կառուցված է սպիտակ, անմշակ քարից: Այժմ կիսավեր է:

ԲԱՂԻՐԽԱՆ, Баг*рхан, Багирхан - Վ ա ն ք Մեծ Հայքի Արցախ աշխ-ի Նաչեն գավ-ում, տ Բաղրրխանի վանք:

ԲԱՅԱԶԻՏ ԲԵԱԴԵՄԻ, Баязит Беадеми, Bayazit Beademi - Ու խ տ ա տ ե ղ ի պատմական Փոքր Հայքում, Սերաստիայի նահ-ում, Թոխաթի գավ-ի Ջիլե ք-ի մոտ, Իրիս գետի հովտում:

ԲԱՅԱՆԱՆՅ, Баянанц, Bayananc' - Ա ն ա պ ա տ (վանք) այժմյան Ադրբեջանի Հանրապետության Դաշքեսանի շրջ-ի Բանանց գ-ի մոտ, տ Բանանցի Թարգմանչաց անապատ:

Ս ԲԱՆԱԿ, Св Банак, St Banak - Մ ա տ ու ու, ս ը բ ա տ ե ղ ի Մեծ Հայքի Տուրուբերան աշխ-ի Տարոն գավ-ում:

ԲԱՆԱԿԻ ՎԱՆՔ, Банаки ванк*, Banaki vank' - Վ ա ն ք Կարսի մարզի Օլթիի օկրուգում, տ Փանակի վանք:

ԲԱՆԱԿԻ ՏԱՃԱՐ, Банаки тац*ар, Banaki tačar - Վ ա ն ք Կարսի մարզի Օլթիի օկրուգում, տ Փանակի վանք:

ԲԱՆԱՆԱՆՅ, Банананц, Bana-

nanc' - Ա ն ա պ ա տ (վանք) այժմյան Ադրբեջանի Հանրապետության Դաշքեսանի շրջ-ի Բանանց գ-ի մոտ, տ Բանանցի Թարգմանչաց անապատ:

ԲԱՆԱՆՅԱ ԱՆԱՊԱՏ, Банаанац апаат, Banananc'a aparat - Ա ն ա պ ա տ (վանք) այժմյան Ադրբեջանի Հանրապետության Դաշքեսանի շրջ-ի Բանանց գ-ի մոտ, տ Բանանցի Թարգմանչաց անապատ:

ԲԱՆԱՆՅԻ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ԱՆԱՊԱՏ, Банаанац Т*аргманчас апаат, Banannc'i Targmančac' aparat, Բայանանց, Բանանանց, Բանանցա անապատ, Թարգմանչաց անապատ, Պայանանց - Ա ն ա պ ա տ (վանք) այժմյան Ադրբեջանի Հանրապետության Դաշքեսանի շրջ-ի Բանանց գ-ի մոտ, նրանից 3 կմ հր-արլ, Բանանց գետի աջափնյա բլրակի հարթ գագաթին՝ շրջապատված Ղաշխաքար, Աչառի Ծմակ, Նալթոքան, Կարմիրքար, Հինընապատ, Ճնճաքար միմյանց կից լ-ներով: Հնում մտել է Մեծ Հայքի Արցախ աշխ-ի Կողթ գավ-ի մեջ: Հին վանքը նախապես գտնվելիս է եղել Հինընապատ լ-ան վրա: Այժմյան վանքը կառուցված է անմշակ քարից մի կամարի վրա 1630 թ: 19-րդ դ վերջերին պապանվում էին վանքի ավանդատուներ և գավիթը, սրանից քիչ հեռու՝ դանդակատունը, կառուցված 1759 թ, տասը թաղակապ խցերը, պարսպի մնացորդները և 17-18-րդ դդ հայկական գերեզմանոցը:

ԲԱՆԴՈՒՐ, Бандур, Bandur - Վ ա ն ք Ելիզավետպոլի նահ-ի Ջեվանչիրի գավ-ում: Նշանակված է Կովկասի տեղագրական քարտեզներում: Այլ աղբյուրներից մեկ հայտնի է:

ԲԱՆԴՈՒՐՎԱՐԿ, Банширварк, Banširvark - Վ ա ն ք ներկայիս Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Նախիջևան ք-ի մոտ, տ Կարմիր վանք: ԲԱՆՎՈՐ-ՆԱՆ, Банвор-нан, Banvor-nan - Գ յ ու ղ ա տ ե ղ ի (ուխտատեղի) Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջ-ի Նանածախ գ-ի մոտ, 3 կմ հեռավորությամբ, սարավանդի վրա: 19-րդ դ վերջերին պահպանվում էին գերեզմանոցը և եկեղեցու ավերակները:

ԲԱՇՔԵՆԴԻ ՎԱՆՔ, Башк*енди ванк*, Bašk'endi vank' - Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզում, Վերնաչեն գ-ից հս-արլ, տ Սպիտակավոր Ս Աստվածածին:

ԲԱՍԵՆՈ ՎԱՆՔ, Басено ванк*, Baseno vank' - Վ ա ն ք Մեծ Հայքի Այրարատ աշխ-ի Բասեն գավ-ում, այժմյան Հասանկալա ք-ի մոտ, տ Ս Աստվածածին:

Ս ԲԱՍԻԼԻՈՍ, Св Басилиос, St Basilios - Ու խ տ ա տ ե ղ ի Փոքր Հայքում, Ամասիա ք-ի մոտ:

ԲԱՎԱՐԽԱՆ, Бавархан, Bavarchan - Վ ա ն ք և ա մ ը ո ց Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջ-ի Ննգի գ-ի մոտ: Հիշատակվում է 18-րդ դ հայ ազատագրական շարժումների առընչությամբ: Հմմտ Բաղրրխանի վանք:

ԲԱՏԱԿԱԼ, Батакал, Batakal - Վ ա ն ք Երևանի նահ-ի Նոր Բայազետի գավ-ում: Հիշատակում է Սիմեոն Երևանցին (18-րդ դ) նաև որպես նույնանուն հայաբնակ գ (այժմ՝ Լճաչեն, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում): Այս վանքում 1576 թ գրվել է մի Ավետարան:

ԲԱՐԱԿԱԶՈՐԻ Ս ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, Баракадзори Св Аствац*ац*и, Barakajori St Astvacacin, Ս Աստվածածին, Բալիձորի վանք, Բարևձորի վանք, Բարիձորի Ս Աստվածածին, Բարիձորի վանք, Բարձիւձորի վանք, Նորանաց վանք, Յոթ Նորան Ս Աստվածածին, Յոթն Նորանա վանք, Յոթն Նորանաց վանք, Յոթն Նորան Ս Աստվածածին, Յոթն Նորանի վանք, Յոթն Նորան վանք - Վ ա ն ք Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, համանուն գավ-ի (Բարեձոր) Փայասոր գվոկ-ի Նիզան գ-ի մոտ, նրանից 7-8 կմ հր-արմ, ձորակում, ծառաշատ վայրում: Վանքի համալիրի մեջ մտնում էին Ս Աստվածածին եկեղեցին և Ս Գևորգ, Ս Մերկերիոս, Ս Սարգիս մատուռներն ու օժանդակ շինությունները: Մինչև 19-րդ դ վերջերը կանգուն էր և գործում էր: Միջին դդ եղել է հայ գրչության նշանավոր կենտրոններից, որտեղ ընդօրինակված 9 ձեռագրերից մեկը պահպանվում է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մա-

ցել, և չրջակայքի ծառերը ողջույնի համար երեք անգամ խոնարհվել ու բարևել են, և դրա համար ուխտատեղին կոչվել է Բ:

ԲԱՐԵՎԱԾԱՌԻ ՎԱՆՔ, Баревац*ар*и ванк*, Barevac*ar'i vank' – Վ ա ն ք Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու չրջ-ի Ջարդանաչեն գ-ի մոտ, տ Բարեվաճառ:

ԲԱՐ ԷԳԳԱՐԵ, Бар Эггаре, Bar Eggare – Վ ա ն ք Հայաստանում, տ Բեթ Էգգարե:

ԲԱՐԹՈՒՂԵՄԵՆՈՍ, Барт*уг*е-меос, Bart'uγemeos – Վ ա ն ք Արմ Հայաստանում, վանի նահ-ում, Հաբարիի գավ-ի Աղբակ գվոկ-ում, տ Ս Բարդուղիմեոս Առաքյալի վանք:

Ս ԲԱՐԹՈՒՂԵՄԵՆՈՍ ԱՌԱՔ-ՅԱԼԻ ՎԱՆՔ, Св Барт*уг*имеос Ар*ак*яли ванк*, St Bartuγimeos Arak'yali vank' – Վ ա ն ք Արմ Հայաստանում, վանի նահ-ում, Հաբարիի գավ-ի Աղբակ գվոկ-ում, տ Ս Բարդուղիմեոս Առաքյալի վանք:

ԲԱՐԻՋՈՐԻ Ս ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, Баридзори Св Аствац*ад*иц, Baridzori St Astvacacin – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ի Նիդանի գվոկ-ում, տ Բարակաձորի Ս Աստվածածին:

ԲԱՐԻՋՈՐԻ ՎԱՆՔ, Баридзори ванк*, Baridzori vank' – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ի Նիդանի գվոկ-ում, տ Բարակաձորի Ս Աստվածածին:

ԲԱՐԻՋՈՐՈ ՎԱՆՔ, Баридзоро ванк*, Baridzoro vank' – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ի Նիդանի գվոկ-ում, տ Բարակաձորի Ս Աստվածածին:

ԲԱՐԻՍ, Барис, Baris – Հ ե թ ա – ն ո ս ա կ ա ն տ ա ճ ա ր : Հիշատակել է Ստրաբոնը, որի նկարագրությունից կարելի է կռահել, որ գտնվում էր Այրարատ աշխ-ի տարածքում, ճանապարհի վրա:

ԲԱՐ-ԼԱՀՈ, Бар-Лахо, Bar-Laho – Վ ա ն ք Կիլիկիայում, Սև լ-ների չրջ-ում, տ Պառվահո վանք:

ԲԱՐՁՐԱԲԵՐԴ, Бардзраберд, Barjzraberd – Վ ա ն ք Կիլիկիայի Հայկական թագավորությունում, վահկա բերդից արմ: 13-15-րդ դդ եղել է հայ գրչության և մանրանկարչության կենտրոն:

ԲԱՐՁՐԱՀԱՅԱՅ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, Бардзрахаяц Аствац*ад*иц,

Barjzrahayac Astvacacin – Վ ա ն ք (մենաստան) Արմ Հայաստանում, Դիարբեքիի նահ-ի Չնքուչ գգ-ի մոտ, տ Բարձրահայաց Ս Աստվածածին:

ԲԱՐՁՐԱՀԱՅԱՅ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, Бардзрахаяц Аствац*ад*иц, Barjzrahayac Astvacacin, Ալփունարի վանք, Ս Աստվածածին, Ս Աստվածածին Փոքր, Արկնո վանք, Արդնիի վանք, Արդնվո վանք, Բարձրահայաց Աստվածածին, Ս Բարձրահայաց վանք, Բարձրաձորո վանք, Բարձր վանք, Էլիփունար վանք, Ս Կարապետ, Ս Սարգիս, Սևիդայի Ս Աստվածածին, Սևիդայի վանք, Սևիդի Ս Աստվածածին, Սիրահայաց Ս Աստվածածին – Վ ա ն ք (մենաստան) Արմ Հայաստանում, Դիարբեքիի նահ-ում, Արդանայի գավ-ի Չրնքուչի գվոկ-ի համանուն գգ-ից 1,5-2 կմ հեռավորությամբ: Հնում մտնում էր Մեծ Հայքի Անգեղ Տուն (Քեղ) աշխ-ի Պաղնատուն գավ-ի մեջ: Կառուցված է բարձրադիր ժայռի վրա, Արկնի բերդի մոտ, որի հետ էլ կապում են անվան ծագումը: Ըստ ավանդության՝ հիմնադրել է Թադևոս Առաքյալը: Վերակառուցվել է 14-րդ դ: Համալիրի մեջ մտնող բոլոր շինությունները կառուցված են սրբաբառաչ քարից: Եկեղեցին կոչվում էր Ս Աստվածածին: Ուներ առաջնորդարան, գրատուն և օժանդակ շինություններ: Ըստ փմագիր արձանագրությունների՝ վանքը հիմնել է Նաղաչ Մկրտիչ եպիսկոպոսը 1433 թ, վերանորոգվել է Եղիազարի կողմից 1663 թ (որը 1682-1891 թթ դարձավ կաթողիկոս՝ Եղիազար Ա Այնթապցի անունով): Եղել է հայ գրչության նշանավոր կենտրոն: Հայտնի են այստեղ ընդօրինակված Գանձարանը (1433 թ), Մաշտոցը (1434 թ), Ավետարանը (1437 թ): Վանքն ունեցել է ընդարձակ կալվածքներ: Եղել է թեմական աթոռանիստ և լիովին ավերվել է 1915 թ:

Ս ԲԱՐՁՐԱՀԱՅԱՅ ՎԱՆՔ, Св Бардзрахаяц ванк*, St Barjzrahayac vank' – Վ ա ն ք (մենաստան) Արմ Հայաստանում, Դիարբեքիի նահ-ի Չնքուչ գգ-ի մոտ, տ Բարձրահայաց Ս Աստվածածին:

ԲԱՐՁՐԱՔԱՇ, Бардзрак*аш, Barjzrakas – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դսեղ գ-ի մոտ, տ Բարձրաքաչ Ս Աստվածածին:

ԲԱՐՁՐԱՔԱՇ Ս ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, Бардзрак*аш Св Аствац*ад*иц, Barjzrakas St Astvacacin, Ս Աստվածածին, Բարձրաքաչ, Բարձրաքաչ Ս Գրիգոր, Ս Գրիգոր, ձերմակ վանք – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դսեղ գ-ի մոտ, նրանից 2 կմ հաարը: Հնում մտնում էր Մեծ Հայքի Գուգարք աշխ-ի Տաշիր գավ-ի մեջ: Վանքը տեղադրված է անտառապատ ձորալանջին: Կառուցվել է 11-13-րդ դդ Մամիկոնյան նախարարների միջոցներով: Համալիրը բաղկացած է 3 եկեղեցիներից. փոքրը կառուցված է մուգ կապտավուն որձաքարից, մայր եկեղեցին՝ Ս Աստվածածինը՝ սրբաբառաչ բաց դեղնավուն և բաց վարդագույն քարերից և ժամատնից: Ս Աստվածածնի շինությունները սկսել է մարզպան Մամիկոնյան իշխանը 1221 թ, որի մասին եկեղեցու հր պատին թողնված է համապատասխան արձանագրություն: Համալիրի ամենահին շինությունը Սագաչեն եկեղեցին է (10-րդ դ): Վանքում գտնվել է նաև Մամիկոնյանների պանթեոնը: Շինությունների վրա թողնված են 10-14-րդ դդ տարբեր բովանդակու-

գվոկ-ում, տ Բարակաձորի Ս Աստվածածին:

ԲԱՐՁՐԱՋՈՐՈ ՎԱՆՔ, Бардзра-дзоро ванк*, Barjzrojoro vank' – Վ ա ն ք (մենաստան) Արմ Հայաստանում, Դիարբեքիի նահ-ի Չնքուչ գգ-ի մոտ, տ Բարձրահայաց Ս Աստվածածին:

ԲԱՐՁՐ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, Бардзр Аствац*ад*иц, Barjzr Astvacacin – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Սասունում, տ Սուսանց վանք:

ԲԱՐՁՐ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, Бардзр Аствац*ад*иц, Barjzr Astvacacin – Վ ա ն ք Մեծ Հայքի Բարձր Հայք աշխ-ի Նորձյան գավ-ում, տ Ապառու Ս Կարապետ:

ԲԱՐՁՐ Ս ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, Бардзр Св Аствац*ад*иц, Barjzr St Astvacacin – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Սասունում, տ Սուսանց վանք:

ԲԱՐՁՐԱՔԱՇ, Бардзрак*аш, Barjzrakas – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դսեղ գ-ի մոտ, տ Բարձրաքաչ Ս Աստվածածին:

ԲԱՐՁՐԱՔԱՇ Ս ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, Бардзрак*аш Св Аствац*ад*иц, Barjzrakas St Astvacacin, Ս Աստվածածին, Բարձրաքաչ, Բարձրաքաչ Ս Գրիգոր, Ս Գրիգոր, ձերմակ վանք – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դսեղ գ-ի մոտ, նրանից 2 կմ հաարը: Հնում մտնում էր Մեծ Հայքի Գուգարք աշխ-ի Տաշիր գավ-ի մեջ: Վանքը տեղադրված է անտառապատ ձորալանջին: Կառուցվել է 11-13-րդ դդ Մամիկոնյան նախարարների միջոցներով: Համալիրը բաղկացած է 3 եկեղեցիներից. փոքրը կառուցված է մուգ կապտավուն որձաքարից, մայր եկեղեցին՝ Ս Աստվածածինը՝ սրբաբառաչ բաց դեղնավուն և բաց վարդագույն քարերից և ժամատնից: Ս Աստվածածնի շինությունները սկսել է մարզպան Մամիկոնյան իշխանը 1221 թ, որի մասին եկեղեցու հր պատին թողնված է համապատասխան արձանագրություն: Համալիրի ամենահին շինությունը Սագաչեն եկեղեցին է (10-րդ դ): Վանքում գտնվել է նաև Մամիկոնյանների պանթեոնը: Շինությունների վրա թողնված են 10-14-րդ դդ տարբեր բովանդակու-

թյան շուրջ 41 վիմագիր արձանագրություններ: Շրջակայքում կան աղբյուրներ, ձիթհանքի փլատակներ, Մամիկոնյանների կառուցած Սաղուձորի կամուրջը, ավերված մատուռներ, հին տապանաքարեր, իսկ ձորագլխին՝ «Սիրուն խաչ» խաչքարը: Կառույցների մի մասն էլ սպիտակ քարից է, որի համար վանքը կոչվել է նաև ձերմակ վանք: Բարձրաքաչ անունը տրվել է գմբեթի շատ բարձր ու սլացիկ լինելու համար: Պատերից մեկի վրա պահպանվել է Մամիկոնյանների տոհմանշան քանդակը: Համալիրը գտնվում է կիսավեր և անմխիթար վիճակում:

ԲԱՐՁՐԱՔԱՇ Ս ԳՐԻԳՈՐ, Бардзрак*аш Св Григор, Barjrakas St Gri-gor – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դսեղ գ-ի մոտ, **տ Բարձրահայաց Ս Աստվածածին:**

ԲԱՐՁՐԵԼ, Бардзрел, Barjrel, **Բարձրյալ – Ս ր ք ա տ ե ղ ի** Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բարեկամավան գ-ի մոտ, նրանից 2 կմ հս-արմ:

ԲԱՐՁՐՅԱԼ, Бардзрял, Barjryal, **Ամենափրկիչ, Ս Գևորգ – Մ ա տ ու ու** Կարսի մարզում, Կարսի օկրուգի Շորագյալի տեղամասում, Բաչ Շորագյալ (Շիրակական) գ-ից հս: Գտնվում էր կիսավեր վիճակում:

ԲԱՐՁՐ ՎԱՆՔ, Бардзр ванк*, Barjr vank' – **Վանք Արմ** Հայաստանում, Դիարբեքիրի նահ-ում, Չնքուչ գբ-ի մոտ, **տ Բարձրահայաց Ս Աստվածածին:**

ԲԱՐՅԱՎ, Баряв, Baryav – **Ու խ տ ա տ ե ղ ի (վանք)** Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջ-ի Զարդանաչեն գ-ի մոտ, **տ Բարևածառ:**

ԲԱՐՇԱՄԻ ՄԵՆՅԱՆ, Баршамн мелян, Baršami mehyan, **Բարշամինա Սպիտակափառ Դիք, Բարչիմինա Սպիտակափառ Դիք, Բարչամինա, Սպիտակափառ Դից մեհյան – Մ ե հ յ ա ն Մեծ** Հայքի Բարձր Հայք աշխ-ի Դարանաղի գավ-ի Թորղան ավանում: Կառուցել էր Հայոց Տիգրան Մեծ թագավորը (95–55 թթ մ թ ա): Սկզբնաղբյուրների համաձայն՝ պատրաստված էր փղոսկրից, լ-նային բյուրեղից և արծաթից: Քրիստոնեությունից ընդունումից հետո (301 թ), Գրիգոր Լուսավորիչը քանդել է տվել Բ մ-ը և նրա տեղում

կառուցել է Ս Խաչ (նաև Ս Նշան, Ս Փրկիչ) եկեղեցին, որը հետագայում հայտնի էր Ս Նշան անունով:

ԲԱՐՇԱՄԻՆԱ ՍՊԻՏԱԿԱՓԱՌ ԴԻՔ, Баршамина Спитакап*ар* Дик*, Baršamina Spitakap'ar' Dik' – **Մ ե հ յ ա ն Մեծ** Հայքի Բարձր Հայք աշխ-ի Դարանաղի գավ-ի Թորղան գ-ում: **Տ Բարչամի մեհյան:**

ԲԱՐՁԱՆՃԻ ԱՆԱՊԱՏ, Барджанч*и анапат, Barjanči anapat, **Բարջանչի անապատ, Բարջանջա – Ա ն ա պ ա տ (վանք)** Արմ Հայաստանում, Խարբերդի նահ-ի Բարջանձ գ-ում: Եղել է միջնադարյան հայ գրչության կենտրոն: Հմմտ **Ս Փրկիչ եկեղեցի:**

ԲԱՐՁԱՆՋԻ ԱՆԱՊԱՏ, Барджан-джи анапат, Barjanji anapat – **Ա ն ա պ ա տ (վանք)** Արմ Հայաստանում, Խարբերդի նահ-ի Բարջանձ գ-ում, **տ Բարջանձի անապատ:**

Ս ԲԱՐՍԱՄ, Св Барсам, St Barsam, **Ս Պարսամ – Վ ա ն ք** պատմական Գամիքում (Կապադովկիա) Կեսարիայի նահ-ում, Կեսարիա ք-ից մոտ 16 կմ հր-արլ, լ-նադաշտում: 19-րդ դ վերջերին ավերված ու լքված էր, շրջապարիսպը՝ գետնին հավասարեցված:

ԲԱՐՍԱՄ-ՃԳՆԱՎՈՐ, Барсам-ч*гнavor, Barsam-čgnavor – **Մ ա տ ու ու** Ելիզավետպոլի նահ-ի Ելիզավետպոլի գավ-ում: Ներսում եղել են 3 գերեզմաններ, որոնցից մեկն ունեցել է Հայերն տապանագրեր:

ԲԱՐՍԱՎՄԱՅԻ ՎԱՆՔ, Барсавмайи ванк*, Barsavmayi vank' – **Վ ա ն ք** Փոքր Հայքում, Մալաթիա ք-ի մոտ, **տ Դայր Բարսումա:**

Ս ԲԱՐՍԵՂ, Св Барсер*, St Barsey – **Ե կ ե ղ ե ց ի** Փոքր Հայքում, Կեսարիա ք-ում:

Ս ԲԱՐՍԵՂ, Св Барсер*, St Barsey, «Այվասիլի» **Ս Բարսեղ, Ս Բարսեղ Հայրապետի վանք – Վ ա ն ք** պատմական Գամիքում (Կապադովկիա), Կեսարիայի գավ-ում, Կեսարիա ք-ից հր, Թոմարգայի Ս Աստվածածին վանքից արլ, ոչ բարձրադիր լ-ան վրա՝ ստորոտին: 19-րդ դ նշմարվում էին միայն եկեղեցու հիմնապատերն ու կամարների փլատակները: Հիմնադրման կամ ավերման ժամանակները հայտնի չեն: Միայն ավանդաբար գիտեին, որ այդտեղ այդ անունով վանք է եղել: Այնուամենայնիվ, մինչև 1915 թ տա-

րին մեկ անգամ այստեղ ուխտի էին գալիս Թոմարգայի հայերը և շրջակայքի հույները: Վերջիններս վանքը անվանում էին «Այվասիլի»՝ Ս Բարսեղ:

ԲԱՐՍԵՂԱՆՅ ԱՆԱՊԱՏ, Барсер*нац анапат, Barseyanc anapat, **Բարսեղաց անապատ, Բարսեղյանց անապատ, Ս Բարսեղի վանք – Վ ա ն ք (անապատ)** Կիրիկիայում, ձկեր գավ-ում, Սև լ-ների շրջ-ում: Ըստ Մատթեոս Ուռհայեցու հիշատակության՝ 1114 թ երկրաշարժից հիմնահատակ կործանվել է և այլևս չի վերականգնվել: Աղետի ժամանակ զոհվել են 32 հոգևորականներ: Անունը կապում են Բարսեղ Ա Անեցի կաթողիկոսի (1105–1113) հետ: Ըստ Երվանդ Քասունու՝ այս վանքն է, որ հետագայում Գևորգ Մաչկերի անունով կոչվել է Մաչկերի վանք: Դյուլդրինն այն նույնացրել է Շուղրի, իսկ Ղ. Այլչանը՝ Վարդկան վանքի հետ, ինչն անընդունելի է:

ԲԱՐՍԵՂԱՅ ԱՆԱՊԱՏ, Барсер*ац анапат, Barseyac' anapat – **Վ ա ն ք (անապատ)** Կիրիկիայում, ձկեր գավ-ում, **տ Բարսեղանց անապատ:**

Ս ԲԱՐՍԵՂԻ ՎԱՆՔ, Св Барсер*и ванк*, St Barseyi vank' – **Վ ա ն ք (անապատ)** Կիրիկիայում, ձկեր գավ-ում, **տ Բարսեղանց անապատ:**

Ս ԲԱՐՍԵՂ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՎԱՆՔ, Св Барсер* иАайрапетн ванк*, St Barsey Hayrapeti vank' – **Վ ա ն ք** պատմական Գամիքում (Կապադովկիա) Կեսարիայի նահ-ում, Կեսարիա ք-ից հր, **տ Ս Բարսեղ:**

ԲԱՐՍԵՂՅԱՆՅ ԱՆԱՊԱՏ, Барсер*янци анапат, Barseyyanc' anapat – **Վ ա ն ք (անապատ)** Կիրիկիայում, ձկեր գավ-ում, **տ Բարսեղանց անապատ:**

ԲԱՐՍՈՒՄԻ ՎԱՆՔ, Барсумн ванк*, Barsumi vank' – **Վ ա ն ք** այժմյան Աղբերջանի Հանրապետության Շամխորի շրջ-ի Բարսում գ-ում: Հնում մտնում էր Ուտիք աշխ-ի Գարդման գավ-ի մեջ: Ունի երկու եկեղեցի՝ Ս Հոփսիմե, Ս Մինաս անուններով: Վերջինիս բակում էր գտնվում Մինաս ճգնավորի գերեզմանը: Համալիրը գտնվում էր կիսավեր վիճակում:

ԲԱՅԻԿ ՆՈՐ, Бацк Нор, Bac'ik Nor – **Վ ա ն ք** Հայաստանում, տե-

ղաղբությունը՝ անորոշ: Այստեղ 1894 թ Մանուկի որդի Աբրահամը բնորոշանակել է մի Մաշտոց:

ԲԳԱՎՈՐ, Бгавор, Bgavor, Բղա-վոր - Ե կ ե ղ ե ց ի Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արորի գ-ի տարածքում:

ԲԳՆԵՐ, Бгнер, Bgner - Վ ա ն ք Մեծ Հայքի Այրարատ աշխ-ի Շիրակ գավ-ում, տ **Բագնայր:**

ԲԴՈՒՐԻ ՏԱԿԻ ԵՂՅԻ, Бдуря Таки егъци, Bduri Taki eyc'i - Ե կ ե ղ ե ց ի Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում: Արլ սրահն այժմ ավերված է: Շրջակայքում կան հին բնակավայրի հետքեր, գերեզմանոց: Տարածքում հայտնաբերվել են 12-13-րդ դդ ջնարակած խեցեղենի մնացորդներ:

ԲԵԹ ԷԳԳԱՐԵ, Бет* Эггаре, Bet* Ėggare, Բար էգգարե - Վ ա ն ք Հայաստանում: Տեղադրությունը՝ անհայտ:

ԲԵԹԻԱՍ, Бетъяс, Bet'ias - Վ ա ն ք Կիրիկիայում, Հայոց ծոցի ափին, Հոռսիկյան հրվանդանում, Բեթիաս գ-ում: Գտնվում էր Բ լ-ան վրա: Հունագավան վանք էր: Հիշատակում է Ներսես Լամբրոնացին (12-րդ դ):

Ս ԲԵԹՆԵՀԵՄ, Св Бетъехем, St Bet'xehem - Ե կ ե ղ ե ց ի Երևանի նահ-ի Նոր Բայազետի գավ-ի Բասարգեշարի ոստիկանական շրջ-ում, Զախրու (այժմ՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ուշաղբյուր) գ-ի մոտ, որի տակից բխող աղբյուրը փոքր-ինչ հեռու առաջացրել էր կարմրախայտ ձրկներով հարուստ մի լճակ:

ԲԵԼԵԿԵՍԻ Ս ԴԱՆԻԵԼ, Белекеси Св Даниел, Belekesi St Daniel - Վ ա ն ք պատմական Գամիրքում (Կապադոկիա) Կեսարիայի նահ-ում, Բելեկեսի գ-ի մոտ, Ս Կարապետ վանքից 2-3 կմ հեռավորության վրա, բարձրադիր վայրում: Եկեղեցին գմբեթավոր, գեղեցիկ շինություն էր: Ըստ ավանդության՝ կառուցել է Վասպուրականի Սենեքերիմ թագավորը (11-րդ դ): Համալիրի մեջ մտնում էին առաջնորդարանի շենքը և հյուրասենյակները: Այս վանքի բակում են թաղված Օշին իշխանն ու նրա որդի Դանիելը:

ԲԵԼԼՈՆԱ ԿՈՒՌՔԻ ՄԵՀՅԱՆ, Беллона курък*и мегян, Bellona kur'ki mehyan - Մ ե հ յ ա ն Փոքր

Հայքի Երկրորդ Հայք պրովինցիայում, Եվդոկիա ք-ից հս-արլ, Կոմանա ք-ում:

ԲԵՆԵՆՅ ՎԱՆՔ, Бехенц ванк*, Bexenc' vank' - Վ ա ն ք Մեծ Հայքի Շիրակ գավ-ի Անի ք-ում: Բ-ի մեծահարուստ Տիգրան Հոնենցը 1215 թ արձանագրության մեջ հավաստում է, որ ինքը իր «Տալալ գանձով» կառուցել է տվել Ս Գրիգոր վանքը և «զվանքն Բելանց»:

ԲԵՆԻ ԱՆԱՊԱՍ, Бехи анапат, Bexi anapat - Ա ն ա պ ա տ (վանք) Մեծ Հայքի Սյունիք աշխ-ի Զորք գավ-ում, տ **Տանձափարախ:**

ԲԵՄԿԵՆՈՒՏ, Бемкешут, Bemkeshut - Վ ա ն ք Արմ Հայաստանում, Նարբերդի նահ-ում, Դերսիմի գավ-ի Չմշկածագի գավ-ում, նրա հր կողմում: Փոքրիկ շինություն էր, որից 20-րդ դ սկզբներին կիսականգուն վիճակում էին միայն արմ, հր և հս պատերը, որոնցից մեկի վրա կային լաչերի և մարդու զլխի քանդակներ:

ԲԵՆԿԱՅԻ ՎԱՆՔ, Бенкайи ванк*, Benkayi vank' - Վ ա ն ք պատմական Փոքր Հայքում, Սերաստիայի նահ-ում, համանուն գավ-ի Տևրիկի գավ-ի Բենկա գ-ում, տ **Բենկա վանք:**

ԲԵՆԿԱ ՎԱՆՔ, Бенка ванк*, Benka vank', Բենկայի վանք - Վ ա ն ք պատմական Փոքր Հայքում, Սերաստիայի նահ-ում, համանուն գավ-ի Տևրիկի գավ-ի Բենկա գ-ում, որտեղ հիշատակվում են Ս Աստվածածին, Ս Հրեշտակապետ և Երեք Մանկունք եկեղեցիներ: Բ վ հավանաբար այդ եկեղեցիներից մեկն էր:

ԲԵՇՔԻԼԻՍԱ, Бешк*илиса, Beš-k'ilisa - Վ ա ն ք (մենաստան, ուխտ) Կարսի մարզի Կաղզվանի օկրուգում: Հինգ եկեղեցի ունենալու համար թուրքերը այսպես են կոչում **Ոժկոնք վանքը** (տ):

ԲԵՇՔԻԼԻՍԵ, Бешк*илисе, Beš-k'ilise - Վ ա ն ք (մենաստան) Կարսի մարզի Կաղզվանի օկրուգում: Հինգ եկեղեցի ունենալու համար թուրքերը այսպես են կոչում **Ուրծկոնք վանքը** (տ):

ԲԵՍԱՎԱՆ, Бесаван, Besavan - Վ ա ն ք Արմ Հայաստանում, Վանի նահ-ի Մոկսի գավ-ում, Փեսավանք գ-ի մոտակայքում, տ **Ակնդաշտ:**

ԲԵՍԱՎԱՆՔ, Бесаванк*, Besa-

vank' - Վ ա ն ք Արմ Հայաստանում, Վանի նահ-ի Մոկսի գավ-ում, Փեսավանք գ-ի մոտակայքում, տ **Ակնդաշտ:**

ԲԵՍ, Бест, Best - Լ ե ու ու խ տ ա տ ե ղ ի Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, համանուն գավ-ի Մոկսի գավ-ի Անձղոց (Անջղոնց) գ-ի մոտ: Տարածքում կային հին բերդի և եկեղեցու ավերակներ:

ԲԵՐԴԱԿ, Бердак, Berdak, Բերդակա մենաստան, Բերդական մենաստան, Բերդակա վանք, Բերդակն, Բերթական Ուխտ - Վ ա ն ք (անապատ, մենաստան) Մեծ Հայքի Բարձր Հայք աշխ-ի Սպեր (Նաղտյաց) գավ-ում, Բարբրդ ք-ի մոտակայքում: Եղել է նշանավոր կենտրոն, որի ապացույցն են 14-15-րդ դդ ձեռագրական հիշատակարաններում նրա մասին «հրեշտակաբնակ մենաստան», «հրեշտակավոր Ս մենաստան», «հրաշագործ և գեղեցկաչին տաճար» անվանումները: Ոմանք սխալ կերպով շփոթել են Եղեսիա ք-ի Բ-ի հետ:

ԲԵՐԴԱԿ, Бердак, Berdak - Վ ա ն ք Հյուսիսային Միջագետքում, Եղեսիա (Ուռհա) ք-ում: Որոշ ուսումնասիրողների կարծիքով՝ այս վանքի մասին հիշատակված է Սսի Արքակաղին վանքում 1439 թ օրինակված մի տետրակում և պետք է տեղադրվի Եղեսիա ք-ից հս, Քյուլեֆի կոչվող ավերակների տեղում: Ունեցել է 2 եկեղեցի: Ոմանք սխալ կերպով շփոթել են Բարբրդի Բ-ի հետ:

ԲԵՐԴԱԿ, Бердак, Berdak - Ու խ տ ա տ ե ղ ի (մատուռ) ներկայիս Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Օրդուբադի շրջ-ի Տանակերտ գ-ի մոտ, տ **Բերդակի Ս Հովհաննես:**

ԲԵՐԴԱԿԱ ՄԵՆԱՍՏԱՆ, Бердака менастан, Berdaka menastan - Վ ա ն ք (մենաստան, անապատ) Մեծ Հայքի Բարձր Հայք աշխ-ի Սպեր (Նաղտյաց) գավ-ում, տ **Բերդակ:**

ԲԵՐԴԱԿԱՆ ՄԵՆԱՍՏԱՆ, Бердакан менастан, Berdakan menastan - Վ ա ն ք (անապատ, մենաստան) Մեծ Հայքի Բարձր Հայք աշխ-ի Սպեր (Նաղտյաց) գավ-ում, տ **Բերդակ:**

ԲԵՐԴԱԿԱ ՎԱՆՔ, Бердака ванк*, Berdaka vank' - Վ ա ն ք

(անապատ, մենաստան) Արմ Հա-
յաստանում, էրզրումի նահ-ի Բա-
բերդի գավ-ում, տ Բերդակ:

ԲԵՐԴԱԿԻ Ս ՀՈՎՀԱՆՆԵՍ, Бер-
даки Св hOвhаhнec, Berdaki St
Hovhannes, Բերդակ, Ս Հովհաննես
Մկրտիչ – Ու խ տ ա տ ե ղ ի (մա-
տուռ) ներկայիս Նախիջևանի Ինք-
նավար Հանրապետության Օրդու-
բադի չրջ-ի Տանակերտ գ-ի մոտ,
Բերդակ կոչված վայրում, նրանից
1,5 կմ հեռավորությամբ: Ծենքի
պատի մեջ շարված են 1524 թ խաչ-
քարեր:

ԲԵՐԴԱԿՆ, Бердакн, Berdakn –
Վ ա ն ք (անապատ, մենաստան)
Մեծ Հայքի Բարձր Հայք աշխ-ի
Սպեր (Նաղտյաց) գավ-ում, տ Բեր-
դակ:

ԲԵՐԴԱԿՈՒ Ս ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, Бердаку Св Аствац'ад'иhн, Berdaku
St Astvacacin, Ս Աստվածածին, Բեր-
դակու վանք – Վ ա ն ք Արմ Հա-
յաստանում, Վանի նահ-ում, Վան ք-
ից հր գտնված Բերդակ գ-ում: Հնում
մտնում էր Մեծ Հայքի Վասպուրա-
կան աշխ-ի Տոսպ գավ-ի մեջ: Տե-
ղադրված է Նոչաբ գետի աջափնյա
լ-նալանջի վրա: Եկեղեցին փոքրիկ,
կանգուն շինություն էր: 17-րդ դ ու-
նեցել է միաբանություն, կայվածք-
ներ: Վնասվել է 1651 թ երկրաշար-
ժից: 19-րդ դ վերջերից ավերվել ու
լքվել է:

ԲԵՐԴԱԿՈՒ ՎԱՆՔ, Бердаку
ванк', Berdaku vank' – Վ ա ն ք
Արմ Հայաստանում, Վանի նահ-ում,
Վան ք-ից հր գտնված Բերդակ գ-
ում, տ Բերդակա Ս Աստվածածին:

ԲԵՐԴԱՁՈՐ, Бердаджор, Berda-
jor – Վ ա ն ք Մեծ Հայքի Վաս-
պուրական աշխ-ի Ռշտունիք գավ-
ում, տ Բերդաձորի Ս Աստվածածին:

ԲԵՐԴԱՁՈՐԻ Ս ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, Бердаджори Св Аствац'ад'иhн, Ber-
dajori St Astvacacin, Անեն, Ս Աստ-
վածածին, Բերդաձոր, Բերդաձորո
վանք, Կարմիր վանք, Կարմրակ,
Կարմրակա Ս Աստվածածին, Կար-
մրրկա վանք, Մեռելհարոց Ս Նշան,
Միանձն-Անեն վանք, Միանձն անա-
պատ, Միանձն վանք – Վ ա ն ք
Մեծ Հայքի Վասպուրական աշխ-ի
Ռշտունիք գավ-ում, հետագայում՝
Արմ Հայաստանի Վանի նահ-ում,
Վանի գավ-ի Գավաշի գավ-ում:
Գտնվում էր Վան լճից հր, Առտեր
կղզու դիմաց, լճափից 2–3 կմ հե-

ռավորության վրա, ձորալանջին,
ծառախիտ վայրում: 15-րդ դ հիշա-
տակարաններում վկայված է Բեր-
դաձոր անունով, որպես հայ գրչու-
թյան կենտրոն: Հետագայում կոչ-
ված է նաև Կարմիր կամ Կարմրակ
(Կարմրակա) վանք: Ըստ Ե. Լալա-
յանի և այլոց՝ այդպես է կոչվել, ո-
րովհետև այստեղ է պահվել կարմիր
ոսկով զարդարված Կենաց փայտի
մասունքը: Ըստ Ղ. Ինճիճյանի՝ այդ
անունը վանքը ստացել է նույն տե-
ղում եղած հին Կարմրակ գ-ի անու-
նից: Ըստ ավանդության՝ այստեղ
պահվել է Ս Նշանի մասունքը, որի
անվան ու զորությունը վանքը կոչ-
վել է նաև Մեռելհարոց Ս Նշան:
Հնում, երբ այստեղ 300 միաբաններ
կային, անվանված է եղել նաև
Միանձն անապատ, Միանձն-Անեն
վանք: Վանքը կառուցել է տվել
Վասպուրականի հայոց թագավոր
Գագիկ Արծրունին 10–11-րդ դդ: Այն
ունեն հղված քարից շինված մի
փառահեղ եկեղեցի, որի հր դռան
մոտ գտնվում էր թագավորի համար
կառուցված վանդակապատ աղո-
թատեղին: Ուներ 3 խորան և աղ-
յուսաչեն բարձր գմբեթ: Ե. Լա-
լայանը սխալմամբ այս վանքը նույ-
նացրել է Սպիտակ վանքին: Հ. Ոսկ-
յանը սխալ է համարում Բ Ս Ա վան-
քը թե՛ Սպիտակ, թե՛ Կարմրակ կամ
Կարմրկա վանքերին նույնացնելը՝
սրանք երեքն էլ համարելով առան-
ձին հաստատություններ: Ինչպես
պարզվում է, Բերդաձորի և Կարմ-
րակ (Կարմրկա) կոչված վանքերը
նույնն են: 15-րդ դ առաջին կեսում
այստեղ ընդօրինակվել է 3 Ավետա-
րան, իսկ նույն դ 50–80-ական թթ՝
Մաշտոց: Վանքը կողոպտվել ու
ավերվել է 1895 թ:

ԲԵՐԴԱՁՈՐԻ Ս ԳՐԻԳՈՐ, Бер-
даджори Св Григор, Berdajori St
Grigor, Կարմիր վանք – Վ ա ն ք
(ուխտատեղի) Լեռնային Ղարաբա-
ղի Հանրապետության Մարդակեր-
տի չրջ-ի Վաղահաս գ-ի մոտ, դրա-
նից մոտ 12 կմ արմ, Թարթառ գետի
աջ կողմում, Լարան կոչված ձորում:
Հնում մտնում էր Մեծ Հայքի Արցախ
աշխ-ի Բերձոր (Բերդաձոր) գավ-ի
մեջ: Փոքրիկ օրորոցաձև եկեղեցին
ունի թաղակապ գավիթ, հր կող-
մում՝ մի մատուռ, չուրջը՝ ավերված
խցեր: Եկեղեցու արտաքին պատե-
րին կան հայերեն արձանագրու-

թյուններ, որոնցից մեկը՝ 1229 թ:
ԲԵՐԴԱՁՈՐՈ ՎԱՆՔ, Бердаджо-
ро ванк', Berdajoro vank' – Վ ա ն ք
Մեծ Հայքի Վասպուրական աշխ-ի
Ռշտունիք գավ-ում, տ Բերդաձորի
Ս Աստվածածին:

ԲԵՐԴԱՎԱՆԻ ՎԱՆՔ, Бердаванн
ванк', Berdavani vank' – Վ ա ն ք
(եկեղեցի) Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության Հաղրութի չրջ-ի
Ղուչչիլար գ-ում, տ Բերդավանք:

ԲԵՐԴԱՎԱՆՔ, Бердаванк', Ber-
davank', Բերդավանի վանք –
Վ ա ն ք (եկեղեցի) Լեռնային Ղա-
րաբաղի Հանրապետության Հաղ-
րութի չրջ-ի Ղուչչիլար գ-ում: Պա-
րսպապատ շինություն է՝ կառուց-
ված ու ճ միջնադարում:

ԲԵՐԴԱՈՒՆՉ, Бердаунц, Ber-
daunc' – Վ ա ն ք (եկեղեցի) Լեռ-
նային Ղարաբաղի Հանրապետու-
թյան Մարտունու չրջ-ի Թաղավարդ
գ-ի մոտ, տ Բրդահունջ:

ԲԵՐԴԻԿ, Бердик, Berdik – Ե կ ե-
ղ ե ց ի Հայաստանի Հանրապետու-
թյան Սյունիքի մարզում, «Կարմ-
րաքար» հանգստյան տան մոտ,
նրանից 3–4 կմ հս-արմ: Գտնվում է
ավերված վիճակում:

ԲԵՐԴԻ ՆԱՀԱՏԱԿ, Бердн nahat-
tak, Berdi nahatak – Մ ա տ ու ո
Լեռնային Ղարաբաղի Հանրապե-
տության Մարտունու չրջ-ի ձար-
տար գ-ից արմ, ժայռի վրա: Կիսա-
վեր մատուռ է, որ տեղացիների
ասելով եղել է մի նահատակի գե-
րեզման:

ԲԵՐԴՈ ՎԱՆՔ, Бердо ванк', Berdo
vank' – Վ ա ն ք Մեծ Հայքի
Ուտիք աշխ-ի Փառխոսս գավ-ում,
Շամքոր ք-ում: Հիշատակում է Մով-
սես Կաղանկատվացին (7-րդ դ):

ԲԵՐԴՈ Ս ԳՐԻԳՈՐ, Бердо Св
Григор, Berdo St Grigor – Վ ա ն ք
Հայաստանում, ճգրիտ տեղադրու-
թյունը՝ անորոշ: Հավանաբար գտնը-
վել է ներկայիս Հայաստանի Հանրա-
պետության Սյունիքի մարզի Սպան-
դարյան գ-ում: Հիշատակված է 15-
րդ դ ձեռագրական հիշատակարան-
ներից մեկում՝ Քեթովանից Ս Գրի-
գոր և Շաղատա Ս Գրիգոր եկեղե-
ցիների հետ միասին:

ԲԵՐԴՈՒՍ, Бердус, Berdus –
Վ ա ն ք Կիլիկիայի Հայկական թա-
գավորությունում, Մարաշից մոտ 20
կմ հս գտնված Բերդուս ք-ում: 1107
թ սելջուկ-թուրքերը, ասպատակե-

յով Կիլիկիան, Մարաշի վրայով հասել էին մինչև Բ վանքը:

ԲԵՐԹԱԿԱՆ ՈՒՆՏ, **Берт'акан ухт**, Bert'akan uxt – **Վ ա ն ք** (անապատ, մենաստան) Մեծ Հայքի Բարձր Բերձոր Հայք աշխ-ի Սպեր (Ոսղոյայց) գվոկ-ում, **տ Բերդակ**:

ԲԼՆԲԼՆԱՆ, **Блнблнхн**, Bəxbə-xan – **Ու խ տ ա տ ե ղ ի** պատմական Գամիրքում (Կապադովկիա), Կեսարիայի նահ-ում, Սերաստիայի նահ-ի Թոմարգա գլ-ի մոտ:

ԲԹԱՌԻՃՈՒ Ս ՆԻԿՈՂՈՍ, **Бт'а-р'тх'у Св Никогос**, Bt'ar'ič'u St Nikogos – **Վ ա ն ք Արմ** Հայաստանում, Էրզրումի նահ-ում, Երզնկայի գավ-ի Բթառիճ գ-ի մոտ, **տ Ս Նիկողայոս**:

ԲԺՆԿԵՐՏՈՒ Ս ԿԱՐԱՊԵՏ, **Бжккерту Св Карапет**, Bžnkertu St Karapet – **Վ ա ն ք Արմ** Հայաստանում, Էրզրումի նահ-ի Ննուսի գվոկ-ում, **տ Մժնկերտու Ս Կարապետ**:

ԲԻԶՈՒ ՎԱՆՔ, **Бизу ванк'**, Bizu vank' – **Վ ա ն ք Փոքր** Հայքում, Առաջին Հայք պրովինցիայում, Պիզու ք-ում, **տ Պիզու վանք**:

Ս ԲԻԹՆԵՄԻ ՎԱՆՔ, **Св Бит'хеми ванк'**, St Bit'xemi vank' – **Վ ա ն ք Մեծ** Հայքի Սյունիք աշխ-ի Սոթք գավ-ի Վասակաչեն ավանում: 20-րդ դ սկզբներին ավերակ էր: Կառուցել է տվել Ղուկաս վարդապետը 1276 թ: Սկզբնական անունը պետք է եղած լինի Ս Բեթղեհեմի վանք:

ԲԻՍՏԻ Ս ՆՇԱՆ, **Бистя Св Ншан**, Bisti St Nšan, **Բուստա վանք**, **Բուստի վանք**, **Բուստո վանք**, **Բուստու վանք**, **Գողթան Բուստա**, **Կարմիրակն**, **Կարմիր վանք**, **Կոպատափ Ս Նշան** – **Վ ա ն ք (անապատ, մենաստան)** ներկայիս Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Օրդուբադի շրջ-ի Բիստ (Բուստ) գ-ի մոտ, նրանից 1,5–2 կմ հս: Նախկինում մտնում էր Մեծ Հայքի Վասպուրական աշխ-ի Գողթն գավ-ի մեջ:

Վանքի համալիրը տեղադրված է Գիլան գետի աջ կողմում, Բստաձորի բարձրագագաթ լ-ներից ցած իջնող ընդարձակ դարավանդի վրա: Փոքրիկ, պարսպապատ շինություն է՝ միաբանների խցերով, որոնք 20-րդ դ սկզբներին ավերված էին, իսկ եկեղեցին այժմ էլ կանգուն է ու գրեթե անվթար: Այն երկու մույթերի

հորինվածքով եռանավ բազիլիկ է, ունի հնգանիստ արսիդ՝ հր ճակատին կցված կամարակապ գավիթով, որի առջևում գերեզմանոց է եղել: Վանքի համալիրը չրջապատված է եղել քառանկյունի պարսպաշարով, չուրջը վանքի այգիներն ու բանջարանոցներն էին: Ըստ ավանդություն՝ հիմնադրվել է 5-րդ դ: Առաջին անգամ Ս Նշան անունով հիշատակված է 1336 թ այստեղ Թումա Արճիչեցու ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում: Եկեղեցին և մյուս շինությունները կառուցված են կարմրավուն սրբատաշ տուֆից ու բազալտից, որի համար անվանված է նաև Կարմիր վանք: 1668 թ վանքը վերանորոգել է տվել Պետրոս եպիսկոպոսը: Վերջին անգամ վերանորոգվել է 19-րդ դ վերջերին: Վանքի Կոպատափ կոչված գրչատան անունով կոչվել է նաև Կոպատափի անապատ: 14–17-րդ դդ եղել է հայ գրչության նշանավոր կենտրոն: Որոշ ժամանակ այստեղ է գործել նշանավոր գիտնական Գրիգոր Տաթևացին և գրել իր հայտնի «Քարոզգիրք»-ը (1407 թ), որի մեջ վանքն անվանված է սքանչելագործ Ս Նշան, Կարմիրակն: Վանքի երախտավորներից հայտնի են Մկրտիչ Ծաղկոզը և Հովհան Որոտնեցու ու Գրիգոր Տաթևացու աշակերտ Հակոբ Բիստեցի գրիչը: Բ Ս Ն հիշատակում և գովաբանում են պատմիչ Ջաբարիա Ագուլեցին (17-րդ դ) և պատմիչ, կաթողիկոս Աբրահամ Կրետացին (18-րդ դ):

ԲԼՐՈ ՎԱՆՔ, **Блро ванк'**, Blro vank', **Բլրցի**, **Բլրցի անապատ** – **Վ ա ն ք (անապատ)** Կիլիկիայում, տեղադրությունը՝ անորոշ: Հիշատակված է 1324 թ մի ժամանակագրության հիշատակարանում Բլրցի ձևով, որը Ղ. Ինճիճյանը նույնացրել է 1342 թ Սսի եկեղեցական ժողովի առնչությամբ հիշատակված Բլրո վանքին:

ԲԼՐՑԻ, **Блрця**, Blrc'i – **Վ ա ն ք (անապատ)** Կիլիկիայում, **տ Բլրո վանք**:

ԲԼՐՑԻ ԱՆԱՊԱՏ, **Блрця апапат**, Blrc'i anapat – **Վ ա ն ք (անապատ)** Կիլիկիայում, **տ Բլրո վանք**:

ԲԼՈՒՐ, **Блур**, Blur – **Հ ն ա - վ ա յ ը - ու խ տ ա վ ա յ ը Արմ** Հայաստանում, Էրզրումի նահ-ում, Բայազետի գավ-ի Ալաչկերտի գվոկ-

ում, Եխնիթափա (պատմական Բլուր) գ-ի արմ կողմում: Տարածքում կային փրատակների մնացորդներ և գերեզմաններ:

ԲԼՈՒՐԻ Ս ԵՂԻԱ, **Блуря Св Ер'яа**, Bluri St Eγia – **Վանք Արմ** Հայաստանում, Էրզրումի նահ-ում, Բաբերդ ք-ից մոտ 30 կմ արմ գտնվող Բլուր գ-ի մոտ: 20-րդ դ սկզբներից ավերված ու լքված էր:

ԲՂԴԵ, **Бг'де**, Bγde – **Վ ա ն ք** Երևանի նահ-ի Նոր Բայազետի գավ-ում:

ԲՂԵՆ, **Бг'ен**, Bγen – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում, **տ Բղեն Նորավանք**:

ԲՂԵՆՈ ՆՈՐԱՎԱՆՔ, **Бг'ено Нораванк'**, Bγeno Noravank', **Բղեն**, **Դժոխաձորի վանք**, **Ջհաննամ Դերեսու վանք** – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում, Գորիս ք-ից 10–12 կմ հր, Որոտան գետի աջ կողմում, բարձրադիր, անտառապատ վայրում, Բարձրավան (Երիցաթումբ) գ-ից մոտ 4 կմ հեռավորությամբ: Հնում մտնում էր Մեծ Հայքի Սյունիք աշխ-ի տարածքի մեջ: Նոր կիրճով շրջափակված լինելու համար այդ վայրը ժողովուրդը անվանում է Դժոխաձոր, իսկ վանքը՝ Դժոխաձորի վանք: Ստեփանոս Օրբելյանի (13-րդ դ) վկայությամբ՝ վանքի համալիրը կառուցվել է երկու հերթով: 936 թ Ստեփանոս քահանայի նախաձեռնությամբ կառուցվել են եկեղեցին, սրահը, գավիթն ու ուրկանոցը (հիվանդանոցը) և բոլորն էլ սպիտակավուն կրաքարից: 1062 թ Բաղքի Գրիգոր 1-ին թագավորի հանձնարարությամբ Գրիգոր և Հովհաննես կրոնավորները նոր կառուցումներով ավարտել են վանքի շինարարությունը: Պահպանվել է վանքի եկեղեցին, որը հիմնովին վերակառուցվել է 1957–1962 թթ: Եկեղեցին կառուցված է բազալտից, ունի կամարներ: Տարածքում նշմարվում են պարսպի և օժանդակ կառույցների հետքերը: Շքամուտքը կամարակապ է՝ քանդակազարդ, պատերին կան արձանադրություններ: Պարսպի պատերը չարված են կրաշաղախով և ունեն 2 մ հաստություն: Մասնագետները Բ Ն համարում են Աղթամարից հետո Հայաստանի եզակի հուշարձաններից մեկը: Վանքը հայտնի է որպես հայ գրչության

կենտրոն, գրիչներից առանձին համ-
բավ է ունեցել Հովհաննեսը, որի ընդ-
օրինակած և նկարազարդած «էջ-
միածնի Ավետարանը» պահվում է
Երևանում՝ Մեսրոպ Մաշտոցի ան-
վան Մատենադարանում:

ԲՅՈՒԶԱՆ ԴԱՎԱՆՔ, Бюзанда-
ванк*, Byuzandavank' – **Վ ա ն ք**
Արմ Հայաստանում, **Նարբերդի**
նահ-ի Դերսիմի գավ-ում, տ Բոզա-
վանք:

ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ՎԱՆՔ, Бюра-
кани ванк*, Byurakani vank' –
ՂԱԶԱՆՁԵՑՈՑ Ս ԱՄԵՆԱՓԸՐԿԻՉ, Г*азанцегоц Св Аменап*ркич, Gazanč'ec'oc' St Amenap'rkic' – **Ե կ ե ղ ե ց ի** Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշի ք-ում: Կառուցվել է 1868–1887 թթ Նախիջևանի Ղազանչի (Շահկերտ, այժմ՝ ներկայիս Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Զուլֆայի

չըջ-ում) գ-ից այստեղ վերաբնակված հայերի միջոցներով: Շինարարությունն համար օգտագործված է տեղական գորշ քարատեսակ, ունի խաչաձև հատակագիծ, հոյակապ գմբեթ: Եռահարկ զանգակատունը կառուցել է Ս. Խանդամիրյանը: Այս եկեղեցին նոր ժամանակների հոյակապ կոթողներից մեկն է, որը նույնպես բազմիցս ենթարկվել է աղբրեջանցի կոչվող խավարածոների հարուցած ավերումներին: 1980-ական թթ երևանցի հմուտ քարագործ վարպետ Վոլոդյա Բարսյանը, անձնական նախաձեռնությամբ, սկսել էր այս հուշարձանի վերանորոգումը, որն ավարտվեց ք-ի ազատագրումից հետո (1992 թ.):

ՂԱԶԱՆԶԵՑՎՈՅ ԵԿԵՂԵՑԻ, Գ*азанчецово екег*еци, Gazanč'ec'oc' ekeγec'i, **Ղազանչոց եկեղեցի** – **Ե կ ե ղ ե ց** ի Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Շուշի ք-ում, **տ Ղազանչեցոց Ս Ամենավրկիչ:**

ՂԱԶԱՆԶՈՅ ԵԿԵՂԵՑԻ, Գ*азанчоц екег*еци, Gazanč'oc' ekeγec'i – **Ե կ ե ղ ե ց** ի Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Շուշի ք-ում, **տ Ղազանչեցվոց եկեղեցի:**

Ս ՂԱԶԱՐ, Св Գ*азар, St Gazar – **Ե կ ե ղ ե ց** ի Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Մուշի գավ-ի Հունան գ-ում: Ավերված էր: Գ-ն ուներ նաև մեկ կանգուն եկեղեցի: Մինչև 1915 թ գ-ում գործում էր վարժարան:

Ս ՂԱԶԱՐ, Св Գ*азар, St Gazar – **Ե կ ե ղ ե ց** ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սառնաղբյուր գ-ի մոտ, դրանից 5–6 կմ արլ, բարձունքի վրա: Կառուցվել է 5–6-րդ դդ:

Ս ՂԱԶԱՐ, Св Գ*азар, St Gazar – **Ե կ ե ղ ե ց** ի պատմական Փոքր Հայքում, Սեբաստիայի նահ-ում, Շապին Գարահիսար գավ-ի Թանտերճր գ-ում:

ՂԱԶԱՐԱՎԱՆՔ, Գ*азараванк*, Gazaravank' – **Վ ա ն ք** (°) Հայաստանում: Ճշգրիտ տեղագրությունը՝ անորոշ: Այստեղ 1339 թ Բարթուղիմոս Առաքյալի վանքի միաբան Տիրացուն ընդօրինակել է Ավետարան, որը Լենկթեմուրի հրոսակների ձեռքից փրկագնով ազատվել է 1388 թ:

Ս ՂԱԶԱՐ ՎԱՆՔ, Св Գ*азар ванк*, St Gazar vank' – **Վ ա ն ք** Մեծ

Հայքի Տուրուբերան աշխ-ի Տարոն գավ-ում, Մուշ ք-ի մոտակայքում, **տ Ս Առաքելոց վանք:**

ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔ, Св Գ*азару ванк*, St Gazaru vank' – **Ե կ ե ղ ե ց** ի Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ղազարավան գ-ում: Կրում է 5-րդ դ հայ նշանավոր պատմիչ Ղազար Փարպեցու անունը, որի գերեզմանը գտնվելիս է եղել եկեղեցու ներսում:

Ս ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔ, Св Գ*азару ванк*, St Gazaru vank' – **Վ ա ն ք** Մեծ Հայքի Տուրուբերան աշխ-ի Տարոն գավ-ում, Մուշ ք-ի մոտակայքում, **տ Ս Առաքելոց վանք:**

ՂԱԼԱԶՈՒՂԻ ՎԱՆՔ, Գ*аладжухи ванк*, Galajuxi vank', **Ոսլաձուխի վանք**, **Ղալաջուղի վանք** – **Վ ա ն ք** Կիրիկիայում, Հալեպի նահ-ում, Մարաշի գավ-ի Զեյթունի գվոկ-ի Ղալաջուխ գ-ի մոտ:

ՂԱԼԱԶՈՒՆԻ ՎԱՆՔ, Գ*аладжуг*и ванк*, st Galajuxi vank – **Վ ա ն ք** Կիրիկիայում, Հալեպի նահ-ում, Զեյթունի գվոկ-ի Ղալաջուխ գ-ի մոտ, **տ Ղալաջուխի վանք:**

ՂԱՅԱԲՈՒՅ ԵՂՅԵ, Գ*аѣабудц ег*ѣе, Gayabuc' eγc'e – **Գ յ ու ղ ա տ ե ղ ի**, **մ ա տ ու ռ** (եկեղեցի) Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Հաղբութի չըջ-ի Խճաբերդ գ-ի մոտ, դրանից 3–4 կմ հսարմ, եղջուն ձոր վայրում: Մատուռը գտնվում է ավերված վիճակում:

ՂԱՅՄԱՂԱՈՒ, Գ*аѣмар*лу, Gaymajlu – **Վ ա ն ք**, **ու խ տ ա տ ե ղ ի** Տրապիզոնի նահ-ում, Տրապիզոն ք-ի մոտ, **տ Կայմակլի:**

ՂԱՅՄԱՂԱՈՒ ՎԱՆՔ, Գ*аѣмар*лу ванк*, Gaymajlu vank' – **Ու խ տ ա տ ե ղ ի** Տրապիզոնի նահ-ում, Տրապիզոն ք-ից 8–10 կմ վրա գտնվող Գայմաբլը բլուրի վրա, **տ Կայմակլի:**

ՂԱՆԼԻՃՈՒ ՄԱՐՄԱՇԵՆ ՎԱՆՔ, Գ*анлич*у Мармашен ванк*, Ganlič'u Marmašen vank' – **Վ ա ն ք** (մենաստան) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում, **տ Մարմաշեն:**

ՂԱՆԼԻՋՈՒ ՎԱՆՔ, Գ*анлиджу ванк*, Ganlijū vank' – **Վ ա ն ք** (մենաստան) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում, **տ Մարմաշեն:**

ՂԱՌՂԱ, Գ*ар*г*а, Գar'γa –

Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում, **տ Ադռավանք:**

ՂԱՌՂԱՌՎԱՆՔ, Գ*ар*г*ар*а-ванк*, Գar'γar'avank' – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում, Եղվարդ ք-ի մոտ, **տ Ադռավանք:**

ՂԱՌՂԱՎԱՆՔ, Գ*ар*г*аванк*, Գar'γavank' – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում, Եղվարդ ք-ի մոտ, **տ Ադռավանք:**

ՂԱՍՈՒՆ, Գ*асун, Gasun – **Վ ա ն ք** (°) Հայաստանում: Հավանաբար Դիարբեքրի նահ-ի Սլիվանի գվոկ-ում: Հիշատակում է Վ. Շարեկերը:

ՂԱՐԱԴԵՐԱ ՎԱՆՔ, Գ*арадера ванк*, Garadera vank' – **Վ ա ն ք Արմ** Հայաստանում, Վանի նահ-ում, Շատախի գվոկ-ի Ղարադեր գ-ում, **տ Խոսրովա Ս Նշան վանք:**

ՂԱՐԱԹԱՇ, Գ*араташ, Գarat'aš, **Կարադաշ** – **Վ ա ն ք** և **գ յ ու ղ** Հայաստանում (°): Հիշատակում է Գրիգոր Գարանաղցին (17-րդ դ) առանց տեղը ճշտելու: Ըստ պատմիչի՝ զարաթաշցի ոմն Ղազար, որ «ատենախոս էր եւ ահարկու եւ չինարար» պարսպապատել է Ղ վանքը:

ՂԱՐԱՄՈՒՐԱԴԻ ԱՆԱՊԱՏՆԵՐ, Գ*арамурати анапатнер, Garamuradi anapatner – **Վ ա ն ք** (անապատ) ներկայիս Ադրբեջանի Հանրապետության Գետաբեկի չըջ-ում, **տ Խամշի վանք:**

ՂԱՐԱՄՈՒՐԱԴԻ ՎԱՆՔ, Գ*арамурати ванк*, Garamuradi vank' – **Վ ա ն ք** (անապատ) ներկայիս Ադրբեջանի Հանրապետության Գետաբեկի չըջ-ում, **տ Խամշի վանք:**

ՂԱՐԱՄՈՒՐԱՏԻ ԱՆԱՊԱՏ, Գ*арамурати анапат, Garamurati anapat – **Վ ա ն ք** (անապատ) ներկայիս Ադրբեջանի Հանրապետության Գետաբեկի չըջ-ում, **տ Խամշի վանք:**

ՂԱՐԱՄՈՒՐԱՏԻ ՎԱՆՔ, Գ*арамурати ванк*, Garamurati vank' – **Վ ա ն ք** (անապատ) ներկայիս Ադրբեջանի Հանրապետության Գետաբեկի չըջ-ում, **տ Խամշի վանք:**

ՂԱՐԱՎԱՆՔ, Գ*араванк*, Գaravank' – **Վ ա ն ք** (եկեղեցի) Երևանի նահ-ի Էջմիածնի գավ-ում, Թալինի տեղամասի Ղարավանք գ-ատեղիի տարածքում, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի

Դաշտադեմ գ-ից 3-4 կմ հր: Թ. Թո-
րամանյանի նկարագրությունը՝ դեռե-
լու 20-րդ դ սկզբներին գտնվում էր
կիսավեր վիճակում: Միջակ մեծու-
թյան, բայց գեղեցիկ շինություն էր
կառուցված 7-րդ դ, սև քարերով:
Վրայի հայերեն արձանագրությունը
ունենր նվիրատուական բովանդակու-
թյուն: Շուրջը կային բանդակազարդ
և վիճազեր ունեցող գերեզմաններ:

ՂԱՐԱՎԱՆՔ, Գ*аравањк*, Gara-
vank' - Վ ա ն ք Հայաստանի Հան-
րապետության Վայոց Ձորի մար-
զում, Վերնաչեն գ-ի մոտակայքում:
Սև քարով կառուցված յինելու պատ-
ճառով այլազգիները այդպես են
անվանել Թանահատի վանքը:

ՂԱՐԻԲՆԱՍ, Գ*арѣбахъ, Garib-
xax' - Վ ա ն ք Լեոնային Ղարա-
բաղի Հանրապետության Մարդա-
կերտի շրջ-ի Կուսապատ գ-ի մոտ,
դրանից հս:

ՂԱՐԻԲ ՕՋԱՆ, Գ*арѣ Оджан,
Garib Ojax - Հ ու չ ա ր ձ ա ն (եկե-
ղեցի) Լեոնային Ղարաբաղի Հան-
րապետության Ասկերանի շրջ-ի
Դահրազ գ-ում, Կարմիր Ավետարան
եկեղեցուց հս: Բազիլիկ շինություն
է՝ հավանաբար կառուցված 17-19-
րդ դդ:

ՂԱՐՂԱ, Գ*аргъа, Gargya -
Վ ա ն ք Հայաստանի Հանրապե-
տության Կոտայքի մարզում, տ Ագ-
ռավավանք:

ՂԵՎՈՆԴ, Գ*евондъ, Gevond -
Ա ն ա պ ա տ , վ ա ն ք Լեոնային
Ղարաբաղի Հանրապետությունում,
տ Ղևոնդյանց անապատ:

Ս ՂԵՎՈՆԴ, Св Գ*евондъ, St Ge-
vond - Ա ն ա պ ա տ , վ ա ն ք
Լեոնային Ղարաբաղի Հանրապե-
տությունում, տ Ղևոնդյանց անա-
պատ:

ՂԵՎՈՆԴ ԱՆԱՊԱՏ, Գ*евондъ
анапат, Gevond anapat - Ա ն ա
պ ա տ , վ ա ն ք Լեոնային Ղա-
րաբաղի Հանրապետությունում, տ
Ղևոնդյանց անապատ:

ՂԵՎՈՆԴԱՆՅ ԱՆԱՊԱՏ, Գ*евондъ
данц анапат, Gevondanc' anapat -
Ա ն ա պ ա տ , վ ա ն ք Լեոնային
Ղարաբաղի Հանրապետությունում,
տ Ղևոնդյանց անապատ:

Ս ՂԵՎՈՆԴԱՆՅ ԱՆԱՊԱՏ, Св
Գ*евондъданц анапат, St Gevondanc'
anapat - Ա ն ա պ ա տ , վ ա ն ք
Լեոնային Ղարաբաղի Հանրապե-
տությունում, տ Ղևոնդյանց անա-
պատ:

ՂԵՎՈՆԴԱՅ ԱՆԱՊԱՏ, Գ*евондъ
дац анапат, Gevondac' anapat -
Ե կ ե դ ե ց ի Լեոնային Ղարաբա-
ղի Հանրապետության Մարտունու
շրջ-ի Սարգսաչեն գ-ում: Կառուցվել
է 13-17-րդ դդ: Գ-ի մյուս եկեղեցին
կոչվում է Ս Աստվածածին:

ՂԵՎՈՆԴԱՅ ԱՆԱՊԱՏ, Գ*евондъ
дац анапат, Gevondac' anapat -
Ա ն ա պ ա տ , վ ա ն ք Լեոնա-
յին Ղարաբաղի Հանրապետության
Ասկերանի շրջ-ում, տ Ղևոնդյանց
անապատ:

Ս ՂԵՎՈՆԴԻԿ, Св Գ*евондикъ, St
Gevondik - Ա ն ա պ ա տ , վ ա ն ք
Լեոնային Ղարաբաղի Հանրապե-
տությունում, տ Ղևոնդյանց անա-
պատ:

ՂԵՎՈՆԴԻԿ ԱՆԱՊԱՏ, Գ*евондикъ
анапат, Gevondik anapat - Ա ն ա
պ ա տ , վ ա ն ք Լեոնա-
յին Ղարաբաղի Հանրապետությու-
նում, տ Ղևոնդյանց անապատ:

ՂԵՎՈՆԴՅԱՆՅ ԱՆԱՊԱՏ, Գ*евондъянц
анапат, Gevondyanc' ana-
pat, Ղևոնդ, Ղևոնդ անապատ, Ս
Ղևոնդաց անապատ, Ղևոնդանց
անապատ, Ղևոնդիկ անապատ, Ս
Ղևոնդիկ, Ս Ղևոնդյանց անապատ,
Ղևոնդյանց վանք, Ղևոնդիկ, Սրբոց
Ղևոնդյանց վանք - Ա ն ա պ ա տ ,
վ ա ն ք Լեոնային Ղարաբաղի Հան-
րապետության Ասկերանի շրջ-ի Ա-

վետարանոց Մոշխմհատ և Մար-
տունու շրջ-ի Թաղավարդ գ-երի
մոտ, Ղևոնդ լ-ան վրա: Հնում մրտ-
նում էր Մեծ Հայքի Արցախ աշխ-ի
Մյուս Հաբանդ (ավելի ուշ՝ Վարան-
դա) գավ-ի մեջ: Պահպանվել են
անմշակ քարերով կառուցված մա-
տուռը՝ կից գավթով, ավերված սնն-
յակներն ու գերեզմանոցը և շրջա-
պարսպի փլատակները: Մատուռի
դռան վրա կան 1700, իսկ գավթի
պատին 1778 Թ-ի հայերեն արձա-
նագրություններ: Մինչև 19-րդ դ-ի
վերջը գործում էր, ուներ վարելա-
հողեր, մի փոքրիկ անտառ և հայ-
կական վարժարան: Ըստ ավան-
դություն՝ կառուցվել է Ղևոնդ Երեցի
(5-րդ դ) մատուքների վրա:

ՂԵՎՈՆԴՅԱՆՅ ԱՆԱՊԱՏ, Գ*евондъянц
анапат, Gevondyanc' ana-
pat - Ե կ ե դ ե ց ի Ղարաբաղում,
Վարանդայի գավ-ի Մաղաթաչեն
(Ալամանց Գոմեր) գ-ում:

ՂԵՎՈՆԴՅԱՆՅ ՎԱՆՔ, Գ*евондъянц
ванкъ, Gevondyanc' vank' -

Ա ն ա պ ա տ , վ ա ն ք Լեոնային
Ղարաբաղի Հանրապետությունում,
տ Ղևոնդյանց անապատ:

ՂԶԼՎԱՆՔ, Գ*зылванкъ, Gzel-
vank', Ղզլվանք - Մ ե ն ա ս -
տ ա ն , ե կ ե դ ե ց ի (վա՞նք) Հա-
յաստանի Հանրապետության Սյու-
նիքի մարզում, Տաթևգէս ավանի
մոտ, նախկին Շահվերդիլար գ-ի
ավերակների մոտակայքում: Սլալ
ընթերցմամբ հիշատակված է Ղը-
զլվանի, Ղզլվանի տառադարձու-
թյամբ:

ՂԶԼՎԱՆՔ, Գ*зыл ванкъ, Gzel
vank' - Վ ա ն ք Հայաստանի Հան-
րապետության Սյունիքի մարզում,
Արևիս գ-ի մոտ: Այլազգիները
թարգմանաբար այսպես են անվա-
նել Կարմիր վանքը, որը կոչվում է
Թանահատ (տ):

ՂԶԼՎԱՆՔ, Գ*зылванкъ, Gzel-
vank' - Վ ա ն ք (մենաստան,
ուխտ) Հայաստանի Հանրապետու-
թյան Գեղարքունիքի մարզում, Մա-
քենիս գ-ում, տ Մաքենյաց վանք:

ՂԶԼՎԱՆՔ, Գ*зылванкъ, Gzel-
vank' - Վ ա ն ք ներկայիս Նախի-
ջևանի ինքնավար Հանրապետու-
թյան Նախիջևան ք-ի մոտ: Թուրքե-
րը թարգմանաբար այսպես են ան-
վանում Կարմիր վանքը (տ):

ՂԶԼՎՔԻԼԻՍԱ, Գ*зылак'илиса,
Gzelk'ilisa - Ե կ ե դ ե ց ի , վ ա ն ք
ներկայիս Ադրբեջանի Հանրապե-
տության Շամխորի շրջ-ում: Թուր-
քերը թարգմանաբար այսպես են
անվանում Կարմիր եկեղեցին (տ):

ՂԶԼՎՔԻԼԻՍԱ, Գ*зылак'илиса,
Gzelk'ilisa - Վ ա ն ք (եկեղեցի) Արմ
Հայաստանում, էրզրումի նահ-ում,
Բայազետի գավ-ի Կարաքիլիսայի
գվդկ-ի տարածքում, Ղզրքիլիսա լ-
ան գագաթին: Բնմի տակից ժայթ-
քում էր հորդառատ աղբյուր: Սրբ-
բավայր էր հայերից բացի, նաև
քրդերի համար:

ՂԶԼՎՔԻԼԻՍԱ, Գ*зылак'илиса,
Gzelk'ilisa - Վ ա ն ք (մենաստան,
ուխտ) Հայաստանի Հանրապետու-
թյան Գեղարքունիքի մարզում, Մա-
քենիս գ-ում, տ Մաքենյաց վանք:

ՂԶԼՎԱՆՔ, Գ*злванкъ, Gzlvank' -
Մ ե ն ա ս տ ա ն , ե կ ե դ ե ց ի
(վա՞նք) Հայաստանի Հանրապե-
տության Սյունիքի մարզում, Տաթև-
գէս ավանի մոտ, տ Ղզրվանք:

ՂԶԼՎԱՆՔ, Գ*злванкъ, Gzlvank' -
Վ ա ն ք (մենաստան, ուխտ) Հա-

յաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում, Մաքենիս գում, **տ Մաքենյաց վանք:**

ՂԶՐՈ, Գ՜շրօ, Գշրօ – **Ու խ տ ա – տ ե ղ ի Արմ** Հայաստանի Բայազետ քում, **տ Ղզրո և Գառնիկ աղբյուր:**

ՂԶՐՈ ԵՎ ԳԱՌՆԻԿ ԱՂԲՅՈՒՐ, Գ՜շրօ ԵՎ Գար՜նիկ ար՜ծյօր, Գշրօ ԵՎ Գար՜նիկ արԿյուր, **Ղզրո – Ու խ տ ա – տ ե ղ ի Արմ** Հայաստանում, էրզրումի նահ-ի Բայազետ քում:

ՂԶՂԼՎԱՆՔ, Գ՜ԿՅԵԼՎԱՆԿ՜, Գօշօլվանկ՜ – **Վ ա ն ք** ներկայիս Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Նախիջևան ք-ի մոտ: Թուրքերը թարգմանաբար այսպես են անվանում **Կարմիր վանքը:**

ՂԶՂԼՔԻԼԻՍԱ, Գ՜ԿՅԵԼԿ՜ԿԼԻՍԱ, Գօշօլկ՜իլիսա – **Վ ա ն ք (մենաստան, ուխտ)** Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում, Մաքենիս գում, **տ Մաքենյաց վանք:**

ՂԶՂԼՔԻԼԻՍԵ, Գ՜ԿՅԵԼԿ՜ԿԼԻՍԵ, Գօշօլկ՜իլիսե – **Վ ա ն ք** Կարսի Մարզում, Շորագյալի տեղամասի Կարմիր վանք գում: Թուրքերը թարգմանաբար այդպես են կոչում **Կարմիր վանքը (տ):**

ՂԸՌԸՆԻ ՎԱՆՔ, Գ՜ԿՅՐ՜ԿՅԻ ՎԱՆԿ՜, Գօ՜ք՜օքի վանկ՜ – **Վ ա ն ք, ե կ ե ղ ե ց ի** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարակապ գ-ի մոտ, **տ Կարմիր վանք:**

ՂԸՌԸՆՁՈՒ ՎԱՆՔ, Գ՜ԿՅՐ՜ԿՅԻ ՎԱՆԿ՜, Գօ՜ք՜օքի վանկ՜ – **Վ ա ն ք** Միջնադարյան Հայաստանում: Հիշատակված է ձեռագրական մի հիշատակարանում՝ վերանորոգման մասին եղած վկայության մեջ: Տեղադրությունը՝ անորոշ: Հմմտ **Ղըռընկեվանք:**

ՂԸՌԸՆԿԵՎԱՆՔ, Գ՜ԿՅՐ՜ԿՅԻՆԿԵՎԱՆԿ՜, Գօ՜ք՜օքեվանկ՜ – **Վ ա ն ք** Միջնադարյան Հայաստանում: Հիշատակված է Գրիգոր Տաթևացու (14-րդ դ) «Քարոզգրքի» 1624 թ օրինակած ձեռագրի հիշատակարանում: Ըստ այդ վկայության՝ 1624 թ վանքի գավազանակիրն է դարձել ոմն մեղապարտ Հովհաննեսը: Տեղադրությունն՝ անորոշ: Հմմտ **Ղըռընկու վանք:**

ՂԸՐԸՆ, Գ՜ԿՅՐ՜ԿՅԻ, Գօ՜ք՜օք – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարակապ գ-ի մոտ, **տ Կարմիր վանք:**

ՂԱՁՈՐԻ Ս ԳՐԻԳՈՐԻ ՎԱՆՔ, Գ՜ԼԱԶՅՈՐԻ ՍՎ ԳՐԻԳՈՐԻ ՎԱՆԿ՜, Գլաձորի Սվ Գրիգորի վանկ՜, Գլաձորի Սվ Գրիգորի վանկ՜

St Grigori vank՜ – **Վ ա ն ք** Մեծ Հայքի Բարձր Հայք աշխ-ի Գերջան գավում, **տ Սլաձորի վանք:**

ՂՈԲԱ, Գ՜ՕԲԱ, Գօբա – **Ու խ – տ ա տ ե ղ ի** Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջ-ի Փիրջամալ գ-ի մոտ: Ունի 2 մատուռ, որոնց մեջ, ըստ ավանդության, ամփոփված էին հավատի համար նահատակված Փիր և Ջամալ եղբայրների աճյունները:

ՂՈՂԻՃԱՅԻ ՎԱՆՔ, Գ՜ՕՂԻՃԱՅԻ ՎԱՆԿ՜, Գօ՜ղիճայի վանկ՜ – **Վ ա ն ք** Մեծ Հայքի Այրարատ աշխ-ի Շիրակ գավում, Ղողիճա գ-ի անունով, նոր ժամանակներում նաև այդպես է անվանվել **Բազնայր վանքը (տ):**

ՂՈԹՈՒՐՎԱՆՔ, Գ՜ՕՏ՜ՍՐՎԱՆԿ՜, Գօ՜տ՜սրվանկ՜ – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գյաղիկվանք գում, **տ Գյաղիկվանք:**

ՂՈՆԴԻԿ, Գ՜ՕՆԴԻԿ, Գօնդիկ – **Ա ն ա պ ա տ , վ ա ն ք** Լեոնային Ղարաբաղի Հանրապետությունում, **տ Ղևոնդյանց անապատ:**

ՂՈՆԴԻԿ, Գ՜ՕՆԴԻԿ, Գօնդիկ – **Վ ա ն ք** Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջ-ի Ավետարանոց գում, **տ Սրբոց Ղևոնդյանց:**

ՂՈՇԱՎԱՆՔ, Գ՜ՕՏ՜ԱՎԱՆԿ՜, Գօ՜ժավանկ՜ – **Վ ա ն ք** Կարսի մարզի Կարսի օկրուգում, Ախուրյան գետի մջ կրգմում, **տ Հոռոմոս:**

ՂՈՇԱՎԱՆՔ, Գ՜ՕՏ՜ԱՎԱՆԿ՜, Գօ՜ժավանկ՜ – **Վ ա ն ք** Կարսի մարզում, Շորագյալի տեղամասի Կարմիրվանք գում, **տ Կարմիր վանք:**

ՂՈՇԱՎԱՆՔ, Գ՜ՕՏ՜ԱՎԱՆԿ՜, Գօ՜ժավանկ՜ – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կոչ գում, **տ Կոչավանք:**

ՂՈՇԱՎԱՆՔ, Գ՜ՕՏ՜ԱՎԱՆԿ՜, Գօ՜ժավանկ՜ – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս գ-ի մոտ, **տ Ցախացքար:**

ՂՈՇԱՎԱՆՔ, Գ՜ՕՏ՜ԱՎԱՆԿ՜, Գօ՜ժավանկ՜ – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում, Գոչ գում, **տ Գոչավանք:**

ՂՈՇԱՎԱՆՔ, Գ՜ՕՏ՜ԱՎԱՆԿ՜, Գօ՜ժավանկ՜ – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Հերհեր գում, **տ Ս Սիոն:**

ՂՌԸՆԻ ՎԱՆՔ, Գ՜ՐԵՂԻ ՎԱՆԿ՜, Գրօքի վանկ՜ – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Սարակապ գ-ի մոտ, **տ Կարմիր վանք:**

ՂՈՒԼԱ ՎԱՆՔ, Գ՜ՍԼԱ ՎԱՆԿ՜, Գլա վանկ՜ – **Վ ա ն ք Արմ** Հայաստանում, Սարբերդի նահ-ի Սուլի գում, **տ Ս Գևորգ:**

ՂՈՒԼԵՒ Ս ԳԵՎՈՐԳ, Գ՜ՍԼԵՒ ՍՎ ԳԵՎՈՐԳ, Գլեի Ստ Գեվորգ – **Վ ա ն ք Արմ** Հայաստանում, Սարբերդի նահ-ի Սուլի գում, **տ Ս Գևորգ:**

ՂՈՒԼԵ ՎԱՆՔ, Գ՜ՍԼԵ ՎԱՆԿ՜, Գլե վանկ՜ – **Վ ա ն ք Արմ** Հայաստանում, Սարբերդի նահ-ի Սուլի գում, **տ Ս Գևորգ:**

Ս ՂՈՒԿԱՍԻ ՎԱՆՔ, ՍՎ Գ՜ՍԿԱՍԻ ՎԱՆԿ՜, Ստ Գլուկասի վանկ՜ – **Վ ա ն ք** Տրապիզոնի նահ-ի Կոհանա բնակավայրում:

ՂՈՒՌՈՒԲԱՇ, Գ՜ՍՐ՜ՅԲԱՇ, Գլուբաժ – **Վ ա ն ք (մենաստան) Արմ** Հայաստանում, վանի նահ-ում, վանք-ի մոտ, **տ Ս Սաչ:**

ՂՈՒՌՈՒԲԱՇԱ ՎԱՆՔ, Գ՜ՍՐ՜ՅԲԱՇԱ ՎԱՆԿ՜, Գլուբաժա վանկ՜ – **Վ ա ն ք (մենաստան) Արմ** Հայաստանում, վանի նահ-ում, վանք-ի մոտ, **տ Ս Սաչ:**

ՂՈՒՌՈՒՊԱՇ, Գ՜ՍՐ՜ՅՍԱՇ, Գլուբաժ – **Վ ա ն ք (մենաստան) Արմ** Հայաստանում, վանի նահ-ում, վանք-ի մոտ, **տ Ս Սաչ:**

ՂՈՒՌՈՒՊԱՇԱ ՎԱՆՔ, Գ՜ՍՐ՜ՅՍԱՇԱ ՎԱՆԿ՜, Գլուբաժա վանկ՜ – **Վ ա ն ք (մենաստան) Արմ** Հայաստանում, վանի նահ-ում, վանք-ի մոտ, **տ Ս Սաչ:**

ՂՓՁԱՂ, Գ՜ՍՊ՜ՅԱՂ, Գրօ՜պ – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հառիճ գում, **տ Հառիճ:**



ՃԳՆԱՎՈՐ, Կ՜ԴՆԱՎՈՐ, ՇճՆԱՎՈՐ – **Մ ա տ ու ո** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում, Կարմրաչեն գ-ի մոտ:

ՃԳՆԱՎՈՐ, Կ՜ԴՆԱՎՈՐ, ՇճՆԱՎՈՐ, ԶԻԿՆԱՎՈՐ – **Վ ա ն ք** Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջ-ի Կուսապատ գ-ի մոտ, դրանից արմ:

ՃԳՆԱՎՈՐ, Կ՜ԴՆԱՎՈՐ, ՇճՆԱՎՈՐ – **Ու խ տ ա տ ե ղ ի Պարսկահայաստանում**, Ղարաբաղի գավում, Գղմար գվղ-ի Աղաղան գ-ի մոտ:

հիշատակությունը՝ ասորական դավանանքի հոգևոր հաստատություն էր, որտեղ գործել են նաև հայ վանականներ: 1250 թ այստեղ ընդօրինակվել է հայերեն Ավետարան, 1311-ին՝ Հայսմավուրը:

ՃՈՆՏ ՊՌՎԱԾԱՌԻ ՎԱՆՔ, Ч*оxt Пр*вац*аря ванк*, Чоxt Pr'vacar'i vank' - **Ու խ տ ա տ ե ղ ի** (վանք) Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջի Ջարդանաչեն գ-ի մոտ: Անվան ստուգաբանությունը պետք է հասկանալ՝ ջուխտ (=գույգ) + բարևածառ իմաստով: **Տ Բարևածառ:**

ՃՈՆ ԲԱՐՍԵՂ, Ч*он Барсеґ*, Чон Barseg - **Վ ա ն ք** Կարսի մարզում, Շորագյալի տեղամասի Կարմիրվանք գ-ում, **տ Կարմիր վանք:**

ՃՊԻՔ, Ч*пик*, Чрiк', ճըպիք - **Վ ա ն ք** Կիլիկիայում, Ադանայի նահ-ի Անտիոքի շրջ-ում: Հիշատակում է Սմբատ Սպարապետը (13-րդ դ) ճըպիք գրությունը:

ՃՐՊԱ ՎԱՆՔ, Ч*рпа ванк*, Чтра vank' - **Վ ա ն ք Արմ** Հայաստանում, Վանի նահ-ում, Հաքարիի գավ-ի Աղբակ գվղ-ի Օսի գ-ում, **տ Ս Նաչի վանք:**

ՃՈՒՆԱԹՈՒ ՎԱՆՔ, Ч*ухат*у ванк*, Чухат'u vank' - **Վ ա ն ք** Կիլիկիայում, **տ Ճոխաթու վանք:**

ՃՈՒՅՆԱ, Ч*уйна, Чуна - **Ու խ տ ա տ ե ղ ի** պատմական Փոքր Հայքում, Սեբաստիայի նահ-ում, Շապին Գարահիսար գավ-ի Թամզարա գք-ում:

Մ

ՄԱԳԻՆՅԱՑ ՎԱՆՔ, Маґиняц ванк*, Maginyac' vank' - **Վ ա ն ք** (մենաստան, ուխտ) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում, Մաքենիս գ-ում, **տ Մաքենյաց վանք:**

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՃԵՄԱՐԱՆ, Маґистроси чемаран, Magistrosi čemaran - **Ճ ե մ ա ր ա ն** (միջնադարյան համալսարան) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սանահին վանքում: Գտնվում է Ս Ամենափրկիչ և Ս Աստվածածին եկեղեցիների արանքում: Ութանկյուն սյուների վրա հենվում են ութ ոճավորված կամարներ, որոնք կազմում են մի երկարավուն սրահ: Շինություն մոտ կա մի եռանկյունաձև դամբարան, որտեղ թաղված են Աչոտ 3-րդ Ողորմած (953-977) և Դավիթ Անհողին (989-1048) թագավորները, իսկ մի փոքր հեռու Ջաքարյանների դամբարանն է, որտեղ հանգչում են Սարգիս և նրա որդի Ջաքարե Ջաքարյանները:

ՄԱԴԹԵՈՍԻ ԵՎ ՄԿՐՏՁԻ ՎԱՆՔ, Мадр*еоси ев Мкртчи ванк*, Madt'eosi ev Mkrtci' vank' - **Վ ա ն ք Մեծ** Հայքի Տուրուբերան աշխ-ի Տարոն գավ-ում, **տ Ս Կարապետ:**

ՄԱՋԵ ԿԱՄՈՒՐՋ, Мазе камурґ, Maze kamurj - **Ս ր բ ա տ ե ղ ի** (ավանդատեղի) Արմ Հայաստանում, Նարբերդի նահ-ում, Մալաթիա ք-ի մոտ Ինդերե լ-ան և նույնանուն գետակի մոտ: Ըստ ավանդության՝ այստեղ ճգնել է Գրիգոր Լուսավորիչը (3-4-րդ դդ):

ՄԱԹԵՔ, Mat*ex*, Mat'ek', **Մատթե** - **Մ ա տ ու ո** Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջ-ում, Կաղարծի և Միրուչեն գ-երի միջև գտնվող Մաթթե լ-ան վրա: Շրջակայքում պահպանվել են հայկական գերեզմաններ:

ՄԱԹԻԿ ԲԱԲԱ, Mat*ик баба, Mat'ik baba - **Ս ր բ ա գ ա ն կ ա ղ ն ի ծ ա ո** Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջ-ում, Ավդուռ գ-ում:

ՄԱԹՈՍԱՎԱՆՔ, Mat*осаванк*, Mat'osavank', **Պղնձահանաց Աստվածածին, Պղնձահանքի Ս Աստվածածին, Պղնձահանքի Ս Աստվածածնի վանք** - **Վ ա ն ք** (եկեղեցի) Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում, նախկին Շամախյան (Պողոսբիրիսա) գ-ում, որն այժմ մտնում է Դիլիջան ք-ի շրջագծի մեջ, Զուխտակ վանքի հր կողմում, կանաչապատ սարահարթի հր-արլ ծայրին: Համալիրի մեջ մտնում են 2 մատուռաձև շինություններ, մեկ գավիթ և Ս Աստվածածին եկեղեցին, որը կառուցել է ոմն Հորդանան 1247 թ: Եկեղեցին կառուցված է կես սրբատաշ, կես անձակ քարերով՝ մեկ կամարի վրա: Պատերի վրա կան քանդակազարդ խաչքարեր և վիմագրեր՝ հս պատի մոտ 2,5 մ × 1,20 մ չափի խաչարձան, որի արձանագրության համաձայն՝ եկեղեցին կառուցվել է (գուցե պետք է

հասկանալ՝ վերակառուցվել է) 1251 թ և կոչվել է Պղնձահանաց Աստվածածին: Այժմ գտնվում է կիսավեր վիճակում:

ՄԱԼԱԶԱԲԵՐԴԻ ՎԱՆՔ, Малазаберди ванк*, Malazaberdi vank' - **Վ ա ն ք** ներկայիս Աղբերջանի Հանրապետության Շամխորի շրջ-ի Չովղար գ-ի մոտ, **տ Մածնաբերդի վանք:**

ՄԱԼԱԶԱԲԵՐԴԻ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ, Малазаберди аменап*ркич, Malazaberdi amenap'rkic' - **Վ ա ն ք** ներկայիս Աղբերջանի Հանրապետության Շամխորի շրջ-ի Չովղար գ-ի մոտ, **տ Մածնաբերդի վանք:**

ՄԱԼԱԶՆԱԲԵՐԴԻ ՎԱՆՔ, Малазнаберди ванк*, Malaznaberdi vank' - **Վ ա ն ք** ներկայիս Աղբերջանի Հանրապետության Շամխորի շրջ-ի Չովղար գ-ի մոտ, **տ Մածնաբերդի վանք:**

ՄԱԼԵԶԿԵՐՈ ՎԱՆՔ, Малезкero ванк*, Malezkero vank', **Մալեզկերտո վանք, Մալեզկերո անապատ** - **Վ ա ն ք**, **ա ն ա պ ա տ** Հավանաբար Մեծ Հայքի կամ Ուտիք աշխ-ում: Ճգրիտ տեղադրությունը՝ անորոշ: Մատենադարանի թիվ 8453 ձեռագրի հիշատակարանում ասվում է՝ «Արդ գրեցաւ սուրբ տառս, որ կոչի Մաշտոց, ի թվականին հայոց ԶԺԳ (1464) ... ի հայրապետութեան տեան Աղուանից կաթողիկոսի և եպիսկոպոսութեան տեղվոյս տէր Գրիգորիսի և տէր Սարգսի ձեռամբ Անտոնի: Արդ գրեցաւ ի վանքս Մալեզկերոյ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս»: Ըստ հիշատակությունների՝ 15-րդ դ 50-80-ական թթ այստեղ ընդօրինակված ձեռագրերից են 1 Ավետարան, 1 Քարոզգիրք և ձաչոց: Հմմտ **Մածնաբերդի վանք:**

ՄԱԼԵԶԿԵՐՏՈ ՎԱՆՔ, Малезкертo ванк*, Malezkerto vank' - **Վ ա ն ք**, **ա ն ա պ ա տ** Հավանաբար Մեծ Հայքի Արցախ կամ Ուտիք աշխ-ում, **տ Մալեզկերո վանք:**

ՄԱԼԶԿԵՐՈ ԱՆԱՊԱՏ, Малызкero анапат, Malozkero anapat - **Վ ա ն ք**, **ա ն ա պ ա տ** Մեծ Հայքի Ուտիք աշխ-ում, **տ Մալեզկերո վանք:**

ՄԱՆՐԱԿԻ ՎԱՆՔ, Махраки ванк*, Makhaki vank' - **Վ ա ն ք Արմ** Հայաստանում, Նարբերդի նահ-ում, համանուն գավ-ի Ակնա գվղ-ի

Կամարակապ գ-ի և Քառասունակ կոչվող աղբյուրների մոտ:

ՄԱՄՆԱԲԵՐԴ, Мац*наберд, Macnaberđ – Վ ա ն ք ներկայիս Աղբրեջանի Հանրապետության Շամխորի շրջ-ի Չովղար գ-ի մոտ, **տ Մածնաբերդի վանք:**

ՄԱՄՆԱԲԵՐԴ-ի ՎԱՆՔ, Мац*набердаи ванк*, Macnaberdi vank', Մալազաբերդի վանք, Մալազնաբերդի Ամենափրկիչ, Մալազնաբերդի վանք, Մածնաբերդ, Մլզնաբերդ – Վ ա ն ք ներկայիս Աղբրեջանի Հանրապետության Շամխորի շրջ-ի Չովղար (Հարցհանգիստ) գ-ի մոտ, նրա հր-արլ կողմում, լ-ան հարթ կատարին, Շամխոր գետի աջափնյակում: Հնում մտնում էր Մեծ Հայքի Ուտիք աշխ-ի Գարդմանաձոր գավ-ի մեջ: Վանքից հս Մածնաբերդ լ-ն է: Եկեղեցին 2 կամարների վրա հաստատված, մի դռնանի, 2 լուսամուտներով և զանգակատնով շինություն է: Դռան ճակատին եղած հայերեն արձանագրությունից իմացվում է, որ 1891 թ վանքը վերանորոգել է զանձակեցի Սողոմոնը: Համալիրը շրջապատված է պարսպով, որը 19-րդ դ վերջերին գտնվում էր ավերված վիճակում և տարածքում աճել էին թփուտներ ու ծառեր: Պահպանվում էին խցերի ավերակներն ու գերեզմանները: Վանքը միջին դդ-ում պատկանել է Լոռվա Կյուրիկե Հայոց թագավորի որդուն՝ Աղսարթանին, որը միաժամանակ բնակություն էր հաստատել այստեղ: Հմմտ **Մալեզկերո վանք:**

ՄԱԿԱՐԱՅԵՑՎՈՅ ՎԱՆՔ, Макабайцевоц ванк*, Makabayec'voc' vank' – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Դիարբեքի ինահ-ում, **տ Ախթա:**

Ս ՄԱԿԱՐ, Св Макар, St Makar – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Պեմզաչեն գ-ի մոտ, **տ Մակարավանք:**

ՄԱԿԱՐԱՎԱՆՔ, Макараванк*, Makaravank', Կարմիրքենդ, Ս Մակար – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում, Պեմզաչեն քտա-ից 1-1,5 կմ արլ, Լեռնակերտ տանող ճանապարհի աջ կողմում, մի փոքրիկ ձորալանջի վրա: Կառուցել է 11-րդ դ կեսերին Գագիկ Բ Բագրատունի թագավորը (1042/43-1045): Կառուցված է գորշ

կարմրավուն սրբատաշ խոշոր տուֆաքարերով: Աջակողմյան մատուռի ճակատի վրա կա 1001 թ արձանագրություն: Մեկ այլ արձանագրության մեջ հիշատակվում է Աղին գ-ը: 1890-ական թթ արդեն խարխլված էր: Այժմ գմբեթն ու տանիքը ամբողջությամբ փլված են: Ղ. Ալիշանը Մ-ի համար որպես տարբերակ հիշատակում է Կարմիրքենդ անունը:

Ս ՄԱԿԱՐԱ ՎԱՆՔ, Св Макараванк*, St Makara vank' – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում, **տ Մակարավանք:**

ՄԱԿԱՐԱՎԱՆՔ, Макараванк*, Makaravank', Ագոավանք, Ս Աստվածածին, Ս Մակար, Ս Մակարա վանք, Ս Ուխտն Մակարավանուց – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում, Աչաջուր գ-ից մոտ 3 կմ հր-արմ, Պայտաթափ լ-ան անտառապատ լանջին, փոքրիկ, հարթ բացատում: Հնում մտնում էր Մեծ Հայքի Ուտիք աշխ-ի Աղվե (Կայեն) գավ-ի մեջ: Վանքի համալիրի մի կողմում անտառապատ ձոր է, մյուսում՝ Մակարա գետը, արմ-ից՝ անտառն է, արլ-ից՝ պարսպաշարը, որից մնացել է միայն կամարակապ մուտքը: Պարսպի ներսում մնացել են այլևայլ շինությունների ավերակները: Վանքի շուրջը կան ընդարձակ գատեղի և գերեզմանոց՝ տապանաքարերով ու խաչքարերով: Համալիրի և նրա մեջ մտնող կառույցների հիմնադրման ժամանակագրության մասին կան հակասական կարծիքներ: 19-րդ դ վերջերի վանքի Ս Աստվածածին հին եկեղեցու նկարագրությամբ, ենթադրել են, որ այն կառուցվել է 6-րդ դ: Նորագույն ուսումնասիրություններով թվագրվում է 10-11-րդ դդ: Գավթի վրա պահպանվել է 978 թվակիր արձանագրություն: Եկեղեցին արտաքուստ ուղղանկյուն, ներքուստ խաչաձև հատակագիծ ունի, կառուցված է կիսամյակ, կարմրավուն տուֆի խոշոր քարերով: Ունի մեկ ավագ և 4 փոքրիկ խորաններ: 13-րդ դ վերակառուցվել է եկեղեցու ծածկը և գմբեթը: Գլխավոր եկեղեցին նույնպես խաչաձև հատակագծով է և կառուցվել է 1205 թ սրբատաշ վարդագույն անդեզիտի քարերով: Արմ-ում ունի քանդակագարդ չքեղ

մուտք: Հր պատի վրայի լուսամուտի տակ ճանկերում հորթ բռնած արծվի հոյակապ հարթաքանդակն է: Այս եկեղեցին ունի մեկ ավագ խորան, 7 խորան և 11 լուսամուտ: Վանքի գավթի, որը կառուցվել է 13-րդ դ 1-ին քառորդում, արլ-ից և հր-ից իրար է միացնում հին եկեղեցին ու գլխավոր տաճարը: Գավթի կառուցված է վարդագույն անդեզիտի սրբատաշ քարերով: Այն բարձրանում է 4 սյուների և 10 կիսասյուների վրա, հր կողմում ունի 2 խորան: Գավթին կից է զանգակատունը: Սրա արմ չքամուտքի վրա կան հուշկապարիկի, առյուծի և ցուլի մենամարտ պատկերող բարձրաքանդակներ:

Վանքի համալիրի արլ կողմում առաջնորդ Հովհաննեսը 1198 թ կառուցել է Ս Աստվածածին եկեղեցին, որի համար նույնպես օգտագործվել են կարմրավուն անդեզիտի սրբատաշ քարեր: Այդ եկեղեցին ունի կենտրոնազմբեթ, հարթաքանդակներով հարուստ ու չքեղ հորինվածք: Հս կողմում, տաճարից 3-4 մ հեռավորությամբ փոքրիկ, թաղածածկ մատուռն է, որը գմբեթավոր տաճարի գեղատեսիլ մանրակերտ է հիշեցնում: Շինությունների պատերին կան բազմաթիվ արձանագրություններ, որոնք մեծ մասամբ 12-13-րդ դդ-ի են և հիմնականում վերաբերում են վանքին արված նվիրատվություններին: 14-րդ դ-ի սկզբներից Մ-ի մասին այլևս հիշատակություններ չկան, ինչը հավանաբար թաթար-մոնղոլների ասպատակությունների հետևանք էր: Ուշ ժամանակներում միայն վանքը սկըսել է նորից գործել, իսկ 1881 թ վանքի վանահոր սպանությունից հետո՝ կրկին լքվել է: Խորհրդային կարգերի ժամանակ Մ-ը լրիվ վերակառուցվել է և 1980-ական թթ-ից դարձել գործող եկեղեցի:

Ըստ վանքի անվանումների վերաբերյալ ավանդություններից մեկի՝ այն կառուցել է վարպետ Մակարը իր տղայի հետ միասին: Եվ երբ նրա տղան հանկարծամահ է լինում, վարպետը վանքից ցած նետվելով մեռնում է, իսկ վանքն էլ վարպետի անունով կոչվում է Մ: Մեկ այլ ավանդությամբ՝ մի ագոավ իրեն նետում է օձի թունով թունավորված ճաշի կաթնալի մեջ և փրկում վան-

քում աշխատողների կյանքը և վանքը ըստ այդմ կոչվում է Ագոավա-վանք:

ՄԱԿԱՐԱՎԱՆՔ, Макараванк*, Makaravanak' - **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մաքրավան գ-ում, **տ Մաքրավանք**:

ՄԱԿՈՂՎԱ ՎԱՆՔ, Макода ванк*, Makoda vanak' - **Վ ա ն ք** Մեծ Հայքի Այրարատ աշխ-ի Շիրակ գավ-ում: Ավերակները գտնվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում:

ՄԱՀԿԱՆԱՔԵՐԴ, Махканабера, Mahkanaberd - **Վ ա ն ք** Մեծ Հայքի Գուգարք աշխ-ի Զորոփոր (Կայան) գավ-ում: Ս. Բարխուդարյանը ենթադրարար նույնացնում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում գտնվող Առաքելոց վանքին:

ՄԱՀՄՈՒՏ ԵՂՄԻ, Махмут ег'и, Mahmut eyci - **Ե կ ե ղ ե ց ի** Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում, Այգեհնովիտ գ-ի մոտ, դրանից 2 կմ արլ: Շրջակայքում պահպանվել է գերեզմանոց:

ՄԱՀՌԱՇՏ, Маһр'ашт, Mahr'ast - **Վ ա ն ք** Մեծ Հայքի Վասպուրական աշխ-ի Ռչտունիք գավ-ում, Մահնաչտ գ-ում, **տ Մահնաչտի վանք**:

ՄԱՀՌԱՇՏԻ ՎԱՆՔ, Маһр'ашти ванк*, Mahr'ast'i vanak', **Մահնաչտ, Ս Պետրոսի վանք** - **Վ ա ն ք** Մեծ Հայքի Վասպուրական աշխ-ի Ռչտունիք գավ-ում, Մահնաչտ գ-ում, գետակի՝ դեպի Ոստան նայող գեղատեսիլ ափին: Հիմնադրել է Վասպուրականի Հայոց Գաղիկ Արծրունի թագավորը (10-րդ դ) և կոչել Ս Պետրոսի անունով: Ունեցել է հյուրասնյակներ և աղքատանոց:

ՄԱՂԱՐԱԹԱ ՎԱՆՔ, Mar*arata ванк*, Mayarata vanak' - **Վ ա ն ք** Պարսկահայաստանում, Մակուի խանության Դարաշամբի գավ-ում, **տ Դարաշամբի Ս Ստեփանոս Նախավկա**:

ՄԱՂԱՐԴ, Mar*ard, Mayard - **Վ ա ն ք** Պարսկահայաստանում, Մակուի խանության Դարաշամբի գավ-ում, **տ Դարաշամբի Ս Ստեփանոս Նախավկա**:

ՄԱՂԱՐԴԱՅԻ Ս ՍՏԵՓԱՆՈՍ, Mar*arday'i Sv Astvacacin - **Վ ա ն ք** Պարսկահայաստանում, Մակուի խա-

նություն Դարաշամբի գավ-ում, **տ Դարաշամբի Ս Ստեփանոս Նախավկա**:

ՄԱՂԱՐԴԱՍ ՆԱԽԱՎԿԱՅԻ ՎԱՆՔ, Mar*ardas Naxavkay'i ванк*, Mayardas Naxavkay'i vanak' - **Վ ա ն ք** Պարսկահայաստանում, Մակուի խանության Դարաշամբի գավ-ում, **տ Դարաշամբի Ս Ստեփանոս Նախավկա**:

ՄԱՂԱՐԴԱՎԱՆՔ, Mar*ardavanк*, Mayardavanak' - **Վ ա ն ք** Պարսկահայաստանում, Մակուի խանության Դարաշամբի գավ-ում, **տ Դարաշամբի Ս Ստեփանոս Նախավկա**:

ՄԱՂԱՐԴԵ ՎԱՆՔ, Mar*arde ванк*, Mayarde vanak' - **Վ ա ն ք** Պարսկահայաստանում, Մակուի խանության Դարաշամբի գավ-ում, **տ Դարաշամբի Ս Ստեփանոս Նախավկա**:

ՄԱՂԱՐԴԻ ՎԱՆՔ, Mar*ardi ванк*, Mayardi vanak' - **Վ ա ն ք** Պարսկահայաստանում, Մակուի խանության Դարաշամբի գավ-ում, **տ Դարաշամբի Ս Ստեփանոս Նախավկա**:

ՄԱՂԱՐԴՈՒ ՎԱՆՔ, Mar*ardu ванк*, Mayardu vanak' - **Վ ա ն ք** Պարսկահայաստանում, Մակուի խանության Դարաշամբի գավ-ում, **տ Դարաշամբի Ս Ստեփանոս Նախավկա**:

ՄԱՂԱՐԹԱ ԼԵՌԱՆ Ս ՍՏԵՓԱՆՈՍԻ ՄԵՆԱՍՏԱՆ, Mar*art'a le-r'an Sv Step'anosi menastan, Mayart'a ler'an St Step'anosi menastan - **Վ ա ն ք** Պարսկահայաստանում, Մակուի խանության Դարաշամբի գավ-ում, **տ Դարաշամբի Ս Ստեփանոս Նախավկա**:

ՄԱՂԱՐԹԱ Ս ՆԱԽԱՎԿԱՅԻ ՎԱՆՔ, Mar*art'a Sv Naxavkay'i ванк*, Mayart'a St Naxavkay'i vanak' - **Վ ա ն ք** Պարսկահայաստանում, Մակուի խանության Դարաշամբի գավ-ում, **տ Դարաշամբի Ս Ստեփանոս Նախավկա**:

ՄԱՂԱՐԹԱՎԱՆՔ, Mar*art'avанк*, Mayart'avank' - **Վ ա ն ք** Պարսկահայաստանում, Մակուի խանության Դարաշամբի գավ-ում, **տ Դարաշամբի Ս Ստեփանոս Նախավկա**:

ՄԱՂԱՐԹՈ ՎԱՆՔ, Mar*art'o ванк*, Mayart'o vanak' - **Վ ա ն ք** Պարսկահայաստանում, Մակուի խա-

նություն Դարաշամբի գավ-ում, **տ Դարաշամբի Ս Ստեփանոս Նախավկա**:

ՄԱՂԱՐԹՈՒ ՎԱՆՔ, Mar*art'ay ванк*, Mayart'u vanak' - **Վ ա ն ք** Պարսկահայաստանում, Մակուի խանության Դարաշամբի գավ-ում, **տ Դարաշամբի Ս Ստեփանոս Նախավկա**:

ՄԱՂԱՓԱՅԱՍԻ ՎԱՆՔ, Mar*ap'ayasi ванк*, Mayap'ayasi vanak' - **Վ ա ն ք** Արմ Հայաստանում, Դիարբեքի ինահ-ում, Համանուն գավ-ի Լճի գլուխ-ում: 20-րդ դ-ի սկզբներին պահպանվում էր Համալիի հին եկեղեցին:

ՄԱՂԱՔԻԱ, Mar*ak'ia, Mayak'ia - **Մ ե ն ա ս տ ա ն** (վանք) Արմ Հայաստանում, Էրզրումի նահ-ի Դերջան գլուխ-ում, **տ Ս Սարգսի մենաստան**:

ՄԱՂԱՔԻԱՅԻ ՎԱՆՔ, Mar*ak'iaiyi ванк*, Mayak'iaiyi vanak' - **Մ ե ն ա ս տ ա ն** (վանք) Արմ Հայաստանում, Էրզրումի նահ-ի Դերջան գլուխ-ում, **տ Ս Սարգսի մենաստան**:

ՄԱՂԹՈՒՄ ԶԱԴԵ, Mar*t'um zade, Mayt'um zade - **Մ ա տ ու ո** Ելիզավետպոլի նահ-ի Ելիզավետպոլի գավ-ում, Շամխոր գետի աջ կողմում: 19-րդ դ-ի վերջերին ավերակ էր: Շրջակայքում կային հայկական գերեզմաններ, խաչքարեր: Վերջիններից մեկը ուներ 1024 թ հայերեն արձանագրություն:

Ս ՄԱՄԱՋ, Sv Mamaz, St Mamaz - **Ու խ տ ա տ ե ղ ի** Արմ Հայաստանում, Խարբերդի նահ-ում, Խարբերդի գավ-ի Քարիկ գ-ի մոտ, **տ Ս Մամաս**:

Ս ՄԱՄԱՍ, Sv Mamac, St Mammas - **Ե կ ե ղ ե ց ի** Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Սասունի Խիանք գլուխ-ի Իշխանաձոր գ-ում: Մինչև 1915 թ եկեղեցուն կից գործում էր վարժարան, որտեղ ժամանակին սովորել է նաև բանաստեղծ Վաղարշակ Նորենցը:

Ս ՄԱՄԱՍ, Sv Mamac, St Mammas - **Ե կ ե ղ ե ց ի** Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Սասունի Խութ-Բունաչեն գլուխ-ի Ընկուղիկ գ-ում:

Ս ՄԱՄԱՍ, Sv Mamac, St Mammas - **Ե կ ե ղ ե ց ի** Արմ Հայաստանում, Խարբերդի նահ-ի Իբիլ գ-ում:

Ս ՄԱՄԱՍ, *Св Мамас, St Mamas* – **Ե Կ Ե Ղ Ե Կ Ե Ի** Կարսի մարզի Կաղզվանի օկրուզի վարդեհոր վանքի համալիրում:

ՄԱՄԱՍ, *Мамас, Mamas* – **Վ ա ն ք (եկեղեցի)** Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Խիանք գվոկ-ի Սևիթ գ-ում, **տ Սևթա Ս Մամաս:**

ՄԱՄԱՍ, *Мамас, Mamas* – **Վ ա ն ք (եկեղեցի)** Արմ Հայաստանում, Խարբերդի նահ-ում, Խարբերդի գավ-ի Քեսրիկ գ-ից ոչ հեռու, **տ Ս Մամաս:**

Ս ՄԱՄԱՍ, *Св Мамас, St Mamas, Մամաս* – **Վ ա ն ք (եկեղեցի)** Արմ Հայաստանում, Խարբերդի նահ-ում, Խարբերդ ք-ից հս-արլ, Քեսրիկ գ-ից ոչ հեռու: Հիշատակված է նաև իրրև այդ գ-ի 2 եկեղեցիներից մեկը: Վանքի շրջակայքում կատարված պեղումների ժամանակ հայտնաբերվել է հնավայր-կոստուն, 2 քառակուսի սպիտակ քարերի վրա՝ լատիներեն արձանագրություններ, որոնք ենթադրաբար վերագրվում են հռոմեական զորավար Կորրուլոնին (1-ին դ): Գտնվել են նաև մարդկային բազմաթիվ կմախքներ:

Ս ՄԱՄԱՍ, *Св Мамас, St Mamas* – **Վ ա ն ք (եկեղեցի)** Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջ-ում, Ամարաս վանքի մոտակայքում: Հնում նաև ամրոցի դեր է կատարել: Եկեղեցուներսում կան հայկական թաղումներ:

ՄԱՄԱՍ, *Мамас, Mamas* – **Վ ա ն ք (անապատ)** Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Քարազուլս գ-ի մոտ, **տ Քարազլիսի Ս Մամասսա վանք:**

Ս ՄԱՄԱՍ, *Св Мамас, St Mamas* – **Վ ա ն ք (անապատ)** Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Քարազուլս գ-ի մոտ, **տ Քարազլիսի Ս Մամասսա վանք:**

ՄԱՄԱՍ, *Мамас, Mamas* – **Վ ա ն ք (մատուռ)** Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում, Մարտունի ք-ի տարածքում, **տ Ս Մամաս:**

Ս ՄԱՄԱՍ, *Св Мамас, St Mamas, Մամաս* – **Վ ա ն ք (մատուռ)** Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում, Մարտունի ք-ի տարածքում, նրա արմ կողմում: Ըստ ավանդության՝ կաթողի-

կոս ներսես Մեծի (353–373) հետ Կեսարիա գնացած Սյունիքի իշխանները վերադառնալիս իրենց հետ բերել են Մամաս ձգնավորի մատուցը և ամփոփել այստեղ, հետո տեղափոխել Սյունիքի Վայոց Ձոր գավ-ի Քարազուլս գ-ի մոտ: Երկու տեղում էլ կառուցվել է վանք, մատուռ, առաջինը կոչել են Ս Մամաս, երկրորդը՝ Քարազլիսի Ս Մամասսա վանք:

ՄԱՄԱՍ, *Мамас, Mamas* – **Վ ա ն ք** Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջ-ի Մավաս գ-ի մոտ, **տ Մավասի վանք:**

ՄԱՄԱՍ, *Мамас, Mamas* – **Վ ա ն ք** Կիլիկիայում, Աղանայի նահ-ում, Հարունի (Խառնը բերդ) ք-ից ոչ հեռու, **տ Ս Մամասսա վանք:**

Ս ՄԱՄԱՍ, *Св Мамас, St Mamas* – **Ու խ տ ա տ Ե Ղ Ի** Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Սատունի Տավրոսի գվոկ-ի Հյոդինք գ-ում: Ավերակ էր:

Ս ՄԱՄԱՍ ԱՆԱՊԱՏ, *Св Мамас анапат, St Mamas anapat* – **Վ ա ն ք (անապատ)** Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Քարազուլս գ-ի մոտ, **տ Քարազլիսի Ս Մամասսա վանք:**

Ս ՄԱՄԱՍԱ ՎԱՆՔ, *Св Мамаса ванк', St Mamasa vank'*, **Մամաս, Մամասի վանք** – **Վ ա ն ք** Կիլիկիայում, Աղանայի նահ-ում, Ջահան (Պիոսմոս) գետի ստորին հոսանքի ձախ կողմում, Հարունի (Խառնի բերդ) ք-ից ոչ հեռու, Սարվանդիքար ամրոցի շրջակայքում: Հիշատակված է Կիլիկիայի Հայոց թագավոր Հեթում Ա-ի (1226– 1270) և Ջարեկ թագուհու 1236 թ լատիներեն պարզագրում:

Ս ՄԱՄԱՍԱ ՎԱՆՔ, *Св Мамаса ванк', St Mamasa vank'* – **Վ ա ն ք (անապատ)** Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Քարազուլս գ-ի մոտ, **տ Քարազլիսի Ս Մամասսա վանք:**

ՄԱՄԱՍԵՐԻ ՎԱՆՔ, *Мамасери ванк', Mamaseri vank'* – **Վ ա ն ք** Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջ-ի Մավաս գ-ի մոտ, **տ Մավասի վանք:**

ՄԱՄԱՍԻ ՎԱՆՔ, *Мамаси ванк', Mamasi vank'* – **Վ ա ն ք** Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջ-ի Մավաս գ-ի մոտ, **տ Մավասի վանք:**

ՄԱՄԱՍԻ ՎԱՆՔ, *Мамаси ванк', Mamasi vank'* – **Վ ա ն ք** Կիլիկիայում, Աղանայի նահ-ում, Հարունի (Խառնը բերդ) ք-ից ոչ հեռու, **տ Ս Մամասսա վանք:**

Ս ՄԱՄԱՍԻ ՎԱՆՔ, *Св Мамаси ванк', St Mamasi vank'* – **Վ ա ն ք (անապատ)** Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Քարազուլս գ-ի մոտ, **տ Քարազլիսի Ս Մամասսա վանք:**

Ս ՄԱՄԲՐԵ, *Св Мамбре, St Mambre* – **Վ ա ն ք (անապատ)** Մեծ Հայքի Չորրորդ Հայք աշխ-ի Մեծ Ծովք գավ-ում, **տ Մամբրե անապատ:**

ՄԱՄԲՐԵ ԱՆԱՊԱՏ, *Мамбре анапат, Mambre anapat*, **Ս Մամբրե** – **Վ ա ն ք (անապատ)** Մեծ Հայքի Չորրորդ Հայք աշխ-ի Մեծ Ծովք գավ-ում, Մամուշեղ գետի ափին:

ՄԱՄԳՈՒՆԻ ՎԱՆՔ, *Мамгуни ванк', Mamguni vank'* – **Վ ա ն ք** Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Մուշ ք-ից արմ, **տ Մամկա վանք:**

ՄԱՄԿԱ ՎԱՆՔ, *Мамка ванк', Mamka vank'*, **Մամգունի վանք, Մամկոնյաց վանք** – **Վ ա ն ք** Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Մուշի գավ-ում, Մուշ ք-ից արմ, Եղրդուտի Ս Հովհաննես վանքի մոտակայքում: 19-րդ դ-ի վերջերից ավերված ու ամայի էր:

ՄԱՄԿՈՆՅԱՆՅ ՎԱՆՔ, *Мамконянци ванк', Mamkonyanc' vank'* – **Վ ա ն ք** Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Մուշ ք-ից արմ, **տ Մամկա վանք:**

ՄԱՄՈՒՇԵՂ, *Мамушер', Mamushay* – **Ա ն ա պ ա տ (վանք)** Արմ Հայաստանում, Դիարբեքիրի նահ-ի Դիարբեքիրի գավ-ում, Մամուշեղ գետի հովտում:

ՄԱՅԻ ՄԵՀՅԱՆ, *Майи мезян, Mayi mehyan* – **Հ Ե Թ ա ն ո ս ա կ ա ն մ Ե Հ յ ա ն** Փոքր Հայքում, Առաջին Հայք պրովինցիայի Կոմանա ք-ի մոտակայքում, **տ Ենիվոյի մեհյան:**

ՄԱՅՐԱԳՈՄ, *Майрагом, Mayragom* – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ գ-ի մոտ, **տ Մայրավանք:**

ՄԱՅՐԱԳՈՄԱ ՎԱՆՔ, *Майрагома ванк', Mayragoma vank'* – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ գ-ի մոտ, **տ Մայրավանք:**

ՄԱՅՐԱՁՈՐ, Майрадзор, Mayrajour, Կանանչուտ, Ձորամայրի անապատ, Ձորամայրվո անապատ, Ձորամայրվո վանք, Ձորմայր, Ձորմայրի անապատ, Ձորմայրվո վանք, Ձորմայր, Ձորմայրի անապատ, Ձորմայրի անապատ, Ձորմար – Վ ա ն ք , ա ն ա պ ա տ Մեծ Հայքի Այրարատ աշխ-ի Գաբրիելյանք (կամ Արշարունիք) գավ-ում, Մայրաձոր վայրում: Այստեղ են Հանգրրվանեկ Մեսրոպ Մաշտոցը (5-րդ դ) և Սահակ Պարթևի աշակերտ Թաթևուլը՝ Թաթևո վանքը Հիմնելուց հետո: Միջին դդ-ում եղել է Հայ գրչության կենտրոն: 15-րդ դ-ի ձեռագրական մի հիշատակարանում վկայվում է, որ 1060 թ այստեղ նորոգվել է Ավետարան, իսկ 1187 թ ոմն Փոռեկ ընդօրինակել է Եպիփան Կիպրացու ճառերը: Վանքի ավերակները պահպանվել են Կարսի մարզի Կաղզվան դդ-ի մոտակայքում:

ՄԱՅՐ ԱՆԴ, Маїр АНД, Маїт АНД – Ու խ տ ա տ ե ղ ի պատմական Ատրպատականում, Մարանդի գավ-ում: Ըստ ավանդության՝ այստեղ է թաղված Նոյ Նահապետի կին Նոյեմզարը, որի համար էլ կոչվել է Մ Ա, այսինքն՝ «մայրն այնտեղ»:

ՄԱՅՐ ԱՆԴ, Маїр АНД, Маїт АНД – Ու խ տ ա տ ե ղ ի Պարսկահայաստանում, Ուրմիայի գավ-ի Նախճավան գ-ում: Ըստ ավանդության՝ այստեղ է թաղված Նոյ Նահապետի կինը՝ Նոյեմզարը, որի համար էլ վայրը կոչվում է Մ Ա, այսինքն՝ մայրը այգտեղ է:

ՄԱՅՐ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, Маїр Аствац‘ац‘иН, Маїт Astvacacin – Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստանում, էրզրումի նահ-ում, համանուն գավ-ի Բասեն գվոկ-ի Գողի (Տողի, Տոտի) գ-ում: Մինչև 1915 թ գ-ում գործում էր Արշակունյան վարժարանը՝ 40 սաներով:

ՄԱՅՐ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, Маїр Аствац‘ац‘иН, Маїт Astvacacin – Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստանում, էրզրումի նահ-ում, համանուն գավ-ի Նոտրջրի գ-ախմբի վերին Նանդաձոր գ-ում: Ավերվել ու կողոպտվել է գ-ի հետ միասին՝ 1915 թ:

ՄԱՅՐ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, Маїр Аствац‘ац‘иН, Маїт Astvacacin – Ս ր ք ա վ ա յ ր Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մար-

զի Լճավան գ-ում, նրա հս կողմում: ՄԱՅՐԱՎԱՆՔ, Маїраванк*, Маїтavanк* – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Վան ք-ի մոտ, տ Վարագավանք:

ՄԱՅՐԱՎԱՆՔ, Маїраванк*, Маїтavanк*, Մայրագոմ, Մայրագոմա վանք, Մայրավանք Աստվածածին, Մայրեգոմ, Մայրեվան, Մայրեվանք, Մայրի, Մայրիվանք, Մայրոգոմ, Մայրոգոմ, Մայրո վանք, Մայրոց, Մայրոց վանք – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում, Սոլակ գ-ի մոտ, լ-ան գոգավորությունում: Հնում մտնում էր Մեծ Հայքի Այրարատ աշխ-ի Վարածնունիք գավ-ի մեջ: Հիմնադրել է Հովհան Մայրավանեցին՝ 7-րդ դ-ում: Անունը ստուգաբանվում է՝ մայրոց, մայրիների անտառի վանք իմաստով: Հայոց եզր Ա Փառածնակերտցի կաթողիկոսից (630–641) հալածված Հովհան Մայրավանեցին ապաստանում է այս վանքում, որը ի նախատինս Հովանի վանքը կոչեց Մայրագոմ, իսկ իրեն՝ Մայրագոմեցի: Եկեղեցին կոչվում է Ս Աստվածածին, կառուցվել է 11–12-րդ դդ-ում: Այն գմբեթավոր, տեղական գորշավուն սրբատաշ քարերով կառուցված մի փոքրիկ, բայց ամրակուռ շինություն է: Ներսում, սեղանի վրա թողնված է Հայերեն արձանագրություն:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, Маїрaк‘аг‘ак* Аствац‘ац‘иН, Маїтaк‘аг‘ак* Astvacacin – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ գ-ի մոտ, տ Մայրավանք: ՄԱՅՐԱՔԱՂԱՔ, Маїрaк‘аг‘ак*, Маїтaк‘аг‘ак* – Ե կ ե ղ ե ց ի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջ-ում, Թարթառ գետի աջ ափին Վաղուհաս գ-ում: Վիճաբերից մեկի հիշատակությունը կառուցվել է 1283 թ: Ունեցել է Մատենադարան, երբեմն եղել է եպիսկոպոսանիստ:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ, Маїрaк‘аг‘ак*, Маїтaк‘аг‘ак* – Վ ա ն ք , մ ե ն ա ս տ ա ն Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Փարպի գ-ի մոտ, տ Ս Գրիգոր:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՎԱՆՔ, Маїрaк‘аг‘ак*и ванк*, Маїтaк‘аг‘ак‘и ванк* – Վ ա ն ք Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտա-

կերտի շրջ-ի Վաղուհաս գ-ում, տ Վաղուհասի վանք:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՄԵՆԱՍՏԱՆԱՅ, Маїрaк‘аг‘ак* Менастанац, Маїтaк‘аг‘ак* Menastanac – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Վան ք-ի մոտ, տ Վարագավանք:

ՄԱՅՐԵԳՈՄ, Маїрегом, Маїтегом – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ գ-ի մոտ, տ Մայրավանք:

ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ, Маїр екег‘ецц, Маїт екег‘ец‘и – Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստանում, էրզրումի նահ-ում, համանուն գավ-ի Կիսկիմի գվոկ-ի Նոտրջրի գ-ախմբի ձիճապաղ գ-ում: Մինչև 1915 թ գ-ում գործում էր երկսեռ վարժարան:

ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ, Маїр екег‘ецц, Маїт екег‘ец‘и – Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստանում, Նարբերդի նահ-ի Արաբկիր ք-ում:

ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ, Маїр екег‘ецц, Маїт екег‘ец‘и – Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստանում, Նարբերդի նահ-ի Մալաթիա ք-ում:

ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ, Маїр екег‘ецц, Маїт екег‘ец‘и – Ե կ ե ղ ե ց ի Կարսի մարզում, Կարս ք-ում, տ Կաթողիկե:

ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ, Маїр екег‘ецц, Маїт екег‘ец‘и – Ե կ ե ղ ե ց ի Մեծ Հայքի Այրարատ աշխ-ում, Արշարունիք գավ-ի Բագարան ք-ում: Մի ձեռագրական հիշատակարանի վկայությամբ՝ ոմն Շապուհ քահանա 1234 թ Շահնշահ Ջաբարյան իշխանից գնած հողերը նվիրել է այս եկեղեցուն:

ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ, Маїр екег‘ецц, Маїт екег‘ец‘и, Անիի Կաթողիկե եկեղեցի, Կաթողիկե, Մայր տաճար – Ե կ ե ղ ե ց ի Մեծ Հայքի Այրարատ աշխ-ի Շիրակ գավ-ում, Անի մայրաքաղաքում: Կառուցվել է Հայոց թագավոր Գագիկ Ա Բագրատունին (990–1020)՝ 993 թ: Եղել է կաթողիկոսական նստավայր:

ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ, Маїр екег‘ецц, Маїт екег‘ец‘и – Ե կ ե ղ ե ց ի Մեծ Հայքի Տուրուբերան աշխ-ի Տարոն գավ-ի Աշտիշատ ավանում:

ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ, Маїр екег‘ецц, Маїт екег‘ец‘и – Ե կ ե ղ ե ց ի ներկայիս Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Օրդուբադի շրջ-ի Վերին Ագուլիս գ-ում, տ Ս Քրիստափոր:

ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ, Майр екер*е-
цц, Майт екеҧес'и – Ե կ ե ղ ե ց ի
պատմական Գամիրքում (Կապա-
ղովկիա), Կեսարիա ք-ում:

ՄԱՅՐԵՎԱՆ, Майреван, May-
revan – Վ ա ն ք Հայաստանի Հան-
րապետության Կոտայքի մարզի Սո-
լակ գ-ի մոտ, տ Մայրավանք:

ՄԱՅՐԵՎԱՆՔ, Майреванк*,
Mayrevank' – Վ ա ն ք Հայաստանի
Հանրապետության Կոտայքի մարզի
Սոլակ գ-ի մոտ, տ Մայրավանք:

ՄԱՅՐԻ, Майри, Майги –
Վ ա ն ք Հայաստանի Հանրապե-
տության Կոտայքի մարզի Սոլակ
գ-ի մոտ, տ Մայրավանք:

ՄԱՅՐԻՎԱՆՔ, Майриванк*,
Mayrivank' – Վ ա ն ք Հայաստանի
Հանրապետության Կոտայքի մարզի
Սոլակ գ-ի մոտ, տ Մայրավանք:

ՄԱՅՐ ԼՈՒՍՈՎԱՆՔ, Майр лусо-
ванк*, Майт лусо ванк' – Վ ա ն ք
Մեծ Հայքի Այրարատ աշխ-ի Շիրակ
գավ-ում, տ Բազնայր:

ՄԱՅՐ ԽԱԹՈՒՆ, Майр Хат*ун,
Майт Хат'ун – Մ ա տ ու ո (նաև
գյուղատեղի) Լեոնային Ղարաբաղի
Հանրապետության Հաղարծի շրջ-
ում, Մեծ Թաղլար-Շեխեր ճանա-
պարհի մոտ, տ Մար Խաթուն:

ՄԱՅՐՈՂ ԳՈՄ, Майро гом, Майто
гом – Վ ա ն ք Հայաստանի Հան-
րապետության Կոտայքի մարզի Սո-
լակ գ-ի մոտ, տ Մայրավանք:

ՄԱՅՐՈՂԳՈՄ, Майрогом, Майто-
гом – Վ ա ն ք Հայաստանի Հան-
րապետության Կոտայքի մարզի Սո-
լակ գ-ի մոտ, տ Մայրավանք:

ՄԱՅՐՈՎԱՆՔ, Майро ванк*,
Майто ванк' – Վ ա ն ք Հայաստանի
Հանրապետության Կոտայքի մարզի
Սոլակ գ-ի մոտ, տ Մայրավանք:

ՄԱՅՐՈՅ, Майроц, Майтос' –
Վ ա ն ք Հայաստանի Հանրապե-
տության Կոտայքի մարզի Սոլակ
գ-ի մոտ, տ Մայրավանք:

ՄԱՅՐՈՅ ՎԱՆՔ, Майроц ванк*,
Майтос' ванк' – Վ ա ն ք Հայաս-
տանի Հանրապետության Կոտայքի
մարզի Սոլակ գ-ի մոտ, տ Մայրա-
վանք:

ՄԱՅՐ ՏԱՃԱՐ, Майр таҷ*ар,
Майт таҷар – Ե կ ե ղ ե ց ի Արմ
Հայաստանում, Խարբերդի նահ-ի
Ակն ք-ում, տ Ս Աստվածածին:

ՄԱՅՐ ՏԱՃԱՐ, Майр таҷ*ар,
Майт таҷар – Տ ա ճ ա Ր Մեծ Հայքի
Այրարատ աշխ-ում, Անի մայրաքա-

ղաքում: 11-րդ դ վերջերին Անիի
Շաղղաղյան տոհմի կառավարիչ
Աբուլ Սվար 2-րդի ժամանակ վե-
րածվել էր մզկիթի: Կառուցող ճար-
տարապետը Տրդատն է: Շինարա-
րությունն սկսվել է Սմբատ 2-րդի
օրոք՝ 989 թ և ավարտվել է Գագիկ
1-ինի օրոք՝ նրա կնոջ՝ Կատրամիդե
Թագուհու հոգացողությամբ 1001 թ:
Մայր տաճարը Անիի ամենախոշոր
եկեղեցական շինությունն է: Նրա
հմայքը պարզության մեջ է, կեղծ
կամարակալների, վերասյաց սյու-
ների, խոյակների ու նրբակերտ
քանդակների մեջ: Եկեղեցին գմբե-
թավոր էր:

ՄԱՅՐ ՏԱՃԱՐ, Майр таҷ*ар,
Майт таҷар – Ե կ ե ղ ե ց ի պատ-
մական Փոքր Հայքում, Կեսարիա ք-
ում, տ Մայր եկեղեցի:

ՄԱՆԱԶԿԵՐՏԻ ՍԵՂԱՆՔԱՐ, Ма-
назкертц Сег*анк*ар, Manazkerti
Seγank'ar, Գյավրե քաֆրան, Կյավ-
րե քաֆրան – Ժ ա յ ո (պաշտա-
մունքի վայր) Հայկական լեոնաշ-
խարհում, Արածանի գետի հովտում,
Մանաղկերտ ք-ից հը, Մեջան գ-ի
մոտ: Տեղի Հայ բնակչության վկա-
յությունը՝ հնում այստեղ հեթանո-
սական մեհյան է եղել:

ՄԱՆԱՆՈՒ ԶՈՐ, Манаху дзор,
Manaxu jor, Մանանխու ձոր –
Վ ա յ Ր Մեծ Հայքի Աղձնիք աշխ-
ում, Հազգո բք-ի շրջ-ում: Ստու-
գաբանվում է՝ «մանանխի ձոր»
իմաստով: Վարդան Արևելյու (13-
րդ դ) հիշատակությամբ՝ այստեղ էր
գտնվում Պետրոս Առաքյալի ճկույ-
թը: Դրա համար էլ կարծվում է, որ
Մ ձ-ը վանքի անուն է:

ՄԱՆԱԿԿԱ ՎԱՆՔ, Манака
ванк*, Manakka vank' – Վ ա ն ք
Մեծ Հայքի Սյունիք աշխ-ի Բաղք-
Քաշունիք գավ-ում: Հիշատակում է
Ստեփանոս Օրբելյանը (13-րդ դ)՝
առանց որոշակի տեղագրության:

ՄԱՆԱՃԻՀՐ ՌԱԺԻԿ, Манач*иhr
P*ажик, Manacihr R'ažik – Վ ա ն ք
Մեծ Հայքի Այրարատ աշխ-ում, տ
Մանածիհր Ռաժիկի վանք:

ՄԱՆԱՃԻՀՐ ՌԱԺԻԿԻ ՎԱՆՔ, Манач*иhr
P*ажики ванк*, Manacihr R'ažiki vank',
Գրիգոր Մանա-
ձիհր Ռաժիկ, Գրիգոր Մանածիհր
Ռաժիկի վանք, Գրիգոր Ռաժիկի
վանք, Մանածիհր Ռաժիկ – Վ ա ն ք
Մեծ Հայքի Այրարատ աշխ-ում, հա-
վանաբար Դվին ք-ի մոտակայքում:

Հիմնադրել են Պարսկաստանից ե-
կած նեստորական կրոնավորները
547 թ և կոչել իրենց քարոզիչներին
մեկի՝ Գրիգոր Մանածիհր Ռաժիկի
անունով: Այս վանքում համախմբ-
վածները ունեին Հայոց եկեղեցուն
հակառակ դիրքորոշում և իրենց
չուրջն էին հավաքել նաև պավլիկ-
յաններին: Դվինի 554 թ եկեղեցա-
կան ժողովի որոշմամբ այս վանքը
հիմնահատակ կործանվեց, իսկ այն-
տեղ եղողները հայածվեցին ու ար-
տաքավեցին Հայաստանից:

ՄԱՆԱՆՈՒ ԶՈՐ, Манаху
дзор, Manaxu jor – Վ ա ն ք Մեծ
Հայքի Աղձնիք աշխ-ում, Հազգո
բք-ի շրջ-ում, տ Մանախու ձոր:

Ս ՄԱՆԱՍ, Св Манас, St Ma-
nas – Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստա-
նում, Խարբերդի նահ-ում, համա-
նուն գավ-ի Ակնա գավ-ի Աղին
գք-ի մոտակայքում գտնվող ձերմակ
Մազ ավերակ ք-ի տարածքում:

ՄԱՆԳԼԻՍԻ Ս ԽԱՉ, Манглиси
Св Хац, Manglisi St Xac' – Վ ա ն ք
այժմյան Վրաստանի Հանրապե-
տության Թեթրիձղարոյի շրջ-ում,
Մանգլիս քտա-ում, տ Ս Խաչ:

ՄԱՆԴԱԾ-ԽԱՅ, Мандац*Хац,
Mandac-Xac' – Ու խ տ ա տ ե ղ ի
Հայաստանի Հանրապետության Սյու-
նիքի մարզում: Գտնվում էր Մեղրի
ք-ի և Կարճևան գ-ի միջև, լ-ան վրա:

ՄԱՆԴՈՒՌ, Мандур*, Mandur' –
Մ ա տ ու ո Լեոնային Ղարաբաղի
Հանրապետության Մարտակերտի
շրջ-ում, Դրմբոն գ-ի մոտ, նրանից
հս, անտառապատ ձորակում, Ս Ա-
մենափրկիչ վանքից ոչ այնքան հե-
ռու: Մատուռը կառուցված է Ման-
ղուռ (Մատուռ) աղբյուրի աջ կող-
մում: Շինությունն այժմ գտնվում է
փրված վիճակում: Մուտքի վրայի
հայերեն արձանագրության մեջ աս-
վում է, որ մատուռը կառուցվել է
1187 թ Խաչենի իշխանների նախա-
ձեռնությամբ: Շուրջը կան ընդար-
ձակ գերեզմանոց՝ խաչքարերով, գ-
ատեղիներ, ջրաղացներ, բերդեր և
եկեղեցի՝ Անապատ անունով:

ՄԱՆԵԱ ԱՅՐՔ, Манеа айрк*,
Manea ayrk', Ս Լուսավորիչ –
Վ ա ն ք Արմ Հայաստանում, դրա
հս-արմ կողմում, Գոհանամ լ-ան
տարածքում:

ՄԱՆԵՎԱՆՍ, Маневанс, Mane-
vans – Վ ա ն ք Մեծ Հայքի Այրա-
րատ աշխ-ի Արշարունիք գավ-ում,
տ Մանեվանք:

ՄԱՆԵՎԱՆՔ, Маневанк*, Manevanak' - Վ ա ն ք Մեծ Հայքի Այրարատ աշխ-ի Արշարունիք գավ-ում: Հիշատակում է Ստեփանոս Ասողիկը (10-րդ դ):

ՄԱՆԻՍ ԱՅՐ, Маняа айр, Mania ayt - Ք ա ռ ա յ ը - ս ը բ ա տ ե ղ ի Արմ Հայաստանում, էրզրումի նահ-ում, Սեպուհ լ-ան վրա, տ Մանյա այր:

ՄԱՆԻՑ ԳՈՄ, Маниц Гом, Manic' Gom - Ս ը բ ա տ ե ղ ի Թիֆ-լիսի նահ-ի Ախալքալաքի գավ-ում, Կուր գետի աջափնյա ձորեզրի ժայ-ռի վրա: 1895 թ այստեղ կային մի քանի արհեստական քարայրներ և 3 եկեղեցի:

ՄԱՆԼԵՎՈՒ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ Ա-ՆԱՊԱՏ, Манлеву Аменап'ркич а-напат, Manlevu Amenap'rkic' ana-pat, Մանլևու Ամենափրկիչ Կուսա-նաց անապատ - Վ ա ն ք , ա ն ա - պ ա տ Մեծ Հայքի Սյունիք աշխ-ի Արևիք գավ-ում: Հիշատակում են 10-13-րդ դդ-ի հայ պատմիչները: Գտնվում էր այժմյան Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մալև գ-ում: Միջին դդ-ում եղել է հայ գրչության կենտրոն:

ՄԱՆԼԵՎՈՒ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԿՈՒՍԱՆԱՅ ԱՆԱՊԱՏ, Манлеву Аменап'ркич Кусанац анапат, Manlevu Amenap'rkic' Kusanac' ana-pat - Վ ա ն ք , ա ն ա պ ա տ Մեծ Հայքի Սյունիք աշխ-ի Արևիք գավ-ում, տ Մանլևու Ամենափրկիչ անապատ:

ՄԱՆԿԱՄԱԶԻԿ, Манкамазик, Mankamazik - Գ ա շ տ , ու խ - տ ա տ ե ղ ի Արմ Հայաստանում, Խարբերդի նահ-ում, Մալաթիայի գավ-ի Մանկամազիկ գ-ի մոտ:

ՄԱՆԿԱՆՈՅ, Манканод, Mankanos' - Ե կ ե ղ ե ց ի (վանք) Հա-յաստանի Հանրապետության Արա-գածոտնի մարզի Օշական գ-ի մոտ, տ Մանկանոցի Ս Սիոն:

ՄԱՆԿԱՆՈՅԻ Ս ՍԻՈՆ, Манканодц Св Сион, Mankanos'i St Sion, Մանկանոց, Մանկանոց վանք, Քա-ռասուն Մանկանոց Տուն - Ե կ ե - ղ ե ց ի (վանք) Հայաստանի Հան-րապետության Արագածոտնի մար-զում, Օշական գ-ի մոտ, Մանկանոց գ-ի ավերակների տարածքում, Օ-շական-Ոսկեվազ ճանապարհի աջ կողմում: Կիսավեր էր, վերանորոգ-վել է 1850-ական թթ: Կառուցված

է վարդագույն, սրբատաշ տուֆով՝ 7-րդ դ-ում: Ունի քառախորան հո-րինվածք: Հուշարձանի վրա պահ-պանվել են միաբանություն մասին տեղեկացնող մի քանի արձանա-գրություններ: Հմմտ Ս Սիոն:

ՄԱՆԿԱՎԱՆՈՅ ՎԱՆՔ, Манканодц ванк*, Mankanos' vank' - Ե կ ե - ղ ե ց ի (վանք) Հայաստանի Հան-րապետության Արագածոտնի մար-զում, Օշական գ-ի մոտ, տ Ման-կանոցի Ս Սիոն:

ՄԱՆԿԱՎԱՆՔ, Манкаванк*, Mankavanak' - Ե կ ե ղ ե ց ի (վանք) Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ի Մուշի գավ-ում, Երզրուտի Ս Հով-հաննես վանքից 5-6 կմ հեռավո-րությունը, բարձունքի վրա: 20-րդ դ-ի սկզբներին ավերված ու լքված էր: Հնում մտնում էր Մեծ Հայքի Տուրուբերան աշխ-ի Տարոն գավ-ի մեջ:

ՄԱՆԿՈՒՆՔ, Манкунк*, Mankunk' - Վ ա ն ք Մեծ Հայքի Այրա-րատ աշխ-ի Արշարունիք գավ-ում, տ Վանկույք:

Ս ՄԱՆԿՈՒՍ, Св Манкус, St Mankus - Ե կ ե ղ ե ց ի Արմ Հա-յաստանում, Բիթլիսի նահ-ում, Սա-սունի Հազգո-Նարլոզ գվիկ-ի Ջը-ման գ-ում: Գ-ի մյուս երկու եկե-ղեցիները կոչվում էին Ս Կիրակոս, Ս Մուրհանա:

ՄԱՆՅԱ, Маня, Manya - Ք ա - ռ ա յ ը - ս ը բ ա տ ե ղ ի Արմ Հա-յաստանում, էրզրումի նահ-ում, Սե-պուհ լ-ան վրա, տ Մանյա Այր:

ՄԱՆՅԱ ԱՅՐ, Маня Айр, Manya Ayt, Այրն Մանյա, Այրքն Մանյա, Լուսավորչի Գերեզման, Լուսավոր-չի Դամբարան, Մանիա Այր, Մանյա, Մանյա Այրք - Ք ա ռ ա յ ը - ս ը բ ա տ ե ղ ի Արմ Հայաստանում, էրզրումի նահ-ում, Կամախի բարձ-րավանդակի տարածքում, Սեպուհ լ-ան վրա, Ս Գրիգոր Լուսավորիչ վանքի մոտակայքում: Ըստ ավան-դությունի՝ այստեղ է գտնվել Հոփի-սիմյան կույսերից Մանե կույսի ճգնարանը, դրա համար էլ կոչվել է Մ Ա: Նույն ավանդության հա-մաձայն՝ իր գերություն տարիներին այստեղ է ճգնել նաև Գրիգոր Լու-սավորիչը (3-4-րդ դդ), որտեղ և վախճանվել ու թաղվել է հովիվների ձեռքով: Դրա համար այդ վայրը կոչվել է նաև Լուսավորչի Գերեզ-ման, Լուսավորչի Դամբարան:

ՄԱՆՅԱ ԱՅՐ, Маня Айр, Manya Ayt - Վ ա ն ք Արմ Հայաստանում, էրզրումի նահ-ի Երզնկայի գավ-ում, Սեպուհ լ-ան վրա, տ Ս Գրիգոր Լուսավորիչ:

ՄԱՆՅԱ ԱՅՐ ՍԵՊՀՈ, Маня Айр Сепхо, Manya Ayt Sepho - Վ ա ն ք Արմ Հայաստանում, էրզ-րումի նահ-ի Երզնկայի գավ-ում, Սեպուհ լ-ան վրա, տ Ս Գրիգոր Լուսավորիչ:

ՄԱՆՅԱ ԱՅՐՔ, Маня Айрк*, Manya Ayrk' - Վ ա ն ք Արմ Հա-յաստանում, էրզրումի նահ-ի Եր-զրնկայի գավ-ում, Սեպուհ լ-ան վրա, տ Ս Գրիգոր Լուսավորիչ:

ՄԱՆՅԱ ԱՅՐՔ, Маня Айрк*, Manya Ayrk' - Ք ա ռ ա յ ը - ս ը բ ա տ ե ղ ի Արմ Հայաստա-նում, էրզրումի նահ-ում, Սեպուհ լ-ան վրա, տ Մանյա Այր:

ՄԱՆՅԱ ՎԱՆՔ, Маня ванк*, Manya vank' - Վ ա ն ք Արմ Հա-յաստանում, էրզրումի նահ-ի Եր-զրնկայի գավ-ում, Սեպուհ լ-ան վրա, տ Ս Գրիգոր Լուսավորիչ:

ՄԱՆՅԱՅ ԱՅՐ, Маняц Айр, Manyac' Ayt - Վ ա ն ք Արմ Հա-յաստանում, էրզրումի նահ-ի Եր-զրնկայի գավ-ում, Սեպուհ լ-ան վրա, տ Ս Գրիգոր Լուսավորիչ:

ՄԱՆՅԱՅ ՎԱՆՔ, Маняц ванк*, Manyac' vank' - Վ ա ն ք Արմ Հա-յաստանում, էրզրումի նահ-ի Եր-զրնկայի գավ-ում, Սեպուհ լ-ան վրա, տ Ս Գրիգոր Լուսավորիչ:

ՄԱՆՍԵՎ, Манстев, Manstev - Վ ա ն ք (եկեղեցի) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող գ-ի մոտ, տ Մանասեի վանք:

ՄԱՆՍԵՎԻ ՎԱՆՔ, Манстеви ванк*, Manstevi vank', Մանասե, Մանասեֆ, Մանասեֆի մենաս-տան - Վ ա ն ք , ե կ ե ղ ե ց ի (մենաստան) Հայաստանի Հանրա-պետության Լոռու մարզի Շնող գ-ի մոտ, դրանից 4 կմ հը, Թեղուտ գ-ից հս, Շնող գետի ափին, Ձեկատար լ-ան ստորոտում, ձորակում: Կա-ռուցվել է 13-րդ դ-ում՝ սրբատաշ քարերով: Ձորի տարածքում կան միաբանների խցերի մնացորդներ և գերեզմաններ: Տանիքին կա խոյի զլխի քարե քանդակ:

ՄԱՆՍԵՑ, Манстеф, Manstef - Վ ա ն ք , ե կ ե ղ ե ց ի (մենաս-տան) Հայաստանի Հանրապետու-թյան Լոռու մարզի Շնող գ-ի մոտ:

Կառուցվել է 13-րդ դ. **տ Մանստեփ վանք:**

ՄԱՆՍԵՖԻ ՄԵՆԱՍԱՆ, Манс-тефи менастан, Manstefi menastan – **Վ ա ն ք , ե կ ե դ ե ց ի (մե-նաստան)** Հայաստանի Հանրապե-տությունից Լոռու մարզի Ծնող գ-ի մոտ: Կառուցվել է 13-րդ դ. **տ Մանստեփ վանք:**

ՄԱՆՎԵԼԻ ԱՆԱՊԱՏ, Манвели апат, Manveli anapat – **Վ ա ն ք , ա ն ա պ ա տ Մեծ Հայքի Այրա-րատ աշխ-ի Ոստան Հայոց գավ-ում, տ Մանվելի վանք:**

ՄԱՆՎԵԼԻ ՎԱՆՔ, Манвели ванк*, Manveli vank*, **Մանվելի անապատ – Վ ա ն ք , ա ն ա - պ ա տ Մեծ Հայքի Այրարատ աշխ-ի Մազազ գավ-ում (ըստ ձեռագրի՝ «... ի գաւառս Գառնոյ»), Այրիվան-քի մոտ: Ըստ մի ձեռագիր հիշատա-կության՝ 1429 թ այստեղ Գրիգոր վարդապետ գրիչը ընդօրինակել է Պատարագամատուց:**

ՄԱՆՏՈՒՌ, Мантур*, Mantur* – **Մ ա տ ու ու , ու խ տ ա տ ե դ ի ներկայիս Ադրբեջանի Հանրապե-տությունից Ծամխորի չրջ-ի Զար-դախլու գ-ի մոտ, տ Մատուռ:**

ՄԱՆՐԱՎԱՆՔ, Манраванк*, Manravank* – **Վ ա ն ք Արմ Հայաս-տանում, Բիթլիսի նահ-ում, Խլաթ ք-ի մոտակայքում:**

ՄԱՆՐԱՎԱՆՔ, Манраванк*, Manravank* – **Վ ա ն ք Արմ Հա-յաստանում, Բիթլիսի նահ-ի Մուշի գավ-ում, տ Մատրավանք:**

Ս ՄԱՆՈՒԿ, Св Манук, St Manuk – **Ս ր ք ա տ ե դ ի Հայաստա-նի Հանրապետության Գեղարքունի-քի մարզի Զոլաքար գ-ում: Անշուք շինություն է, ունի խաչքար: Տեղա-ցիների ասելով՝ կառուցվել է Լենկ-թեմուրի ժամանակ (14-րդ դ):**

Ս ՆՇԱՆ, ՇԵ ՀԻՄԱԽ, St Nšan, Ամարախն, Ամարային – Ե Կ Ե Ղ Ե Գ Ի ներկայիս Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Օրդուբադի շրջ-ի Ներքին Ագուլիս (Դաշտ) գ-ում, նրա հս-արմ թաղամասում: Կանգուն էր մինչև 1980-ական թթ: Կից է Ս Ստեփանոս եկեղեցուն: Մինչև 1980-ական թթ կանգուն էր: Ունի եռանավ բաղիլիկի հորինվածք: Դրա հր պատին կից կառուցված է Ս Երրորդություն եկեղեցին: Եկեղեցին ունի յոթանիստ ավազ խորան և ընդարձակ աղոթասրահ: Եկեղեցին պետք է կառուցված լինի 9-րդ դ, 17-րդ դ վերակառուցվել և վեր է ածվել բաց դահլիճ-եկեղեցու, որտեղ ծխապատարությունները կատարել են մեծ մասամբ ամուսնը, դրա համար էլ այն անվանել են նաև Ամարախն, Ամարային: Մինչև 20-րդ դ սկզբները պատերի վրա պահպանվում էին որոշ որմնանկարներ:

Ս ՆՇԱՆ, ՇԵ ՀԻՄԱԽ, St Nšan – Ե Կ Ե Ղ Ե Գ Ի – մ ա տ ու ո ն ներկայիս Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Օրդուբադի շրջ-ի Փառակա գ-ում: Այժմ ավերված է:

Ս ՆՇԱՆ, ՇԵ ՀԻՄԱԽ, St Nšan – Ե Կ Ե Ղ Ե Գ Ի պատմական Փոքր Հայքում, Արաբկիրի շրջ-ում, Ամբրկա գ-ում: Մինչև 1915 թ եկեղեցուն կից գործում էր վարժարան:

Ս ՆՇԱՆ, ՇԵ ՀԻՄԱԽ, St Nšan – Ե Կ Ե Ղ Ե Գ Ի պատմական Փոքր Հայքում, Սերաստիայի նահ-ում, Թոխաթի գավ-ի Պիծեռի գ-ի Ս Նչան վանքի համալիրում: Կառուցվել է 1278 թ: Կամարակապ, գմբեթավոր ու քանդակազարդ շինություն էր՝ նման Ավանին, Հոփսիմեին և Վարազա վանքին: Ներսի պատերն ու հատակը ծածկված են եղել գեղեցիկ խճանկարներով, իսկ պատերի մեջ չարված էին խաչքարեր:

Ս ՆՇԱՆ, ՇԵ ՀԻՄԱԽ, St Nšan – Ե Կ Ե Ղ Ե Գ Ի պատմական Փոքր Հայքում, Սերաստիայի նահ-ի Զիլե (Զելա) գ-ում: Մինչև 1915 թ եկեղեցուն կից գործում էր վարժարան:

Ս ՆՇԱՆ, ՇԵ ՀԻՄԱԽ, St Nšan – Ե Կ Ե Ղ Ե Գ Ի պատմական Փոքր Հայքում, Սերաստիայի նահ-ի Թոխաթ գ-ում:

Ս ՆՇԱՆ, ՇԵ ՀԻՄԱԽ, St Nšan –

Ե կ ե ղ ե ց ի պատմական Փոքր Հայքի Սեբաստիա ք-ում, **տ Սեբաստիայի Ս Նշան:**

Ս ՆՇԱՆ, **ՇԵ ՀՄԱԽ, St Nšan** – **Ե կ ե ղ ե ց ի** այժմյան Վրաստանի Հանրապետության Ախալցխա ք-ում: Քարաչեն է, ունի սրածև կաթողիկե:

Ս ՆՇԱՆ, **ՇԵ ՀՄԱԽ, St Nšan** – **Ե կ ե ղ ե ց ի** Փոքր Ասիայի Գաղատիա երկրի Գաղատիա ք-ում:

Ս ՆՇԱՆ, **ՇԵ ՀՄԱԽ, St Nšan** – **Մ ա տ ու ո** Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում, Բերդ ք-ից 3-4 կմ արմ, Ս Սարգիս մատուռի մոտ: Պատի վրա պահպանվել էր 1260 թ Հայերեն արձանագրություն:

Ս ՆՇԱՆ, **ՇԵ ՀՄԱԽ, St Nšan** – **Մ ե ն ա ս տ ա ն** պատմական Փոքր Հայքում, Սեբաստիա ք-ից Հս գտնվող Մարագում աղբյուրաչառ լ-ան մոտակայքում:

Ս ՆՇԱՆ, **ՇԵ ՀՄԱԽ, St Nšan** – **Վ ա ն ք Արմ** Հայաստանում, էրզրումի նահ-ում, Բարերդի գվոկ-ի Վարիջնա գ-ում, **տ Վարիջնայի Ս Նշան:**

Ս ՆՇԱՆ, **ՇԵ ՀՄԱԽ, St Nšan** – **Վ ա ն ք Արմ** Հայաստանում, Նարբերդի նահ-ի Նարբերդի գավ-ում, Ակնա գվոկ-ի Ապուչխի գ-ում:

Ս ՆՇԱՆ, **ՇԵ ՀՄԱԽ, St Nšan** – **Վ ա ն ք Արմ** Հայաստանում, Նարբերդի նահ-ում, Դերսիմի գավ-ի Աղտատ գ-ում: Ըստ ավանդության՝ կառուցվել է Հայոց Տրդատ 3-րդ թագավորի ջանքերով, որտեղ պատարագ է մատուցել Գրիգոր Լուսավորիչը: Ունեցել է դպրոց և գրադարան: Ասում են՝ վանքը մնացել է երկրաշարժից փրկված ժայռաքեկորի տակ:

Ս ՆՇԱՆ, **ՇԵ ՀՄԱԽ, St Nšan** – **Վ ա ն ք Արմ** Հայաստանում, Վանի նահ-ում, Արծկի գավ-ի Արծկե գ-ի մոտ, **տ Աքանչեղագործ Ս Նշան:**

Ս ՆՇԱՆ, **ՇԵ ՀՄԱԽ, St Nšan** – **Վ ա ն ք Արմ** Հայաստանում, Վանի նահ-ի Գավաշի գվոկ-ում, **տ Ջարահան Ս Նշան:**

Ս ՆՇԱՆ, **ՇԵ ՀՄԱԽ, St Nšan** – **Վ ա ն ք Արմ** Հայաստանում, Վանի նահ-ի Գավաշի գվոկ-ում, **տ Ջարահան Ս Նշան:**

Ս ՆՇԱՆ, **ՇԵ ՀՄԱԽ, St Nšan** – **Վ ա ն ք Արմ** Հայաստանում, Վանի նահ-ի Վանի գավ-ում, Մոկսի գվոկ-

ում, **տ Ապարանքի Ս Ուաչ:**

Ս ՆՇԱՆ, **ՇԵ ՀՄԱԽ, St Nšan** – **Վ ա ն ք Արմ** Հայաստանում, Վանի նահ-ում, Շատախի գվոկ-ի Նար գ-ի մոտ, **տ Նոսրովա Ս Նշան:**

Ս ՆՇԱՆ, **ՇԵ ՀՄԱԽ, St Nšan** – **Վ ա ն ք Արմ** Հայաստանում, Վանի նահ-ում, Վանի գավ-ում, Ոստան գ-ից Հր, Արտոս լ-ան ստորոտին:

Ս ՆՇԱՆ, **ՇԵ ՀՄԱԽ, St Nšan** – **Վ ա ն ք Արմ** Հայաստանում, Վան ք-ի մոտ, **տ Վարագավանք:**

Ս ՆՇԱՆ, **ՇԵ ՀՄԱԽ, St Nšan** – **Վ ա ն ք Արմ** Հայաստանում, Վան ք-ի մոտ, **տ Վարագ Վերին:**

Ս ՆՇԱՆ, **ՇԵ ՀՄԱԽ, St Nšan** – **Վ ա ն ք , մ ե ն ա ս տ ա ն** Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արորի գ-ի մոտ, **տ Սեղուի մենաստան:**

Ս ՆՇԱՆ, **ՇԵ ՀՄԱԽ, St Nšan** – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Հաղպատ գ-ում, **տ Հաղպատ:**

Ս ՆՇԱՆ, **ՇԵ ՀՄԱԽ, St Nšan** – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն գ-ի մոտ, **տ Հոռոմայր:**

Ս ՆՇԱՆ, **ՇԵ ՀՄԱԽ, St Nšan** – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում, Առինջ գ-ի մոտ, **տ Ջաղավանք:**

Ս ՆՇԱՆ, **ՇԵ ՀՄԱԽ, St Nšan** – **Վ ա ն ք Մեծ** Հայքի Բարձր Հայք աշխ-ում, Դարանաղի գավ-ի Մեծ Արմտան գ-ի մոտ: 20-րդ դ սկզբներին ավերված ու լքված էր:

Ս ՆՇԱՆ, **ՇԵ ՀՄԱԽ, St Nšan, Արեգակ Ս Նշան, Թորդանա վանք, Թորդանի Ինն Սրբոց Գերեզմանք, Թորդանի վանք, Թորթանու Ս Փռկիչ, Ինն Գերեզմանք, Ինն Սրբոց Գերեզմաններ, Ինն Սրբոց վանք, Ս Ուաչ, Ս Մինաս, Ս Նշանի վանք, Ս Փռկիչ** – **Վ ա ն ք Մեծ** Հայքի Բարձր Հայք աշխ-ում, Դարանաղի գավ-ի Թորդան ավանում: Ըստ ավանդության կառուցվել է 4-րդ դ, Գրիգոր Լուսավորչի նախաձեռնությամբ՝ մի հին հեթանոսական մեհյանի տեղում: Վանքի համալիրը ունեցել է ներքին ու արտաքին 2 տաճար՝ կառուցված քար ու կրաշաղախով: Ներքին տաճարը ունեցել է վեղարածև կաթողիկե և բեմ: Այստեղ, բեմի տակ թաղված են Հայոց Տրդատ Գ թագավորը (298-330), Աչ-

խեն թագուհին, թագավորի քույր Նոսրովիդուխտը և մի քանի նախարարներ: Հր կողմում, կամարի տակ ամփոփված են Վրթանեսի, Հուսիկի աճյունները (4-րդ դ), իսկ արմ կամարի տակ գտնվում էր Գրիգոր Լուսավորչի՝ մյուսներից մեծ ու գեղեցիկ գերեզմանը և այլ շիրմներ: Դրա համար էլ վանքը անվանվել է նաև Ինն Սրբոց Գերեզմանք:

Ս ՆՇԱՆ, **ՇԵ ՀՄԱԽ, St Nšan** – **Վ ա ն ք** ներկայիս Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Շահ-բուղի շրջ-ի Բաղամյու (Հնում՝ Օծոփ) գ-ում, **տ Օծոփի Ս Աստվածածին:**

Ս ՆՇԱՆ, **ՇԵ ՀՄԱԽ, St Nšan** – **Վ ա ն ք** (աննպատ, մենաստան) ներկայիս Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Օրգուբաղի շրջ-ի Բիստ գ-ի մոտ, **տ Բիստի Ս Նշան:**

Ս ՆՇԱՆ, **ՇԵ ՀՄԱԽ, St Nšan, Արեգակ Ս Նշան, Ս Ուաչ, Ս Ուաչի վանք, Ս Հոհան Ոսկեբերանի վանք, Ս Հովան Ոսկեբերան, Ս Հովհաննես Ոսկեբերան, Հովհաննու Ոսկեբերան, Հովհան Ոսկեբերան, Ս Հովհան Ոսկեբերանի վանք, Ս Նշանի վանք, Ոսկեբերանի վանք, Սեբաստիայի Ս Նշան** – **Վ ա ն ք** պատմական Փոքր Հայքում, Սեբաստիայի նահ-ում, Սեբաստիայից Հս-արմ, Համանուն գավ-ի Պիղեոփ (Մեյրեգում) գ-ում: Վանքը տեղադրված է Մարագում լ-ան փեշին, աղբերաչառ, ծաղկավետ ու զովասուն վայրում: Վանքը ճարտարապետական մեծ ու բարդ համալիր է, ուներ 3 գմբեթավոր, կամարակապ ու քանդակազարդ եկեղեցիներ՝ Ս Նշան, դրանից մի քիչ ավելի փոքր Ս Կարապետ (վերակառուցված 1857 թ) և Ս Աստվածածին անուններով: Դրանցից Ս Նշանը կառուցել է 1278 թ և հորինվածքով նման էր Ավանի Հոփուսիմեի, Վարագա վանքի տաճարներին: Այս շիրմությունների ներսի պատերն ու հատակը ծածկված են եղել գեղեցիկ խճանկարներով, իսկ պատերի մեջ, տեղ-տեղ շարված էին խաչքարեր: Վանքը, Արիստակես Լաստիվերցու (11-րդ դ) վկայությամբ, հիմնադրել է Վասպուրականի հայոց Սենեքերիմ թագավորի տղան՝ Ատոմը 1030-ական թթ: Համալիրն ունեցել է մեծ թվով օժանդակ չի-

նություններ՝ 24 սենյակ ուխտավորների համար, 12 սենյակ օժանդակ անձնակազմի համար, 8-սենյականոց հատուկ հյուրանոց, վանականների խուցեր, խոհանոց, մառան, պահեստամասեր, խանութներ: Տարածքում կային սառնորակ աղբյուրներ, գերեզմանոց: Վանքի հիմնական համալիրը շրջապատված էր ամրակուռ պարիսպներով: Ս Ն-ը երբեմն Սեբաստիայի Հայոց եկեղեցական թեմի կենտրոնն էր, ուներ հարուստ մատենադարան և Սանասարյան անունով վարժարան: Մինչև 1915 թ այստեղ պահպանվում էին 1201 թ Ղազար վարդապետի՝ Դարանաղի գավ-ի Ս Գրիգոր վանքում բնդօրինակած Ավետարանը, Սենեքերիմ թագավորի սենյակը և այլ հնություններ:

Ս Ն-ում թաղված է եղել Հայոց Պետրոս Գետադարձ կաթողիկոսը (1019-1058), որի աճյունը հետագայում փոխադրվել է Վան: Այստեղ են գտնվել նաև Արծրունիների նախարարական տոհմի մի քանի ներկայացուցիչների գերեզմանները և Հովհան Ոսկեբերանի տապանաքարը՝ բերված այլ վայրից: Գ. Սրվանձտյանի վկայությամբ՝ 19-րդ դ կեսերին **Ս Ն**-ը կանգուն ու անվթար էր, նրա նկատմամբ, որքան որ կարողանում էր, հոգ էր տանում ոմն տիկին Մարիցա: Պահպանվել են 14-17-րդ դդ այստեղ գրված հայերեն մի քանի ձեռագրեր: Վանքի մոտ գտնվում էր Անապատ անունով մենաստանը: **Ս Ն**-ի մասին արժեքավոր տեղեկություններ է թողել Սեբաստիայի առաջնորդ ու վանքի վանահայր Հովհաննես Սեբաստացին «Պատմություն փիճակին Սեբաստիո» գրքում: **Ս Ն**-ը ավերվել ու կողոպտվել է 1915 թ:

Ս ՆՇԱՆ, **Св Ншан**, **St Nšan** – **Ու խ տ ա տ ե ղ ի Արմ** Հայաստանի Կարին ք-ում:

Ս ՆՇԱՆ, **Св Ншан**, **St Nšan** – **Ու խ տ ա տ ե ղ ի** Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն գ-ի մոտ, նրա հը կողմում: Քարաչեն էր, ուներ մի քանի մատուռներ: Կառուցել է տվել Զաքարե ամիրսպասալար Զաքարյանը 13-րդ դ սկզբներին:

Ս ՆՇԱՆ, **Св Ншан**, **St Nšan** – **Ու խ տ ա տ ե ղ ի** Հայաստանի Հանրապետության Տավուշի մար-

զում, Կողբ գ-ի մոտ, դրա հը կողմում, բարձունքի վրա: Մոտը գտնվող խաչքարերից մեկի վրա կար հայերեն արձանագրություն:

Ս ՆՇԱՆԻ ՎԱՆՔ, **Св Ншани ванк**, **St Nšanı vank** – **Վ ա ն ք Արմ** Հայաստանում, էրզրումի նահ-ում, Բաբերդի գվոկ-ի Մալասա գ-ի մոտ, **տ Միլեզկի Ս Նչան**:

Ս ՆՇԱՆԻ ՎԱՆՔ, **Св Ншани ванк**, **St Nšanı vank** – **Վ ա ն ք , մ ե ն ա ս տ ա ն ն** Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Աքորի գ-ի մոտ, **տ Սեղուի մենաստան**:

Ս ՆՇԱՆԻ ՎԱՆՔ, **Св Ншани ванк**, **St Nšanı vank** – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում, Առինջ գ-ի մոտ, **տ Զազավանք**:

Ս ՆՇԱՆԻ ՎԱՆՔ, **Св Ншани ванк**, **St Nšanı vank** – **Վ ա ն ք Մեծ** Հայքի Բարձր Հայք աշխ-ում, Դարանաղի գավ-ի Թորղան ավանում, **տ Ս Նչան**:

Ս ՆՇԱՆԻ ՎԱՆՔ, **Св Ншани ванк**, **St Nšanı vank** – **Վ ա ն ք** պատմական Փոքր Հայքում, Սեբաստիայի նահ-ում, Թոխաթի գավ-ի Պիծեռի գ-ում, **տ Ս Նչան**:

Ս ՆՇԱՆԻ ՎԱՆՔ, **Св Ншани ванк**, **St Nšanı vank** – **Վ ա ն ք** պատմական Փոքր Հայքում, Սեբաստիայի նահ-ում, Շապին Գարահիսարի գավ-ի Աձպտեր գ-ի մոտ, **տ Կարմրակ Ս Նչան**:

Ս ՆՇԱՆ ՇՈՎՈՒՅ ՎԱՆՔ, **Св Ншан Шовуц ванк**, **St Nšan Covuc**՝ **Վ ա ն ք** Կիլիկիայում, Հրոտմկա բերդի մոտ, **տ Շովուց վանք**:

Ս ՆՇԱՆ ԿԱՅՏԵՆԻ, **Св Ншан Кайтени**, **St Nšan Kayteni** – **Վ ա ն ք , ե կ ե ղ ե ց ի** Կիլիկիայում, Մոլեոն գավ-ում, **տ Կայտենի Ս Նչան**:

Ս ՆՇԱՆ ԿՈՒՍԱՆԱՅ ԱՆԱՊԱՏ, **Св Ншан Кусанац анапат**, **St Nšan Kusanac**՝ **Վ ա ն ք** Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջ-ի Ավետարանոց գ-ում:

ՆՈՅ ՃԳՆԱՎՈՐԻ ՄԵՆԱՍՏԱՆ, **Ной Жгнavorи менастан**, **Ной Чгnavori menastan** – **Մ ե ն ա ս տ ա ն Մեծ** Հայքի Սյունիք աշխ-ում, հավանաբար Վայոց Ձոր գավ-ում, որտեղ հիշատակվում է Սուրբ Սիրոն անունով Է: Գտնվում էր Սուրբ Սիրոն լ-ան վրա: Հիշատակում է

Վարդան Արևելյին (13-րդ դ), ըստ որի՝ գոյություն է ունեցել մինչև 6-րդ դ կեսերը:

ՆՈՐԱԳՈՒՋ, **Норадуз**, **Noraduz** – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորատուս գ-ի մոտ, **տ Դափուց վանք**:

ՆՈՐԱԿՈՒՆՔ, **Норакунк**, **Norakunk**, **Նարակունք** – **Ե կ ե ղ ե ց ի** Ելիզավետպոլի նահ-ի Զանգեզուրի գավ-ի հին Գորիս գ-ում: Ժայռափոր կառույց է՝ կերտված 1628 թ:

ՆՈՐԱՄԱՆՈՒԿ, **Нораманук**, **Noramanyuk** – **Մ ա տ ու ո** Կարսի մարզի Կաղզվանի օկրուգի Նախիջևան գ-ում: Մյուս մատուռը կոչվում էր Ս Ուաչ: Սրանցից մեկում ամփոփված էր իշխան Արտավազդ Կամսարականի (8-րդ դ) գերեզմանը: Գ-ի եկեղեցին կոչվում էր Ս Ստեփանոս:

ՆՈՐԱՇԵՆ, **Норашен**, **Norashen** – **Վ ա ն ք** ներկայիս Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Զուլֆայի շրջ-ի Նորաչեն գ-ում: Հնում մտնում էր Մեծ Հայքի Սյունիք աշխ-ի Երնջակ գավ-ի մեջ, **տ Ս Աստվածածին**:

ՆՈՐԱՎԱՆ, **Нораван**, **Noravan** – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզում, Ամաղու գ-ի մոտ, **տ Նորավանք**:

ՆՈՐԱՎԱՆԻՅ ՎԱՆՔ, **Нораваниц ванк**, **Noravanic**՝ **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզում, Ամաղու գ-ի մոտ, **տ Նորավանք**:

ՆՈՐԱՎԱՆՍ, **Нораванс**, **Noravans** – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզում, Ամաղու գ-ի մոտ, **տ Նորավանք**:

ՆՈՐԱՎԱՆՅ, **Нораваниц**, **Noravanc**՝ – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզում, Ամաղու գ-ի մոտ, **տ Նորավանք**:

ՆՈՐԱՎԱՆՔ, **Нораванк**, **Noravank**, **Ամաղվա Նորավանք**, **Ամաղվա վանք**, **Ամաղու**, **Ամաղուի Նորավանք**, **Ամաղուի վանք**, **Ավագ անապատ**, **Նորաձոր**, **Նորաձոր անապատ**, **Ս Կարապետ**, **Կարմիր վանք**, **Ս Նախավկայի վանք**, **Նորավան**, **Նորավանից վանք**, **Նորավանս**, **Նորավանց**, **Նորավանք Ամաղուի** – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզում: Հնում մտնում էր Մեծ Հայքի

Սյունիք աշխ-ի Վայոց Ձոր գավ-ի մեջ: Վանքի համալիրը գտնվում է այժմյան Ամաղու գ-ի մոտ, Արփայի ձախակողմյան վտակ Ամաղու գետակի ձորում, դրա աջ ափին, բարձր քարաժայռի ստորոտի հարթակում: Հիմնադրման ճշգրիտ ժամանակը հայտնի չէ: 12-րդ դ-ից դրա մասին արդեն կան մի շարք հիշատակություններ: Միջին դդ ունեցել է բազում կալվածքներ և շարժական հարուստություն: Տարբեր ժամանակներում վանքին տրվել են 3 գ, մի բերդ, բազմաթիվ առանձին կալվածքներ: Եպիսկոպոսանիստ էր, դրա առաջնորդներն ու հոգևորական գործիչները պաշարել են Տաթևի վանքի դեմ՝ իրենց ինքնուրույնությունը պահպանելու համար: Վանքը հայտնի է բազմաթիվ հայերեն վիմագիր արձանագրություններով, որոնք հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում հոգևոր ու աշխարհիկ կյանքի անցուղարձերի մասին: Վանքի ճարտարապետական համալիրը ստեղծվել ու ամբողջական տեսք է ստացել 13-14-րդ դդ: 13-րդ դ վանքը Սյունիքի հոգևոր կենտրոնն էր, որտեղ գտնվում է նաև Օրբելյան հռչակավոր նախարարական տոհմի տապանատունը, որն ամփոփում է նշանավոր իշխանների և եպիսկոպոսների աճյունները: Այստեղ է գտնվում նաև նշանավոր պատմիչ Ստեփանոս Օրբելյանի (13-րդ դ) գերեզմանը: Ե-ը եղել է հայ մշակույթի հռչակավոր կենտրոն: 13-րդ դ կեսերին այս վանքում է գործել ճարտարապետ Սիրանեսը, 14-րդ դ առաջին կեսին՝ մանրանկարիչ, գրիչ, քանդակագործ և չնորհաչատ ճարտարապետ Մոմիկը՝ Գլաձորի հայտնի համալսարանի հայտնի շրջանավարտը: Այս վանքում է ապրել ու ստեղծագործել Սյունիքի Օրբելյան իշխանական տան ականավոր ներկայացուցիչ, պատմագիր Ստեփանոս Օրբելյանը: Նա այստեղ 1299 թ ավարտել է իր «Պատմութիւն նահանգին Սիսական» վերնագրով բարձրարժեք աշխատությունը, որը արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Սյունիքի, Կիլիկիայի, բովանդակ Հայաստանի և հարևան երկրների ու ժողովուրդների հասարակական-տնտեսական, մշակութային և քաղաքական կյանքի մասին:

Ն ճարտարապետական ու բարձրարվեստ մի համալիր է: Նրա մեջ մտնում են 11-12-րդ դդ կառուցված ս Կարապետ և Ս Փոկաս եկեղեցիները, գավիթը, Սմբատ Օրբելյան իշխանի դամբարանը, ուղղանկյուն հատակագծով թաղածածկ՝ դեռևս ոչ լրիվ ուսումնասիրված շենքը, Բուրթելաչեն կոչվող եկեղեցին, երկու մատուռներ, տարբեր կարգի զանազան շենքեր, շրջապարիսպը: Ձորամիջում, գետափին գտնվում է սառնորակ աղբյուր: Ս Կարապետ եկեղեցին կառուցել է Լիպարիտ Օրբելյան իշխանը 1213-1223 թթ: Այն ներքուստ քառաթև, գմբեթավոր կառույց է: Գմբեթը 1840 թ երկրաշարժից փլվել էր. ամբողջապես վերանորոգվել է 1989-1990 թթ: Եկեղեցուն արմ կողմից կցված է գավիթը, որը կառուցվել է եկեղեցու ավարտից հետո և մի քանի անգամ վերանորոգվել: 1261 թ այն վերակառուցել է Սիրանեսը՝ Սմբատ Օրբելյանի հանձնարարությամբ: Հաջորդ վերակառուցումը հավանաբար կատարել է ճարտարապետ Մոմիկը 14-րդ դ առաջին կեսերին: Վանքի համալիրում առանձնահատուկ տեղ ունի Բուրթել իշխանի դամբարան-եկեղեցին, որը հենց նրա անունով կոչվում է Բուրթելաչեն կամ Ս Աստվածածին: Այն ընդհանուր համալիրից անջատ է և գտնվում է ձորի եզրին: Ս Աստվածածինը Մոմիկի ճարտարապետական ստեղծագործության գլուխգործոցն է: Այս և մյուս շինությունների համար օգտագործված են վարդագույն և կաթնագույն-դեղնավուն ֆելզիտ քարատեսակներ: Բուրթելաչենը ոչ մեծ չափի սլացիկ տեսքով երկհարկանի մի հոյակապ շինություն է, ունի բարձրարվեստ քանդակներ: Ցավոք, եկեղեցու գմբեթը չի պահպանվել, սակայն առանց դրա էլ այս եկեղեցին վանքի ողջ համալիրի անսման զարդն է: Ե-ի եկեղեցիների լավագույն հարթաքանդակներից են գահին նստած Աստվածամայրը, Բուրթել իշխանը՝ տաճարի մանրակերտը ձեռքին և այլն: Կիսավեր վիճակում պահպանված շրջապարիսպը, ներսում ու դրսում գտնվող ամբողջապես փլված շենքերը կառուցված պետք է լինեն ավելի ուշ՝ 17-18-րդ դդ: 13-րդ դ վանքն ունեցել է

հյուրատուն: Համալիրի տարածքում կան խաչքարեր, որոնց մեջ առանձնապես չքեղ ու գեղեցիկ են Մոմիկի կերտածները: 1948-1949 թթ վերականգնվել են Բուրթելաչենի տանիքն ու պատերի վերին եզրաշարքը: Ե-ի վերանորոգումները չարունակվում են: Ե-ը մտնում է Հայաստանի Հանրապետության գրոսաշրջիկություն ուղեգծի մեջ: Այստեղ ամռանը ուխտի են գալիս մեծ թվով մարդիկ: Այժմ ամբողջովին վերանորոգված է:

ՆՈՐԱՎԱՆՔ ԱՄԱՂՈՒԻ, Нораванк* Амаг*уи, Noravank' Amagui - Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզում, Ամաղու գ-ի մոտ, տ Նորավանք:

ՆՈՐԱՎԱՆՔ ՄՅՈՒՍ, Нораванк* Мюс, Noravank' Myus - Վ ա ն ք Մեծ Հայքի Սյունիք աշխ-ի Վայոց Ձոր գավ-ում, տ Նորավանք Վերին:

ՆՈՐԱՎԱՆՔ ՎԵՐԻ, Нораванк* Веря, Noravank' Veri - Վ ա ն ք Մեծ Հայքի Սյունիք աշխ-ի Վայոց Ձոր գավ-ում, տ Նորավանք Վերին:

ՆՈՐԱՎԱՆՔ ՎԵՐԻՆ, Нораванк* Верин, Noravank' Verin, Նորավանք Մյուս, Նորավանք Վերի, Նորավանք Վերին - Վ ա ն ք Մեծ Հայքի Սյունիք աշխ-ի Վայոց Ձոր գավ-ում, Եղեգիս գետի հովտում: Ճշգրիտ տեղագրությունը հայտնի չէ: Ս. Բարխուդարյանը ենթադրաբար նույնացնում է այժմ Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս գ-ի մոտակայքում գտնվող ավերված վանքին, որն օտարները կոչում են Գյուլումբուլաղ: Հիշատակվում է, որ գտնվում էր Մյուս Նորավանք գ-ում: Ղ. Ալիչանը ենթադրում է, որ սա կա'մ Ամաղու գ-ի եկեղեցին է, կա'մ թե նրա մոտ գտնվող Նորավանք վանքի եկեղեցիներից մեկնումեկը, ինչն անընդունելի է: Միջին դդ եղել է հայ գրչության հայտնի կենտրոն, որտեղ ընդօրինակված ձեռագրերից հայտնի են մեկ Ավետարան, մեկ Մաշտոց և մեկ Տոնական՝ գրված 15-րդ դ 50-80-ական թթ:

ՆՈՐԱՏՈՒՍ, Норатус, Noratus - Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորաղուգ գ-ի մոտ, տ Դափուց վանք:

ՆՈՐԱՏՈՒՍԻ ՎԱՆՔ, Норатуси ванк*, Noratusi vank' - Վ ա ն ք

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորադուզ գ-ի մոտ, **տ Դափուց վանք:**

ՆՈՐԱՏՈՒՔ, Норагук*, Noratuk' – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորադուզ գ-ի մոտ, **տ Դափուց վանք:**

ՆՈՐԲԵՐԴ, Норберд, Norberd – **Վ ա ն ք , ա ն ա պ ա տ** Հայաստանում: Հիշատակում է Վարդան Արևելյցին (13-րդ դ.)՝ առանց ճշգրիտ տեղադրության: Եղև է հռչակավոր կրոնական հաստատություն:

ՆՈՐԳԵՂՎԱՎԱՆՔ, Норгегька ванк*, Norgeyka vank' – **Վ ա ն ք** Հայաստանում, Բարձր Հայքի Եկեղյաց (Երզնկա) գավ-ում: Համալիրում հիշատակվում է Ս Կիրակոս եկեղեցի:

ՆՈՐ ԳԵՏԻԿ, Нор Гетик, Nor Getik – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում, Գոչ գ-ում, **տ Գոչավանք:**

ՆՈՐ ԳԵՏԻԿԻ ՎԱՆՔ, Нор Гетика ванк*, Nor Getiki vank' – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում, Գոչ գ-ում, **տ Գոչավանք:**

ՆՈՐԳՅՈՒՏԱ ՎԱՆՔ, Норгюта ванк*, Norgyuta vank' – **Վ ա ն ք , Ե կ Ե ղ Ե ց Ի** ներկայիս Նախիջևանի ինքնավար Հանրապետության Օրդուբադի շրջ-ի Նուրգուլթ գ-ում, **տ Թարգմանչաց վանք:**

ՆՈՐԴՈՒԶ, Нордуз, Norduz – **Վ ա ն ք Արմ** Հայաստանում, Վանի նահ-ում, Հաքարիի գավ-ի Խոչարի գավ-ի տարածքում, Հոգյաց վանքի մոտակայքում: Կողպտվել ու ավերվել է 1895 թ հայկական կոտորածների ժամանակ:

ՆՈՐԵԼԱՄԻ ՎԱՆՔ, Нореладзи ванк*, Norelaci vank' – **Վ ա ն ք Արմ** Հայաստանում, Էրզրումի նահ-ում, Համանուն գավ-ի Խնուսի գավ-ի Արոս գ-ի մոտակայքում, Արջաձոր կամ Նորելածի ձոր կոչվող խոր ձորի հը կողմում, բարձր քարայրի մեջ: Նոր ժամանակներում հաճախ այստեղ էին ապաստանում հայ ֆիդայիները: Քարայրի մուտքը բարձր էր ու անմատչելի, դեպի այն բարձրանում էին մազցելով:

ՆՈՐԵԼՈՒԿ, Нореуук, Noreluk, Ուոեմու ծառաստան – **Ու խ տ ա տ Ե ղ Ի Արմ** Հայաստանում, Էրզրումի նահ-ում, Բայազետի գավ-ի

Ալաշկերտի գավ-ի Ամատ գ-ի մոտ, դրանից հս, ձորակի եզրին: Ենթադրվում է՝ ծառաստանի պաշտամունքը հեթանոսական շրջ-ի մնացուկ է:

ՆՈՐ ԵՐՈՒՍԱՂԵՄ, Нор Ерусаргем, Nor Erusayem – **Ե կ Ե ղ Ե ց Ի Մեծ** Հայքի Սյունիք աշխ-ում, Գյուտա վանքի համալիրում: Ստեփանոս Օրբելյանի (13-րդ դ.) վկայությամբ՝ կառուցել է Երիցակ ճգնավորը:

ՆՈՐՅԱՅ ՎԱՆՔ, Норяц ванк*, Noryac' vank' – **Վ ա ն ք Մեծ** Հայքի Սյունիք աշխ-ի Ծղուկ գավ-ում: Հավանաբար գտնվում էր Նորիք գ-ում:

ՆՈՐՇԻՆ, Норшин, Noršin, Նորչինա անապատ, – **Վ ա ն ք , ա ն ա պ ա տ Արմ** Հայաստանում, Բիթլիսի նահ-ի Խիղանի գավ-ում: Ոմանք այս անվան մեջ պահպանված են տեսնում Նոր Շիրական բղեջտության անունը և նույնիսկ վերջինս համարում են վանքի անվան ուղղակի տարբերակը: Միջին դդ եղև է հայ գրչության կենտրոն: 1390 թ Հովհաննես գրիչն այստեղ ընդօրինակել է Աստվածաշունչ:

ՆՈՐՇԻՆԱ ԱՆԱՊԱՏ, Норшина анапат, Noršina anapat – **Վ ա ն ք , ա ն ա պ ա տ Արմ** Հայաստանում, Բիթլիսի նահ-ի Խիղանի գավ-ում, **տ Նորչին:**

ՆՈՐՈՎԱՆՔ ՎԵՐԻՆ, Норованк* Верин, Norovank' Verin – **Վ ա ն ք Մեծ** Հայքի Սյունիք աշխ-ի Վայոց Ձոր գավ-ում, **տ Նորավանք Վերին:**

ՆՈՐՍԵՍ, Норсес, Norses – **Վ ա ն ք , ա ն ա պ ա տ Արմ** Հայաստանում, Խարբերդի նահ-ում, Ակնա գավ-ի Մուշեղկա գ-ում, **տ Նորսեսի անապատ:**

ՆՈՐՍԵՍԻ ԱՆԱՊԱՏ, Норсеси анапат, Norsesi anapat – **Վ ա ն ք , ա ն ա պ ա տ Արմ** Հայաստանում, Խարբերդի նահ-ում, Համանուն գավ-ի Ակնա գավ-ի Մուշեղկա գ-ի մոտ: Միջին դդ եղև է հայ գրչության կենտրոն: Սրոն գրիչը 1210 թ այստեղ ընդօրինակել է Հովհան Մայրավանեցու (7-րդ դ.) ճառերը: Գլխավոր եկեղեցին կոչվում է Ս Աստվածածին:

ՆՈՐ ՍՈՒՐԲ, Нор Сурб, Nor Surb – **Ե կ Ե ղ Ե ց Ի** Լեոնային Ղարաբադի Հանրապետության Մարտունու շրջ-ում, ՍպիտակաչինԱչան ճանապարհի ձախ կողմում:

Ենթադրում են, որ կառուցվել է Ջարդամարդ բլրի գագաթին վաղուց կառուցված և հետո ավերված եկեղեցու քարերով:

ՆՈՐՎԱՆՔ, Норванк*, Norvank' – **Վ ա ն ք** Հայաստանում: Տեղադրությունը՝ անորոշ: Հիշատակված է 1628 թ Հայերեն ձեռագրերից մեկի հիշատակարանում: Եկեղեցին կոչվում էր Ս Աստվածածին: Հմմտ Նորավանք:

ՆՈՐ ՎԱՐԱԳ, Нор Варат, Nor Varag – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում, Վարագավան գ-ի մոտ, **տ Նոր Վարագավանք:**

ՆՈՐ ՎԱՐԱԳՎԱՆՔ, Нор Вараванк*, Nor Varagavank', Անապատ, Նոր Վարագ, Վարագ, Վարագավանի Ս Նշան, Վարագավանք – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում, Վարագավան գ-ի մոտ, նրանից մոտ 2 կմ արմ, անտառապատ լ-նայանջի վրա: Հնում մտնում էր Մեծ Հայքի Ուտիք աշխ-ի Տուջքատակ (Տավուշ) գավ-ի մեջ: Հիմնադրել է Դավիթ իշխանը՝ 1193– 1198 թթ՝ կառուցելով վանքի հնագույն Անապատ եկեղեցին և տապանատունը: Վանքի մյուս եկեղեցին Ս Աստվածածինն է, որը կառուցվել է 1224–1237 թթ: Դրան արմ-ից կից է գավիթը՝ կառուցված 1237–1261 թթ: Համալիրն ունեցել է շրջապարիսպ, որից դուրս գտնվում է գերեզմանոցը: Վանքն ունեցել է ջրմուղ: Սկզբում կոչվել է հին եկեղեցու անունով՝ Անապատ, իսկ հետագայում, երբ Վասպուրականի Վարագա վանքի վանահայր Ղուկասը ջալալի հրոսակախմբերից հալածվելով, տեղափոխվել է այստեղ (1237 թ), վանքը վերանվանվել է Ն Վ:

ՆՌՆԵՆԻՅ ՁՈՐԻ Ս ՎԱՐԳԱՆԱՆՅ ՎԱՆՔ, Нр'нениц дзори Св Вардананц ванк*, Nr'nenic' jori St Vardananc' vank' – **Վ ա ն ք Արմ** Հայաստանում, Վանի նահ-ում, Մոկսի գավ-ի Նանենց գ-ի մոտ, **տ Ս Վարդան:**

ՆՌՆԵՆԻՅ Ս ՄԻՆԱՍ, Нр'нениц Св Минас, Nr'nenic' St Minas – **Վ ա ն ք Արմ** Հայաստանում, Վանի նահ-ում, Մոկսի գավ-ի Նանենց գ-ի մոտ, **տ Ս Վարդան:**

ՆՌՆԵՆԻՅ ՎԱՆՔ, Нр'нениц ванк*, Nr'nenic' vank' – **Վ ա ն ք**

Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Մոկսի գվոկ-ի նանենց գ-ի մոտ, **տ Ս Վարդան:**

ՆՌՆՈՆԻՅ ՎԱՆՔ, Нр*нониц ванк*, Nr'nonic' vank' - Վ ա ն ք Մեծ Հայքի Այրարատ աշխ-ում, **տ Նոնովնից վանք:**

ՆՌՆՈՎՆԻՅ ՎԱՆՔ, Нр*новниц ванк*, Nr'novnic' vank', **Նոնոնից վանք - Վ ա ն ք Մեծ Հայքի Այրարատ աշխ-ի Կոտայք գավ-ի Նոնունիս գ-ում (այժմ՝ Նոնունու գ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում):** Ճշգրիտ տեղագրությունը՝ անորոշ: 1303 թ այստեղ Թադևոս գրիչը ընդօրինակել է մեկ ձեռագիր:

ՆՈՒԽՈՒԴԻ ՎԱՆՔ, Нухуди ванк*, Nuxudi vank' - Վ ա ն ք Ելիզավետպոլի նահ-ի Զանգեզուրի գավ-ում, Մեղրու ոստիկանական շրջ-ում, **տ Ս Հովհաննես:**

ՆՈՒԽՈՒՏԻ Ս ՀՈՎՀԱՆՆԵՍ, Нухути Св hОваннес, Nuxuti St Hovhannes - Ու խ տ ա տ Ե դ ի Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում, Կարճևան գ-ի մոտակայքում, դրանից մի քանի կմ հս, լ-նայանջի վրա: Փոքրիկ կառույց է՝ կեսը ժայռափոր: Ծուրը կան սենյակների ավերակներ:

Շ

ՇԱԴԸ ՎԱՆՔ, Шады ванк*, Šadθ vank' - Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզում, **տ Շատանյա վանք:**

ՇԱԴԻ ՎԱՆՔ, Шади ванк*, Šadi vank' - Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզում, **տ Շատանյա վանք:**

ՇԱԹԻՆԱՅ ՎԱՆՔ, Шат*инац ванк*, Šatinac' vank' - Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզում, **տ Շատանյա վանք:**

ՇԱՆԿԱՆ, Шахках, Šaxkax - Վ ա ն ք Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Հաղրութ գ-ի մոտ, **տ Շախկախի վանք:**

ՇԱՆԿԱՆԱ Ս ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, Шахкаха Св Аствац'ац'ин, Šaxkaxa St Astvacacin - Վ ա ն ք Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Հաղ-

րութի շրջ-ի Վանք գ-ի մոտ, **տ Շախկախի վանք:**

ՇԱՆԿԱՆԻ ՎԱՆՔ, Шахкахи ванк*, Šaxkaxi vank', **Շախկախա Ս Աստվածածին - Վ ա ն ք Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Հաղրութի շրջ-ի Վանք գ-ի մոտ:** Կառուցվել է 17-րդ դ, որի համար օգտագործվել են 12-14-րդ դդ եկեղեցու սրբատաշ քարերն ու խաչքարերը: Համայնի եկեղեցին կոչվում է Ս Աստվածածին, որը միանավ բազիլիկ է: Եկեղեցու հս կողմում գտնվում է 1330 թ գեղեցիկ ամբողջական քարից կերտված խաչկալ կոչվող կոթողը:

ՇԱՆՈՐԱՅԻ Ս ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, Шахорайи Св Аствац'ац'ин, Šaxorayi St Astvacacin - Վ ա ն ք Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Կարճևանի գվոկ-ի Սմրոն գ-ում, **տ Շախուռա Ս Աստվածածին:**

ՇԱՆՈՐԱ Ս ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, Шахора Св Аствац'ац'ин, Šaxora St Astvacacin - Վ ա ն ք Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Կարճևանի գվոկ-ի Սմրոն գ-ում, **տ Շախուռա Ս Աստվածածին:**

ՇԱՆՈՒՌԱ Ս ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, Шахур*а Св Аствац'ац'ин, Šaxur'a St Astvacacin, **Շախորա Ս Աստվածածին, Շախորայի Ս Աստվածածին, Սքանչելագործի վանք - Վ ա ն ք Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, համանուն գավ-ի Կարճևանի գվոկ-ի Սմրոն գ-ում, գեղատեսիլ ու անտառապատ լ-նայանջին: Եկեղեցին գմբեթավոր էր: Ըստ ավանդության՝ Սքանչելագործի վանք է կոչվում նրա համար, որ այստեղ պահվում էր Հիսուսի «սքանչելագործ» տաշտակի մի կտորը: 19-րդ դ կեսերից ավերված ու լքված էր:**

ՇԱՀԱՆԴՈՒՆՏԻ ՄԱՏՈՒՌ, Шахандухти матур*, Šahanduxti matur', **Հարսնավաղ, Շահնդուխտ - Մ ա - տ ու ո Մեծ Հայքի Սյունիք աշխ-ի Ծղուկ գավ-ում, Տաթևի վանքի մոտակայքում: Ստեփանոս Օրբելյանը (13-րդ դ) հիշատակում է, որ գտնվում էր Տաթև-Բաղք ճանապարհին: Ըստ ավանդության՝ կառուցել է Շահնդուխտ օրիորդը և 30 տարի ճգնել այնտեղ:**

ՇԱՀԱՊԻՎԱՆ, Шаһапиван, Šaharivan, **Շահապիվանք - Վ ա ն ք Մեծ Հայքի Այրարատ աշխ-ի Ծաղկոտն գավ-ում: Գտնվում էր Զա-**

րեհավան ք-ից ոչ հեռու, Տատեոն (այժմ՝ Դիարդին) ավանի շրջակայքում: Վանքի մոտ էր գտնվում Շ ավանք: 5-րդ դ եղել է Հայաստանի մշակութային և եկեղեցական կարևոր կենտրոններից մեկը: Այստեղ 443 կամ 444 թթ գումարված հայոց եկեղեցական ժողովը կարևոր որոշումներ է ընդունել նաև այն ժամանակ Հայաստանում մեծ տարածում ունեցող մզկիթական աղանդավորների դեմ: Վանքը 7-րդ դ-ից հետո կորցրել է իր նշանակությունը:

ՇԱՀԱՊԻՎԱՆՔ, Шаһапиванк*, Šaharivan' - Վ ա ն ք Մեծ Հայքի Այրարատ աշխ-ի Ծաղկոտն գավ-ում, **տ Շահապիվան:**

ՇԱՀԱՊՈՆԻՅ Ս ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԾՆՆԴՅԱՆ ՎԱՆՔ, Шаһапониц Св Аствац'ац'ин п*нндян ванк*, Šaharonic' St Astvacacin cnndyan vank' - Վ ա ն ք այժմյան Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Շահրուզի շրջ-ում, Բյանդ Շահրուզ գ-ում (Շահապոնք), **տ Շահապոնքի Ս Աստվածածին:**

ՇԱՀԱՊՈՆԻՅ ՎԱՆՔ, Шаһапониц ванк*, Šaharonic' vank' - Վ ա ն ք այժմյան Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Շահրուզի շրջ-ում, Բյանդ Շահրուզ (Շահապոնք) գ-ում, **տ Շահապոնքի Ս Աստվածածին:**

ՇԱՀԱՊՈՆՔԻ Ս ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՎԱՆՔ, Шаһапонк'и Св Аствац'ац'ин ванк*, Šaharponk'i St Astvacacin vank', **Շահապոնից Ս Աստվածածին Ծննդյան վանք, Շահապոնից վանք - Վ ա ն ք այժմյան Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Շահրուզի շրջ-ում, Բյանդ Շահրուզ (Շահապոնք) գ-ում, Շահրուզ գետի ձախ կողմում, Շահապոնք հին բերդի մոտ: Հնում մտնում էր Մեծ Հայքի Սյունիք աշխ-ի ճահ-հուկ գավ-ի Շահապոնք գավ-ի մեջ: Ավերված է:**

ՇԱՀԲԵՔԱՐ, Шаһбек*ар, Šahbekar' - Վ ա ն ք Մեծ Հայքի Արցախ աշխ-ի Կողթ գավ-ում, **տ Աղջաղալա:**

ՇԱՀԶԱԴԱ, Шаһзада, Šahzada - Ս ր ք ա տ Ե դ ի Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջ-ի Բերդաձոր գ-ում, նրա հս-արլ կողմում, Պարին Պիժ սրբատեղիի մոտ:

ՇԱՀԿԱՆ, Шахках, Šahkax -

Ս ր ք ա տ ե ղ ի Լեոնային Ղարա-
բաղի Հանրապետության Հաղորդի
չրջ-ում, Շաղախ գ-ի մոտ, բարձ-
րադիր վայրում, **տ Շախկախի վանք:**

ՇԱՀՄՈՒՐԱԿ, Шাহмурад, Šah-
murad – Վ ա ն ք Հայաստանի
Հանրապետության Տավուշի չրջ-
ում, Ծաղկավան գ-ի մոտ, նրանից
մոտ 6 կմ հս-արմ, անտառապատ
ձորալանջի վրա: Կառուցվել է 12-րդ
դ, ունի գմբեթ, կանգուն է: Շուրջը
կան օժանդակ շինությունների փլա-
տակներ:

ՇԱՀՆԱԲԱԹ, Шахнабат*, Šah-
nabat', Շափնապատ – Ու խ տ ա -
տ ե ղ ի Մեծ Հայքի Գուգարք աշխ-
ի Մանգրյաց գավ-ում, Կուր գետի
հովտում, ներկայիս Վրաստանի
Հանրապետության Թեթրիժղարոյի
չրջանի Թելեթ (Թեղուտ) գ-ի մոտ:
Տեղադրված է բլրի վրա, ունի քա-
րաշեն փոքրիկ եկեղեցի Ս Գևորգ
անունով:

ՇԱՀՆԳՈՒՆԻՍ, Шахдуст, Šahn-
dux't – Մ ա տ ու ո Մեծ Հայքի
Սյունիք աշխ-ի Ծղուկ գավ-ում, **տ**
Շահանդուխտի մատուռ:

ՇԱՂԱԳԱ ՎԱՆՔ, Шаг'ага ванк*,
Šayaga vank' – Վ ա ն ք Հայաս-
տանի Հանրապետության Գեղար-
քունիքի մարզի Ձորագյուղ գ-ում, **տ**
Շողագավանք:

ՇԱՂԱԳՈՄՔԻ ՎԱՆՔ, Шаг'а-
гомк'и ванк*, Šayagomk'i vank',
Շաղգոմքի վանք – Վ ա ն ք (անա-
պատ) Մեծ Հայքի Բարձր Հայք աշխ-
ի Շաղագոմք գավ-ում: Տառերի
գյուտից հետո այստեղ Մեսրոպ
Մաշտոցը (5-րդ դ) բացել է հայա-
լիզու առաջին դպրոցներից մեկը:

ՇԱՂԱՏ, Шаг'ат, Šayat', Շաղա-
տա վանք, Շաղատի վանք, Շաղատո
վանք, Ս Ստեփանոս – Վ ա ն ք Մեծ
Հայքի Սյունիք աշխ-ի Ծղուկ գավ-
ում, իշխանանիստ Շաղատ գք-ում:
Ղ. Ալիշանը նույնացնում է Սյունի
վանքի հետ, ինչն անընդունելի է:
Մինչև Տավրի վանքի վեր բարձրա-
ցումը (9-րդ դ), Շ համարվում էր.

«Սյունյաց աշխ-ի մայր եկեղեցին»,
նրա կրոնական կենտրոնը և եպիս-
կոպոսանիստ հաստատությունը (4-
8-րդ դդ): 4-րդ դ 2-րդ կեսին պար-
սից թագավոր Շապուհ 2-րդի Հա-
յաստան կատարած արշավանքի
ժամանակ Անդոզի իշխանը Սյունիքի
գանձերը հավաքել էր Շ-ի տա-
ճարում և այն ծածկել հողե բլուրով:

Նույն դ վերջերին նրա որդի Բաբելը
բացել է տաճարը և վերականգնել
այն: Ստեփանոս Օրբելյանի (13-րդ
դ) նկարագրության համաձայն՝ այն
քարաշեն, գմբեթավոր շինություն
էր: Շ-ում էր գտնվում հռչակավոր
ճեմարան-վարդապետարանը, որը
հիմնադրվել էր 5-րդ դ-ում, Մեսրոպ
Մաշտոցի և Սահակ Պարթևի ժա-
մանակ: 5-7-րդ դդ-ում հիշա-
տակվում են այստեղ ուսում ստա-
ցած վարդապետներ ու քերթողներ
Պետրոսը, Վրթանեսը, Թեոդորոսը,
Ստեփանոս եպիսկոպոսը (8-րդ դ) և
ուրիշներ: 839 թ Շ-ից վարդապե-
տարանը փոխադրվել է Տավրի
վանքը, որից հետո Շ-ը աստիճանա-
բար կորցնում է իր նշանակու-
թյունը:

ՇԱՂԱՏԱ Ս ԳՐԻԳՈՐ, Шаг'ата
Св Григор, Šayata St Grigor –
Ե կ ե ղ ե ց ի Հայաստանի Հանրա-
պետության Սյունիքի մարզում Շա-
ղատ գ-ի մոտ: Հնում Մեծ Հայքի
Սյունիք աշխ-ի Ծղուկ գավ-ի կազ-
մում: Ունի զանգակատուն, բակում
պահպանվել են գերեզմանաքարեր:
Հիշատակված է 15-րդ դ ձեռագ-
րական հիշատակարաններից մեկում,
Բերդու Ս Գրիգոր և Քեթովանից Ս
Գրիգոր եկեղեցիների հետ միասին:

ՇԱՂԱՏԱ ՎԱՆՔ, Шаг'ата ванк*,
Šayata vank' – Վ ա ն ք Մեծ Հայքի
Սյունիք աշխ-ի Ծղուկ գավ-ի
Շաղատ գք-ում, **տ Շաղատ:**

ՇԱՂԱՏԻ ՎԱՆՔ, Шаг'ати ванк*,
Šayati vank' – Վ ա ն ք Մեծ Հայքի
Սյունիք աշխ-ի Ծղուկ գավ-ի Շա-
ղատ գք-ում, **տ Շաղատ:**

ՇԱՂԱՏՈ ՎԱՆՔ, Шаг'ато ванк*,
Šayato vank' – Վ ա ն ք Մեծ Հայքի
Սյունիք աշխ-ի Ծղուկ գավ-ի Շա-
ղատ գք-ում, **տ Շաղատ:**

ՇԱՂԳՈՄՔԻ ՎԱՆՔ, Шаг'гомк'и
ванк*, Šaygomk'i vank' – Վ ա ն ք
(անապատ) Մեծ Հայքի Բարձր Հայք
աշխ-ի Շաղագոմք գավ-ում, **տ Շա-
ղագոմքի վանք:**

ՇԱՂԻՏԱ ԵՎ ԵՊԻՓԱՆՅԱ, Ша-
г'ита ев Епип'аня, Šayita ev
Epir'anya – Վ ա ն ք Արմ Հայաս-
տանում, Բիթլիսի նահ-ում, Մուշի
գավ-ի Հացիկ գ-ի մոտ:

ՇԱՂՎԱԳԱՀ ՎԱՆՔ, Шаг'варահ
ванк*, Šayvagah vank' – Վ ա ն ք
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզի Ձորագյուղ
գ-ում, **տ Շողագավանք:**

ՇԱՂՎԱԳԱ ՎԱՆՔ, Шаг'вара
ванк*, Šayvaga vank' – Վ ա ն ք
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզի Ձորագյուղ
գ-ում, **տ Շողագավանք:**

Ս ՇԱՄԱՄ, Св Шамам, St Ša-
mam – Ու խ տ ա տ ե ղ ի Արմ Հա-
յաստանում, Խարբերդի նահ-ում,
Ակնի գվուկ-ի Այվեր գ-ում:

Ս ՇԱՄԱՄ, Св Шамам, St Ša-
mam – Ու խ տ ա տ ե ղ ի Արմ Հա-
յաստանում, Խարբերդի նահ-ում,
համանուն գավ-ի Ակնա գվուկ-ի
Նարվեր գ-ում:

Ս ՇԱՄԱՆԻԿ, Св Шаманик, St
Šamanik – Ե կ ե ղ ե ց ի Արմ Հա-
յաստանում, Բիթլիսի նահ-ում,
Սղերդի գավ-ի Խարգան գվուկ-ի
Սղունդ գ-ում: Գ-ի մյուս եկեղեցին
կոչվում էր Ս Հակոբ:

ՇԱՄԲԻ ՁՈՐԱԳԵՂԻ ՎԱՆՔ,
Шамби Дзорег'и ванк*, Šambi
Jorageyi vank' – Վ ա ն ք Պարսկա-
հայաստանում, Մակվի խանության
Դարաշամրի գավ-ում, **տ Դարա-
շամրի Ս Ստեփանոս Նախավկա:**

ՇԱՄԲԻՁՈՐԻ ՎԱՆՔ, Шам-
бидзори ванк*, Šambijori vank' –
Վ ա ն ք Պարսկահայաստանում,
Մակվի խանության Դարաշամրի
գավ-ում, **տ Դարաշամրի Ս Ստե-
փանոս Նախավկա:**

ՇԱՄԲԻ ՆԱԽԱՎԿԱՅԻ ՎԱՆՔ,
Шамби Нахавкайи ванк*, Šambi
Naxavkayi vank' – Վ ա ն ք Պարս-
կահայաստանում, Մակվի խանու-
թյան Դարաշամրի գավ-ում, **տ Դա-
րաշամրի Ս Ստեփանոս Նախավկա:**

ՇԱՄԲԻ Ս ՆԱԽԱՎԿԱՅԻ ՎԱՆՔ,
Шамби Св Нахавкайи ванк*, Šambi
St Naxavkayi vank' – Վ ա ն ք
Պարսկահայաստանում, Մակվի խա-
նության Դարաշամրի գավ-ում, **տ**
**Դարաշամրի Ս Ստեփանոս Նա-
խավկա:**

ՇԱՄԲԻ ՎԱՆՔ, Шамби ванк*,
Šambi vank' – Վ ա ն ք Պարս-
կահայաստանում, Մակվի խանու-
թյան Դարաշամրի գավ-ում, **տ Դա-
րաշամրի Ս Ստեփանոս Նախավկա:**

ՇԱՄԻՐԱՇԵՆ ՔԱՂԱՔԻ ԽԱՉԻ
ԱՆԱՊԱՏ, Шамирашен к'ар'ак'и
Хачи анапат, Šamirašen k' ayak' i
Xaci anapat – Վ ա ն ք Հայաստա-
նում, Վան (Շամիրամաշեն), **տ Ս**
Ուաչ վանք:

Ս ՇԱՄՈՒՆԵ, Св Шамуне, St Ša-
mune – Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաս-

տանում, Խարբերդի նահ-ում, համանուն գավ-ի Չարսանջակի գվոկ-ի Բերդակ գ-ում: Կոչվում էր նաև Ս Շմավոն: Մինչև 20-րդ դ սկզբները կանգուն էր:

ՇԱՄՔՈՐ, Шамк'ор, Šamk'or, **Շամքորա անապատ** – Ա ն ա պ ա տ Մեծ Հայքի Ուտիք աշխ-ում, Շամքորի գավ-ի, Շամքոր գք-ում: Հիշատակում է 17-րդ դ գրիչ Սարգիս բանասերը, որը այստեղ 1635 թ ընդօրինակել է Պողոս Առաքյալի թուղթը:

ՇԱՄՔՈՐՈՒ ԱՆԱՊԱՏ, Шамк'ору анапат, Šamk'oru anapat – Ա ն ա պ ա տ Մեծ Հայքի Արցախ աշխ-ի, Շամքորի գվոկ-ում, Շամքոր գք-ում, **տ Շամքոր:**

ՇԱՆԳԵՐԼԻ, Шангерли, Šangerli – Վ ա ն ք Մեծ Հայքի Տուրուբերան աշխ-ի Տարոն գավ-ում, **տ Ս Կարապետ:**

ՇԱՊՈ ՎԱՆՔ, Шапо ванк', Šapho vank' – Վ ա ն ք Հայաստանում, տեղադրությունը՝ անորոշ: Հիշատակվում է Վահանավանքի հետ միասին: Հավանաբար գտնվում էր Սոթք գավ-ում, և անունը հավանաբար կապված է Շապուհաթաղ գ-ի անվան հետ:

ՇԱՏԱՆՅԱ ՎԱՆՔ, Шатаня ванк', Šatanya vank', **Շադը վանք, Շադի վանք, Շաթինաց վանք, Շատիկ, Շատիկա վանք, Շատիկո անապատ, Շատիկո վանք, Շատին, Շատինա վանք, Շատինաց վանք, Շատինի վանք, Շատինո վանք, Շատին վանք, Շատինու վանք, Շատի վանք** – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզում Շատին գ-ի մոտ, նրանից մոտ 4 կմ արլ, լ-նալանջի վրա: Հնում մտնում էր Մեծ Հայքի Սյունիք աշխ-ի Վայոց Ձոր գավ-ի մեջ: Հիշատակում են Ստեփանոս Ասողիկը (10-րդ դ) և Ստեփանոս Օրբելյանը (13-րդ դ)՝ Սյունիքի առավել նշանավոր վանքերի շարքում: Հիմնադրվել է 929 թ: Միջին դդ եղել է Հայ գրչության նշանավոր կենտրոն: Այժմ կանգուն է վանքի Ս Սրոն եկեղեցին, որը բաղիլիկ կառույց է և հիմնովին վերանորոգվել է 1665 թ: Սրա արմ կողմում գտնվում է ավերված, փոքրիկ գավիթը: Վանքի համալիրը չըջապատված է եղել պաշտպանական պարիսպներով, որոնց հետքերը պահպանվել են:

Պահպանվել են նաև այլ կառույցների փրատակները: Ունեցել է գերեզմանատուն, ջրաղաց, ձիթհանք: Այստեղ է թաղվել Առաքել Սյունեցին: Վանքը հարատևել է երկար ժամանակ, 17-րդ դ այն ունեցել է 90 հոգուց բաղկացած միաբանություն: Այստեղ պահպանվել են 30-ավելի հայերեն վիմագիր արձանագրություններ: Ոմանք այստեղ են տեղադրում Գլաձորի հայտնի համալսարանը:

ՇԱՏԱՔԻ ՎԱՆՔ, Шатак'и ванк', Šatak'i vank' – Ե կ ե դ ե – ց ի , վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարց գ-ում: Կառուցվել է 1255 թ Դանիել վանականի պատվերով:

ՇԱՏԲԵՐԴ, Шатберд, Šatberd – Ե կ ե դ ե ց ի (վա՞նք) Մեծ Հայքի Գուգարք աշխ-ի Կղարջք գավ-ում, հետագայի Բաթումի մարզի Արգվինի օկրուգի Փորթա գ-ի տարածքում, հնագույն Շատերդում: Միջին դդ եղել է Հայ գրչության կենտրոն: Արաբական նվաճումների ժամանակ (7-9-րդ դդ) ավերվել է, հետո վերանորոգվել ու դարձվել է քաղկեդոնական վանք:

ՇԱՏԻԿ, Шатик, Šatik – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզում, **տ Շատանյա վանք:**

ՇԱՏԻԿԱ ՎԱՆՔ, Шатика ванк', Šatika vank' – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզում, **տ Շատանյա վանք:**

ՇԱՏԻԿՈ ԱՆԱՊԱՏ, Шатико анапат, Šatiko anapat – Վ ա ն ք Հայաստանի Վայոց Ձորի մարզում, **տ Շատանյա վանք:**

ՇԱՏԻԿՈ ՎԱՆՔ, Шатико ванк', Šatiko vank' – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզում, **տ Շատանյա վանք:**

ՇԱՏԻՆ, Шатин, Šatin – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզում, **տ Շատանյա վանք:**

ՇԱՏԻՆԱ ՎԱՆՔ, Шатина ванк', Šatina vank' – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզում, **տ Շատանյա վանք:**

ՇԱՏԻՆԱՅ ՎԱՆՔ, Шатинац ванк', Šatinac' vank' – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզում, **տ Շատանյա վանք:**

ՇԱՏԻՆԻ ՎԱՆՔ, Шатини ванк', Šatini vank' – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզում, **տ Շատանյա վանք:**

ՇԱՏԻՆՈ ՎԱՆՔ, Шатино ванк', Šatino vank' – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզում, **տ Շատանյա վանք:**

ՇԱՏԻՆ ՎԱՆՔ, Шатин ванк', Šatin vank' – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզում, **տ Շատանյա վանք:**

ՇԱՏԻՆՈՒ ՎԱՆՔ, Шатину ванк', Šatinu vank' – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզում, **տ Շատանյա վանք:**

ՇԱՏԻ ՎԱՆՔ, Шати ванк', Šati vank' – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզում, **տ Շատանյա վանք:**

ՇԱՐՈՒՋ, Шаруз, Šaruz – Ու խ տ ա տ ե դ ի Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ գ-ում, Փամբակ գետի ափին:

ՇԱՓԻՐԻՆ, Шап'ирин, Šap'irin, **Շափիրի վանք, Շուքրին** – Վ ա ն ք Կիլիկիայում, Սև լեռների չըջ-ում: Աշխարհագրական ճշգրիտ տեղադրությունը՝ անորոշ: Այստեղ է կրթություն ստացել ու ստեղծագործել Հայ մշակույթի գործիչ Իգնատիոս Սևկեռեցին:

ՇԱՓԻՐԻ ՎԱՆՔ, Шап'ири ванк', Šap'iri vank' – Վ ա ն ք Կիլիկիայում, **տ Շափիրին:**

ՇԱՔԵԻ ՎԱՆՔ, Шак'еи ванк', Šak'ei vank', **Շաքեո վանք** – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շաքի (պատմական՝ Շաքե) գ-ի մոտ: Հնում մտնում էր Մեծ Հայքի Սյունիք աշխ-ի Ծղուկ գավ-ի մեջ: Եկեղեցին ունի կեղծ սյուներ ու կամարներ: Այստեղ կա 2-մետրանոց խաչարձան, կողքին՝ մի խարխուլ մատուռ: Դռան հայերեն վիմագիր արձանագրության համաձայն՝ վանքը կառուցվել է 1626 թ, սակայն գոյություն է ունեցել ավելի վաղ:

ՇԱՔԵՈ ՎԱՆՔ, Шак'ео ванк', Šak'eo vank' – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շաքի գ-ի մոտ, **տ Շաքեի վանք:**

ՇԱՔՎԱ ՎԱՆՔ, Шак'ва ванк', Šak'va vank' – Վ ա ն ք Մեծ Հայքի Սյունիք աշխ-ի Հարանդ գավ-ում:

Հիշատակում են արարական աղբյուրները: Հմմտ **Շաքիի վանք**:

ՇԱՔՐԻՆ, Шак'рин, Šak'rin – **Վ ա ն ք** Կիրիկայում, **տ Շափիրին**:

Շեխերի ՎԱՆՔ, Шехери ванк*, Šexeri vank' – **Վ ա ն ք** Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջ-ում, Շեխեր գ-ը տանող ճանապարհի ծայրին բարձրադիր սարավանդի վրա: **Արմ** կողմում սենյակներ հիշեցնող քարուկրից կառուցված մի շինություն, որը կարող է պատկանում էր վանքին:

ՇեխիՍ, Шехис, Šexis – **Վ ա ն ք** **Արմ** Հայաստանում, Բիթլիսի նահ-ի Բիթլիս ք-ում, **տ Շեխիսի վանք**:

ՇեխիՍի ՎԱՆՔ, Шехиси ванк*, Šexisi vank' – **Վ ա ն ք** **Արմ** Հայաստանում, Բիթլիսի նահ-ի Բիթլիս ք-ում: 20-րդ դ սկզբներին արդեն խառն անհետացող ավերակների մեջ երևում էին միայն մի քանի շիրիմներ:

Ս Շեկ Ավետարան, Св Шек Аветаран, St Šek Avetaran – **Ե կ ե ղ ե ց ի Արմ** Հայաստանում, Մուշ ք-ում, **տ Շեկ Ավետարան**:

Շեկ Ավետարան, Шек Аветаран, Šek Avetaran, **Կոյղ Բեղավինդ**, Ս Շեկ Ավետարան – **Ե կ ե ղ ե ց ի Արմ** Հայաստանում, Մուշ ք-ում, Ձորի թաղում: 1862 թ եկեղեցուն կից կառուցվել էր Հայոց վարժարանի շինք:

ՇեղՂԱՐ, Шер'дар, Šeydar – **Ու խ տ ա տ ե ղ ի Արմ** Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Սասունի Փսանք գվոկ-ի Բվի գ-ում:

Շեյն ՅՈՒՄԵՐ, Шейх Юмер, Šeyx Yumer, **Շեյն Օմար** – **Վ ա ն ք** (մենաստան) **Արմ** Հայաստանում, Դիարբեքրի նահ-ում, Հազգո (Հզու) գք-ի մոտ: Քրդերը այդպես էին անվանում Կոնոնոսի վանքը (տ):

Շեն Ս ԱՏՈՄ, Шен Св Атом, Šen St Atom – **Ու խ տ ա տ ե ղ ի Արմ** Հայաստանում, Վանի նահ-ում, Թիմարի գվոկ-ի Կյուսեննց գ-ում:

ՇենՆԵՐ, Шенгер, Šenher – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շինուհայր գ-ի մոտ, **տ Շնհերի Ս Աստվածածին**:

ՇենՆԵՐՈՒ ԱՆԱՊԱՏ, Шенгеру анапат, Šenheru anapat – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության

Սյունիքի մարզի Շինուհայր գ-ի մոտ, **տ Շնհերի Ս Աստվածածին**:

ՇՆՄԵՐՔԱՅԻ ՎԱՆՔ, Шымыр-Т'айи ванк*, Šəmərt'ayi vank' – **Վ ա ն ք** Մեծ Հայքի Սյունիք աշխարհի ճահուկ գավ-ում: Հիշատակում են միջնադարյան արարական հեղինակները:

ՇԻԿԱՔԱՐ, Шикак'ар, Šikak'ar – **Վ ա ն ք** Մեծ Հայքի Արցախ աշխ-ի Նաչնե գավ-ում: Հիշատակում է ոմն Վանական՝ 10-րդ դ: Գտնվում էր Շիկաքարի բերդում (կոչվել է նաև Քարազուխ):

Ս ՇԻՄՈՆԻ ԵԿԵՂԵՑԻ, Св Шимони екег'еця, St Šimoni ekeγec' – **Ե կ ե ղ ե ց ի**, ս ր ք ա ր ա ն Մեծ Հայքի Սյունիք աշխ-ում, Հավանար Գեղարքունիք գավ-ում:

ՇԻՆԱՀԵՐ, Шинагер, Šinaher – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շինուհայր գ-ի մոտ, **տ Շնհերի Ս Աստվածածին**:

ՇԻՆԱՏԵՂԻ, Шинатер'я, Šinateγi – **Վ ա ն ք** Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Հաղրութ ք-ի մոտ:

ՇԻՆԴՆԻ, Шинд'ни, Šind'ni – **Ե կ ե ղ ե ց ի** Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ճակատեն գ-ում: Պահպանվել են միայն շինության պատերը:

ՇԻՆԻՋՈՐԻ ՎԱՆՔ, Шинидзори ванк*, Šinijori vank' – **Վ ա ն ք** **Արմ** Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Խիզանի գվոկ-ի Շինիձոր գ-ում, **տ Շինիձորու Ս Նաչավանք**:

ՇԻՆԻՋՈՐՈՒ Ս ՆԱԶՎԱՆՔ, Шинидзору Св Хачванк*, Šinijoru St Xac'vank', **Նաչի վանք**, Ս Նաչի վանք, **Նիզանի Ս Նաչ**, **Հիզանու Ս Նաչ**, **Շինիձորի վանք**, Ս Կանանց վանք – **Վ ա ն ք** **Արմ** Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Համանուն գավ-ի Նիզանի գվոկ-ի Շինիձոր (Շենաձոր) գ-ավանքում, նրա արլ կողմում: Հնում մտնում էր Մոկր աշխ-ի մյուս Իշայր գավ-ի մեջ: Վանքի համալիրը տեղադրված է անտառապատ լ-ան գագաթին: Եկեղեցին ուներ 3 խորան, 2 վերնատուն, 5 գեղեցիկ լուսամուտներով սյացիկ գմբեթ: Ուներ շրջապարիսպ, որից դուրս նույնպես կային այլևայլ նպատակների համար կառուցված շինություններ: 19-րդ դ

վերջերին և 20-ի սկզբներին շենքերից մի քանիսը դարձվել էր որբանոց: Ըստ ավանդության՝ հիմնադրել է Գրիգոր Լուսավորիչը (3-4-րդ դդ): Միջին դդ Շ Ս Ն վանքը եղել է հայ գրչության կենտրոն. պահպանվել են այստեղ գրված ավետարաններ, քարոզգրքեր: Ուներ ընդարձակ կալվածքներ: Վանքը կողոպտվել և ավերվել է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914-1918):

ՇԻՆՈՒՀԱՅՐ, Шинухайр, Šinuhayr – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շինուհայր գ-ի մոտ, **տ Շնհերի Ս Աստվածածին**:

ՇԻՆՈՒՀԱՅՐԻ ԿՈՒՍԱՆԱՑ ԱՆԱՊԱՏ, Шинухайри Кусанац анапат, Šinuhayri Kusanac' anapat – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շինուհայր գ-ի մոտ, **տ Շնհերի Ս Աստվածածին**:

ՇԻՆՈՒ ՍԱՐԿԱՎԱԳ, Шину Саркаваг, Šinu Sarkavag – Մ ա տ ու ո Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող գ-ի մոտակայքում, **տ Շինու սարկավագի մատուռ**:

ՇԻՆՈՒ ՍԱՐԿԱՎԱԳԻ ՄԱՏՈՒՌ, Шину Саркаваги матур*, Šinu Sarkavagi matur' – Մ ա տ ու ո Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող գ-ի մոտակայքում: Ավերակ է: Տարածքում գտնվում է մի հին, ոմն սարկավագի գերեզմանը:

ՇԻՇՅՈՒՂՈ ՎԱՆՔ, Шижюг'о ванк*, Šišyugo vank' – **Վ ա ն ք** **Արմ** Հայաստանում, Բիթլիսի նահ-ի Մուշի գավ-ում, **տ Եղրդուտի Ս Հովհաննես**:

ՇԻՐԻՍՔ, Ширимк*, Širimk', **Շիրմանց վանք** – **Վ ա ն ք** Մեծ Հայքի Այրարատ աշխ-ի Արշարունիք գավ-ում, նրա արմ կողմում, Արաքս գետի ձախակողմյան շրջ-ում, Շիրմք գ-ի մոտ: Կառուցել է Կարսի Աբաս Բագրատունի թագավորը 984-989 թթ և շրջապատել քառանկյունի պարիսպներով: Վանքին կից գործել է ուսումնարան:

ՇԻՐԻՆԻ ՎԱՆՔ, Ширини ванк*, Širini vank' – **Վ ա ն ք** **Արմ** Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Սպարկերտ գվոկ-ի Շիրնից կամ Շիրին գ-ի մոտ, **տ Շիրնից Ս Գևորգ**:

ՇԻՐԻՆԻՑ Ս ԳԵՎՈՐԳ, Шириниц Св Геворг, Širinic' St Gevorg, Ս ԳԼՈՐԳ, ՇԻՐԻՆԻ վանք, ՇԻՐԻՆԻց վանք, ՇԻՐԻՆԻցի Ս ԳԼՈՐԳ, ՇԻՐԻՆԻց Ս ԳԼՈՐԳԻ վանք, ՇԻՐԻՆԻց Ս ՍԿԱՎԱՌԱԿ, ՇԻՐԻՆԻց վանք, Ս ՍԿԱՎԱՌԱԿ, ՍԿԱՎԱՌԱԿԱ ՇԻՐԻՆԻց Ս ԳԼՈՐԳ, ՍԿԱՎԱՌԱԿԻ Ս ԳԼՈՐԳ, ՍԿԱՎԱՌԱԿԻ վանք, ՍԿԱՎԱՌԱԿԱ ՇԻՐԻՆԻց Ս ԳԼՈՐԳ – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Համանուն գավ-ի Խիզանի գվոկ-ում, Սպարկերտի գ-ախմբի Շիրնից գ-ի մոտ: Վանքը տեղադրված էր սարավանդի վրա: Եկեղեցին հոյակապ շինություն էր, ուներ մեկ խորան, 2 լուսամուտ, մի քանի խորան, բարձր և գեղեցիկ գմբեթ: Վանքը մինչև 19-րդ դ վերջերը ուներ ընտիր վարելահողեր: Ավերվել ու կողոպտվել է 1895 թ հայկական կոտորածների ժամանակ:

ՇԻՐԻՆԻՑ ՎԱՆՔ, Шириниц ванк*, Širinic' vank' – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Խիզանի գվոկ-ի Սպարկերտի գ-խմբի Շիրնից գ-ի մոտ, տ ՇԻՐԻՆԻց Ս ԳԼՈՐԳ:

ՇԻՐՄԱՆՑ ՎԱՆՔ, Ширманц ванк*, Širmanc' vank' – Վ ա ն ք Մեծ Հայքի Այրարատ աշխ-ի Արշարունիք գավ-ում, Շիրմբ գ-ի մոտ, տ ՇԻՐԻՆԻց:

ՇԻՐՆԻՑԻ Ս ԳԵՎՈՐԳ, Ширници Св Геворг, Širnici St Gevorg – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Խիզանի գվոկ-ի Սպարկերտի գ-ախմբի Շիրնից գ-ի մոտ, տ ՇԻՐԻՆԻց Ս ԳԼՈՐԳ:

ՇԻՐՆԻՑ Ս ԳԵՎՈՐԳԻ ՎԱՆՔ, Ширниц Св Геворги ванк*, Širnič' St Gevorgi vank' – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Խիզանի գվոկ-ի Սպարկերտի գ-ախմբի Շիրնից գ-ի մոտ, տ ՇԻՐԻՆԻց Ս ԳԼՈՐԳ:

ՇԻՐՆԻՑ Ս ՍԿԱՎԱՌԱԿ, Ширниц Св Скавар'ак, Širnič' St Skavar'ak – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Խիզանի գվոկ-ի Սպարկերտի գ-ախմբի Շիրնից գ-ի մոտ, տ ՇԻՐԻՆԻց Ս ԳԼՈՐԳ:

ՇԻՐՆԻՑ ՎԱՆՔ, Ширниц ванк*, Širnič' vank' – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Խիզանի գվոկ-ի Սպարկերտի գ-ախմբի Շիրնից գ-ի մոտ, տ ՇԻՐԻՆԻց Ս ԳԼՈՐԳ:

ՇԽՄՈՒՐԱԳ, Шхмурад, Šxmurad – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ծաղկավան գ-ի մոտ, տ Շխմուրադի վանք:

ՇԽՄՈՒՐԱԳՎԱ ՎԱՆՔ, Шхмурада ванк*, Šxmurada vank' – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ծաղկավան գ-ի մոտ, տ Շխմուրադի վանք:

ՇԽՄՈՒՐԱԳԻ ՎԱՆՔ, Шхмуради ванк*, Šxmuradi vank', Շըխմուրադ, Շխմուրադա վանք, Շխմուրատ, Շխմուրատան, Շխմուրատա վանք, Շխմուրատի վանք – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ծաղկավան գ-ի մոտ, նրանից մոտ 6 կմ հր-արմ, Հախում գետի ձախափնյա բարձունքի վրա: Կառուցվել է 12-13-րդ դդ: Եկեղեցին Ս Աստվածածին անունով կառուցվել է 1181 թ: Շինարարության, համար օգտագործվել է սպիտակավուն ֆելզիտ քարատեսակ, հր և արմ կողմերում ունի խորաններ: Եկեղեցին ունի գմբեթ, պահպանվել է անվթար վիճակում: Համալիրում կան ժամատուն, գավիթ, միաբանների խուցեր և այլ կառույցներ, որոնք փլված են: Ավերված է նաև վանքը չըջապատող պարիսպը: Վանքի համալիրից արլ գտնվում է միանավ մատուռ: Ծ վ անունը նոր է, հին անունը հայտնի չէ: Ոմանք նույնացնում են Գետակից վանքին:

ՇԽՄՈՒՐԱՍ, Шхмурат, Šxmurat – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ծաղկավան գ-ի մոտ, տ Շխմուրադի վանք:

ՇԽՄՈՒՐԱՍԱՆ, Шхмуратан, Šxmuratan – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ծաղկավան գ-ի մոտ, տ Շխմուրադի վանք:

ՇԽՄՈՒՐԱՍԱ ՎԱՆՔ, Шхмурата ванк*, Šxmurata vank' – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ծաղկավան գ-ի մոտ, տ Շխմուրադի վանք:

ՇԽՄՈՒՐԱՍԻ ՎԱՆՔ, Шхмурати ванк*, Šxmurati vank' – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ծաղկավան գ-ի մոտ, տ Շխմուրադի վանք:

Ս ՇՄԱՎՈՆ, Св Шмавон, St

Šmavon – Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Համանուն գավ-ի Խիզանի գվոկ-ի Ավին գ-ում:

Ս ՇՄԱՎՈՆ, Св Шмавон, St Šmavon – Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Խիզանի գվոկ-ի Սիսեռք գ-ում, տ Ս Սիմոն:

Ս ՇՄԱՎՈՆ, Св Шмавон, St Šmavon – Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստանում, Խարբերդի նահ-ում, Դերսիմի գավ-ի Չարսանջակի գվոկ-ի Բերդակ գ-ում: Ըստ հիշատակությունների՝ այդպես էր կոչվում Ս Շամունե եկեղեցին:

Ս ՇՄԱՎՈՆ, Св Шмавон, St Šmavon – Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Համանուն գավ-ի Կարճկանի գվոկ-ի Օղվանց գ-ում: Մինչև 1915 թ եկեղեցուն կից գործում էր վարժարան:

Ս ՇՄԱՎՈՆ, Св Шмавон, St Šmavon – Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Համանուն գավ-ի Գավաշի գվոկ-ի Բելու գ-ում: Քարաչեն էր:

Ս ՇՄԱՎՈՆ, Св Шмавон, St Šmavon – Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Համանուն գավ-ի Շատախի գվոկ-ի Կանթ գ-ում: Գ-ի մյուս եկեղեցիները կոչվում էին Ս Աստվածածին, Ս Գևորգ:

Ս ՇՄԱՎՈՆ, Св Шмавон, St Šmavon – Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Շատախի գվոկ-ի Մարծեղ գ-ում: 1604 թ այստեղ ընդօրինակվել է Ավետարան:

Ս ՇՄԱՎՈՆ, Св Шмавон, St Šmavon – Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Համանուն գավ-ի Շատախի գվոկ-ի Ներքին Դարենց գ-ում:

Ս ՇՄԱՎՈՆ, Св Шмавон, St Šmavon – Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Շատախի գվոկ-ի Սոզվանց գ-ում: Գ-ի մյուս եկեղեցին կոչվում էր Ս Ամենափրկիչ:

Ս ՇՄԱՎՈՆ, Св Шмавон, St Šmavon – Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Համանուն գավ-ի Շատախի գվոկ-ի Վախրով գ-ում: Մինչև 1915 թ եկեղեցուն կից գործում էր վարժարան:

Ս ՇՄԱՎՈՆ, Св Шмавон, St

Տմավոն – Ե կ ե ղ ե ց ի այժմյան Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Օրդուբադի շրջ-ի վերին Ագուլիս գ-ում, հնում՝ Մեծ Հայքի Վասպուրական աշխ-ի Գողթն գավ-ում: Տեղադրված էր Ս Քրիստափոր եկեղեցուց 400-500 մ հը-արմ, Ագուլիսի գետի արլ բարձրագիր ավին: Քառամույթ գմբեթավոր բազիլիկ է, կանգուն էր մինչև 1930-ական թթ: 1980-ական թթ պահպանվել էին քանդված շինություն միայն առանձին հատվածները: Եկեղեցին չափերով խոշոր շինություն է, մինչև ավերվելը չուրջը եղել են 20-ի չափ հայերեն գրերով տապանաքարեր: Ծենքը ներսից ունեցել է զարդանկարներ: Գմբեթի հետ միասին շենքը ունեցել է 16 մ բարձր: Պատերի մեջ շարված են եղել 17-18-րդ դդ հայերեն արձանագիր խաչքարեր: 17-րդ դդ այստեղ գրված ձեռագրերից մի քանիսը պահպանվել են:

Ս ՇՄԱՎՈՆ, Св Шмавон, St Šmavon, Փառակա Ս Ծմավոն, Փառկա Ս Ծմավոն – Ե կ ե ղ ե ց ի (վանք) այժմյան Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Օրդուբադի շրջ-ի Փառակա գ-ում, հնում՝ Մեծ Հայքի Վասպուրական աշխ-ի Գողթն գավ-ում: Գտնվում է գ-ի արմ կողմում, բարձրագիր բլրի հարթ գագաթին: Չափերով մեծ բազիլիկ է՝ շինված տեղական մուգ կավաքարով և հողագույն ու սպիտակավուն սրբատաշ քարերով: Մինչև 1980-ական թթ վերջերը կանգուն էր և գրեթե անվթար: Ավերված էր միայն զանգակատունը, որը կանգուն էր մինչև 1925-1930 թթ: Ա. Այվազյանի կարծիքով նախկին տաճարը կառուցված է եղել մինչև 12-րդ դդ իսկ հետո վերակառուցվել ու վերանորոգվել է:

Ս ՇՄԱՎՈՆ, Св Шмавон, St Šmavon – Ե կ ե ղ ե ց ի (վանք) Ուլկագոմ վայրում (ստույգ տեղադրությունն անհայտ է): Այս եկեղեցու քահանա Հովհաննեսը 1423 թ ստացել է մի Ավետարան:

Շնձերի ԿՈՒՍԱՆԱՅ ԱՆԱՊԱՏ, Шнherи Кусанац апат, Šnheri Kusanac՝ апат – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ծինուհայր գ-ի մոտ, **տ Ծնհերի Ս Աստվածածին:**

Շնձերի Ս ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, Шнherи Св Аствац’ад’ицн, Šnheri St

Astvacacin, Ս Աստվածածնի վանք, Կուսանաց անապատ, Ծենհեր, Ծենհերու անապատ, Ծինահեր, Ծինուհայր, Ծինուհայրի Կուսանաց անապատ, Ծնհերի Կուսանաց անապատ, Ծնհերի վանք, Ծնհեր վանք, Որոտանի Ծինուհայր անապատ – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում Ծինուհայր գ-ի մոտ, հին Ծինուհայր գատեղիի հը կողմում, Որոտան գետի ձորի զառիվեր կողին: Հնում մտնում էր Մեծ Հայքի Սյունիք աշխ-ի Հաբանդ գավ-ի մեջ: Համալիրում կան եկեղեցի, գավիթ, սեղանատուն, պաշտպանական պարիսպներ և զանազան շինություններ: Եկեղեցին, որ կոչվում է Ս Աստվածածին, եռանավ բազիլիկ է, կառուցել է Մուրադ ճարտարապետը 1676 թ՝ ագուլիսցի Մահտեսի Ագարիայի միջոցներով: Վերանորոգվել է 1720 թ: Եկեղեցուն հը-ից կից է թաղածածկ գավիթը, որը կառուցել է ցղնեցի շովհաննեսը 1720 թ: Օժանդակ շինությունների մեծ մասը, որոնք ունեն մեկ ընդհանուր պատշգամբ, կառուցվել է 19-րդ դդ: Այստեղ 1891 թ տեղավորված է եղել ծխական դպրոցը: Պարիսպներն ունեն 3 աշտարակ: Պարիսպներին կից ունեցել են բաղնիք:

Շնձերի ՎԱՆՔ, Шнherи ванк*, Šnheri vank՝ – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ծինուհայր գ-ի մոտ, **տ Ծնհերի Ս Աստվածածին:**

Շնձերո ՎԱՆՔ, Шнherо ванк*, Šnhero vank՝ – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ծինուհայր գ-ի մոտ, **տ Ծնհերի Ս Աստվածածին:**

ՇՈՂԱՅԻ Ս ՇՈՂԱԿԱԹ, Шохайи Св Шор’акат, Šoxayi St Šoyakat՝, Իշոխի վանք, Իշողի վանք, Շոխայի վանք, Շոխա վանք, Ս Շողակաթ, Շողակաթ Ս Աստվածածին, Ս Շողակաթ Աստվածածնա վանք, Շողակաթ Ս Աստվածածնի վանք, Շողակաթի վանք – Վ ա ն ք Արմ Հայաստանում, էրզրումի նահ-ում, Երզնկայի գավ-ի Շողա (Շոխա, Իշող) գ-ի մոտ, Սեպուհ լ-ան բարձունքներից մեկի վրա, գեղատեսիլ սարավանդում: Վանքի մոտով հոսում է Շոխայի-Չուր գետակը: Ըստ ավանդության՝ վանքը հիմնադրել է Թադևոս Առաքյալը, հետագայում

վերաշինել է Ներսես Մեծ կաթողիկոսը (353-373): Համալիրը չըջապատված էր պարսպով, որի մուտքի մոտ գտնվում էր հողակապ տաճարը, աջ կողմում վանատունն էր, որին կից կային երկհարկանի սենյակներ՝ ուխտավորների համար: Սենյակներն ունեին ներքնահարկեր, որտեղ տեղավորված էին գոմերը, ախոռները, մարազները: Վանքի չուրջը կային ընդարձակ պարտեղներ, այգիներ, մարգագետիններ ու վարելահողեր: Գործել է մինչև 1915 թ և համարվել մեծ ուխտավայր:

ՇՈՆԱՅԻ ՎԱՆՔ, Шохайи ванк*, Šoxayi vank՝ – Վ ա ն ք Արմ Հայաստանում, էրզրումի նահ-ում, Երզնկայի գավ-ի Շողա (Շոխա) գ-ի մոտ, **տ Շոխայի Ս Շողակաթ:**

ՇՈՆԱ ՎԱՆՔ, Шоха ванк*, Šoxa vank՝ – Վ ա ն ք Արմ Հայաստանում, էրզրումի նահ-ում, Երզնկայի գավ-ի Շողա (Շոխա) գ-ի մոտ, **տ Շոխայի Ս Շողակաթ:**

ՇՈՂԱԳԱ, Шор’ара, Šoyaga – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զորաղբյուր գ-ում, **տ Շողագավանք:**

ՇՈՂԱԳԱՆՎԱՆՔ, Шор’аран ванк*, Šoyagah vank՝ – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զորաղբյուր գ-ում, **տ Շողագավանք:**

ՇՈՂԱԳԱՅԻ ՎԱՆՔ, Шор’арайи ванк*, Šoyagayi vank՝ – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զորաղբյուր գ-ում, **տ Շողագավանք:**

ՇՈՂԱԳԱ Ս ԱՌԱՔԵԼՈՅ ՎԱՆՔ, Шор’ара Св Ар’ак’елок ванк*, Šoyaga St Ar’ak’eloc՝ vank՝ – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զորաղբյուր գ-ում, **տ Շողագավանք:**

ՎԱՆՍՏԱՆ, Ванстан, Vanstan, Ս Աստվածածին – Ա ն ա պ ա տ (վանք) Մեծ Հայքի Այրարատ աշխ-ի Ոստան Հայոց գավ-ի Վանստան գ-ում, Ազատ (Գառնի) գետի ձախակողմյան Քեղոձոր (Գիրանաձոր) վտակի ճովտուն:

ՎԱՆՔ, Ванк*, Vank' – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Արեղ գ-ի մոտ, **տ Արեղի վանք:**

ՎԱՆՔԻ ԴՈՒՋ, Ванк*и Дуз, Vank'i Duz – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Ռինդ գ-ի մոտ, **տ Ս Աստվածածին:**

ՎԱՆՔԻ ԼՈՒՍԱԴՅՈՒՐ, Ванк*и Лусар*бюр, Vank'i Lusaγbyur – Ու խ տ ա տ ե ղ ի պատմական Փոքր Հայքում, Սեբաստիայի նահ-ում, Ամասիայի գավ-ի Մարզվան ք-ում:

ՎԱՆՔ ՀՈՒՆԱՅ, Ванк* иУнац, Vank' Hunac' – Վ ա ն ք, Ե կ ե - ղ ե ց ի պատմական Փոքր Հայքում, Սեբաստիայի նահ-ում, Թոխաթ ք-ից ոչ հեռու, Ս Աննա մենաստանի մոտ: Հունածես էր: Վերանորոգվել է 1844 թ:

ՎԱՆՔՇԵՆ, Ванк*шен, Vank'-šen – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Խարբերդի նահ-ում, Ակնա գավ-ի Վաղչեն գ-ի մոտ, **տ Ս Թորոս:**

ՎԱՉԵՁՈՐ, Вачедзор, Vač'ejor – Վ ա ն ք Մեծ Հայքի Տայք աշխ-ի Ճակք գավ-ում: Ըստ Ս. Երեմյանի՝ հիմնադրել է Հովհաննես Վարազվաչեն:

ՎԱՌԻՈՒ ՎԱՆՔ, Вар*ио ванк*, Var'io vank' – Վ ա ն ք (°) Մեծ Հայքի Սյունիք աշխ-ում: Հիշատակում է Ղ. Ալիշանը:

Ս ՎԱՌՎԱՌ, Св Вар*вар*, St Var'var – Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստանում, Էրզրումի նահ-ում, Համանուն գավ-ի Քղիի գավ-ի Խորխոր գ-ում: Անշուք շինություն էր:

Ս ՎԱՌՎԱՌ, Св Вар*вар*, St Var'var – Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստանում, Խարբերդի նահ-ում, Գերսիմի գավ-ի Չարսանջակի գավ-ի Ձորակ գ-ի մոտ, ձորի եզրին: 20-րդ դ սկզբներին ավերված էր: Սրա մոտ էր գտնվում Ս Նշան ավերված եկեղեցին: Շրջակայքում կային հայկական գերեզմաններ:

Ս ՎԱՌՎԱՌԱ, Св Вар*вар*а, St Var'var'a – Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստանում, Էրզրումի նահ-ում, Երզրնկայի գավ-ի Երկան գ-ում: Այստեղ 1608 թ Սահակ եպիսկոպոսի պատվերով արտադրվել է մի Ավետարան, որի մասին գրված է ձեռագրական հիշատակարանում:

Ս ՎԱՌՎԱՌԵ, Св Вар*вар*е, St Var'var'e – Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստանում, Խարբերդի նահ-ի Հուսեյնի գ-ում: Մինչև 1915 թ եկեղեցուն կից գործում էր վարժարան: Գ-ի երկրորդ դպրոցը կոչվում էր Հայկյան վարժարան, որն այն ժամանակ ուներ 95 աշակերտ:

Ս ՎԱՌՎԱՌԵ, Св Вар*вар*е, St Var'var'e – Մ ա տ ու ո Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Կարմիր-գյուղ գ-ում:

Ս ՎԱՌՎԱՌԵ, Св Вар*вар*е, St Var'var'e – Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Սասունի Փսանք գավ-ի Պալոյենք գ-ում:

Ս ՎԱՌՎԱՌԵ, Св Вар*вар*е, St Var'var'e, Վառվառ վանք – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Խարբերդի նահ-ում, Չարսանջակի գավ-ի Ձորակ գ-ի մոտ, ձորամիջում: Այստեղ պահվում էին հայերեն ձեռագրեր և եկեղեցական մատուցներ: Վանքի գլխավոր տոնը Վարդավառն էր: 19-րդ դ վերջերին ավերված ու լքված էր: Շրջակայքում կային գեղեցիկ խաչքարեր:

Ս ՎԱՌՎԱՌԵ, Св Вар*вар*е, St Var'var'e – Ս ր ք ա տ ե ղ ի, մ ա - տ ու ո Կարսի մարզի Կաղզվանի օկրուգում, Կաղզվան ք-ի մոտ, **տ Վառվառե Կույսի մատուռ:**

Ս ՎԱՌՎԱՌԵԻ ՎԱՆՔ, Св Вар*вар*еи ванк*, St Var'var'e'i vank' – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Էրզրումի նահ-ի Բաբերդի գավ-ում, Բաբերդ ք-ից մոտ 30 կմ արմ, Բլուր գ-ի մոտ:

ՎԱՌՎԱՌԵ ԿՈՒՅՍԻ ԳԵՐԵՁՄԱՆ, Вар*вар*е Куysi гerezман, Var'var'e Kuysi gerezman – Ս ր ք ա տ ե ղ ի Կարսի մարզի Կաղզվանի օկրուգի Բվիկ գ-ի մոտ, Յաղլիջա (Յաղլիճա) լ-ան գագաթին: Մինչև 1915-1920 թթ չրջակայքի հայ բնակիչները տարվա որոշակի ժամանակ այստեղ կաղմակերպում էին կրոնական տոնախմբություն:

ՎԱՌՎԱՌԵ ԿՈՒՅՍԻ ՄԱՏՈՒՌ, Вар*вар*е Куysi матур*, Var'var'e Kuysi matur' – Մ ա տ ու ո Կարսի մարզի Կաղզվանի օկրուգի Վարդիկ Հայր վանքի մոտ:

ՎԱՌՎԱՌԵ ԿՈՒՅՍԻ ՄԱՏՈՒՌ, Вар*вар*е Куysi матур*, Var'var'e Kuysi matur', Ս Վառվառե, Վարդյա Հեր – Ս ր ք ա տ ե ղ ի, մ ա - տ ու ո Կարսի մարզի Կաղզվանի օկրուգում, Կաղզվան ք-ի մոտ,

Սուրբ Վառվառն լ-ան վրա: Այստեղ կար վիմափոր մի գերեզման, որտեղ, ասում են, ամփոփված էին սրբուհու մասունքները: Մոտակայքում էր գտնվում Վարդիկ Հայր վանքը:

ՎԱՌՎԱՌ ՎԱՆՔ, Вар*вар* ванк*, Varvar' vank' - Վ ա ն ք Արմ Հայաստանում, Նարբերդի նահ-ում, Չարսանջակի գլուխի Ձորակ գ-ի մոտ, **տ Ս Վառվառն:**

Ս ՎԱՍԻԼ, Св Васил, St Vasil - Ե կ ե ղ ե ց ի Կիլիկիայի Հայկական թագավորությունում, Լևոնբերդ ամրոցում (բերդում):

ՎԱՍԻԼԻԿԱ ՎԱՆՔ, Василика ванк*, Vasilika vank', Վասիլկա վանք - Վ ա ն ք Արմ Հայաստանում, Նարբերդի նահ-ի Չճկաճագի գլուխ-ում: 20-րդ դ սկզբներին ավերված ու լքված էր:

Ս ՎԱՍԻԼԿԱ, Св Василка, St Vasilka - Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստանում, Նարբերդի նահ-ում, Դերսիմի գավ-ի Չճկաճագի գլուխ-ի Վասիկական գ-ում:

ՎԱՍԻԼԿԱ ՎԱՆՔ, Василка ванк*, Vasilka vank' - Վ ա ն ք Արմ Հայաստանում, Նարբերդի նահ-ում, Չճկաճագի գլուխ-ում, **տ Վասիլիկա վանք:**

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՄՈԿԱՑ Ս ՄԻՆԱՍ, Васпуракани Мокац Св Минас, Vaspurakani Mokac' St Minas - Վ ա ն ք Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Մոկսի գլուխ-ի Նանենց գ-ի մոտ, **տ Ս Վարդան:**

ՎԱՐԱԳ, Варг, Varag - Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Վարագավան գ-ի մոտ, **տ Նոր Վարագավանք:**

ՎԱՐԱԳԱ ԽԱՉ, Варга Хац*, Varaga Xac' - Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստանում, էրզրումի նահ-ում, Բոլմորի գ-ախմբի Կոլեր (Քելլեր) գ-ի մոտ: Ավերակ էր, չրջակայքում կային հին տապանաքարերով գերեզմաններ:

ՎԱՐԱԳԱ ԽԱՉ, Варга Хац*, Varaga Xac' - Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստանում, Նարբերդի նահ-ում, Չճկաճագի գլուխ-ի Ձորերան գ-ի մոտ, դրանից արլ: 20-րդ դ սկզբներին ավերված էր: Նույն տեղում կային ևս երկու ավերված եկեղեցիներ, որոնց անունները մեզ հայտնի չեն:

ՎԱՐԱԳԱ Ս ՆՇԱՆ, Варга Св

Ншап, Varaga St Nšan - Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստանում, Նարբերդի նահ-ում, Ակնա գլուխ-ի Ապուչեխ գ-ում: 1870-ական թթ-ից կից գործում էր վարժարան, որը 1900-ական թթ ուներ 140 աշակերտ:

ՎԱՐԱԳԱ Ս ՆՇԱՆ, Варга Св Ншап, Varaga St Nšan - Վ ա ն ք Արմ Հայաստանում, Վան ք-ի մոտ, **տ Վարագավանք:**

ՎԱՐԱԳԱՎԱՆԻ Ս ՆՇԱՆ, Варгавани Св Ншап, Varagavani St Nšan - Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Վարագավան գ-ի մոտ, **տ Նոր Վարագավանք:**

ՎԱՐԱԳԱՎԱՆՔ, Варгаванк*, Varagavank', Ավագ Ս Նշան, Ավաղավանք, Եղդեղիխա, Եղդեղիսե, Ետեղիխսե, Ետտեղիխսե, Ս Նաչի մենաստան, Մայրավանք, Մայրաքաղաք մենաստանաց, Ս Նշան, Վարագա Ս Նշան, Ս Վարագավանք, Վարագ Ներքին, Վարագ Ստորին, Վարագ Վարի, Վարագ ցածրի, Վարակ - Վ ա ն ք Արմ Հայաստանի Վանի նահ-ում: Հնում մտնում էր Մեծ Հայքի Վասպուրական աշխ-ի Տոսպ գավ-ի մեջ: Գտնվում է Վան ք-ից 6-7 կմ հր-արլ, Վարագ լ-ան արմ կանաչապատ ձորալանջի ոչ ընդարձակ հարթակի վրա, որտեղից երևում են Վան ք-ի և Վանա լճի գեղեցիկ համայնապատկերները: Ըստ ավանդության՝ հիմնադրվել է Հոնիսիմյան կույսերի և Գրիգոր Լուսավորչի ժամանակներում՝ 3-4-րդ դդ:

Վանքի համալիրի մեջ մտնում են Ս Աստվածածին, Ս Գևորգ, Ս Նաչ, Ս Հովհաննես, Ս Նշան, Ս Սիոն և Ս Սոփիա եկեղեցիները, որոնցից 5-ը իրար կից են, իսկ 2-ը՝ փոքր-ինչ հեռու: Եկեղեցիներից 3-ը զմբեթավոր էին, 4-ը՝ կաթողիկեով: Համալիրի ամենահին և ամենագեղեցիկ եկեղեցին Ս Աստվածածինն էր, որը կառուցված է մշակված խոշոր քարերով ու ձևով չատ նման է Աղթամարի Ս Նաչ եկեղեցուն: Ս Գևորգ եկեղեցու գավիթը կառուցված է սրբատաշ քարերով, իսկ պատերը ներսից ծածկված են յուղանկարներով: Եկեղեցին նշանավոր է նրանով, որ այստեղ են գտնվում Վասպուրականի վերջին թագավոր Սենեբրիմ Արծրունու (990-1021), նրա

կնոջ՝ Նուշուշ թագուհու և Պետրոս Ա Գևորգարձ կաթողիկոսի (1019-1058) գերեզմանները: Ս Աստվածածին եկեղեցուն կից էր սրբատաշ քարերով կառուցված Ս Նաչ թագակալ եկեղեցին, որը ուշ ժամանակներում ծառայում էր իբրև մատենադարան, որտեղ գրքերից բացի, պահվում էին Նրիմյան Հայրիկի եվրոպայից բերած տպագրական մեքենայի սարքավորումները: Ս Սիոնը կառուցված է Ս Գևորգի հր կողմում, որի դռան վրա ազուցված կար սեպագիր արձանագրությունը մի քար: Ս Հովհաննեսը, որը կոչվում էր նաև Քառասուն Արեղայից եկեղեցի, նույնպես կառուցված է սրբատաշ քարերով և ուներ գեղեցիկ հորինվածք: Վանքի համալիրի մեջ մտնում էին նաև օժանդակ շինություններ՝ 1-2 հարկանի բնակելի շենքեր, պահեստներ, մատաններ, դպրոց, գրատուն, հացի փուռ, բաղնիք ևս: Բնակելի շենքն ուներ 48, դպրոցը՝ 8 սենյակ, առաջնորդարանը՝ 2 մեծ դահլիճ: Բակում բխում էր մի հորդատտ աղբյուր: Բոլոր շինությունների վրա կային հայերեն բազմաթիվ վիմագիր արձանագրություններ: Վ-ը չրջապատված է աղյուսաչեն աշտարակավոր, հաստահեղույս պարիսպներով, որոնք վերանորոգվել են Գրիգոր և Ղազար առաջնորդների ժամանակ՝ 1770 և 1893 թթ: Վանքի շինությունները զգալիորեն տուժել են 1648 թ երկրաշարժից, բայց մեկ տարի անց, Կիրակոս վարդապետի նախաձեռնությամբ վերանորոգվել են Տիրատուր ճարտարապետի ձեռքով:

Վ-ի մշակութային և տնտեսական գործունեությունը զգալիորեն աշխուժացավ Նրիմյան Հայրիկի առաջնորդության տարիներին (1856-1869): Այդ ժամանակ կանոնավորվեցին վանքի եկամուտները, ընդարձակվեցին հողային կալվածքները, բարձրացվեց հացահատիկի արտադրությունը, բազմապատկեց անասունների գլխաքանակը: Վանքի տնտեսության մեջ հատուկ տեղ էր տրվում շերամապահությանը, մեղվաբուծությանը, թռչնաբուծությանը, լսազողազորությունը, կաթնամթերքների արտադրությունը: Վանքի կրթական գործունեության մեջ կարևոր դեր է կատարել 1857 թ մարտի 1-ին հիմնադրված Ժառան-

գավորաց վարժարանը, որի առաջին շրջանավարտներից էին Գարեգին Սրվանձադյանը և Արսեն Թոխմախյանը: 1909 թ վանքն ուներ նաև գիշերօթիկ դպրոց 3 նախակրթարաններով և 4 դասարաններով, որտեղ այն ժամանակ սովորում էին 60 աշակերտներ: Խրիմյան Հայրիկի անվան Հետ է կապված նաև Վ-ում Հիմնադրված տպարանն ու «Արծվի Վասպուրական» ամսագրի հրատարակությունը (1858–1864):

Վ-ը Միջնադարյան Հայաստանի կրոնամշակութային խոշոր կենտրոններից էր: 13–17-րդ դդ այստեղ ընդօրինակվել են բազմաթիվ հայերեն ձեռագրեր (Մաշտոց, Հայսմավուրք, Ավետարան, Աստվածաշունչ, Ճառընտիր, Քարոզգիրք, ժողովածուներ են, որոնց մի մասը պահպանվել է: 20-րդ դ սկզբներին Վ-ի մատենադարանում պահպանվում էր շուրջ 400 ձեռագիր և 1000 տպագիր մատյան ու գիրք: Վանքի շրջակայքում կային 14–19-րդ դդ հայկական գերեզմաններ և խաչքարեր: Վանքը կողոպտվել, ավերվել ու ամայացվել է թուրք ջարդարանների ձեռքով 1915 թ Մեծ եղեռնի ժամանակ:

Ս ՎԱՐԱԳԱՎԱՆՔ, Св Вараванк*, St Varagavanak' – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Վան ք-ի մոտ, տ Վարազավանք:

ՎԱՐԱԳԱՎԱՆՔ, Вараванк*, Varagavanak' – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Վարազավան ք-ի մոտ, տ Նոր Վարազավանք:

ՎԱՐԱԳ ՆԵՐՔԻՆ, Варг Нерк'ян, Varag Nerk'in – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Վան ք-ի մոտ, տ Վարազավանք:

ՎԱՐԱԳ ՍՏՈՐԻՆ, Варг Сторин, Varag Storin – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Վան ք-ի մոտ, տ Վարազավանք:

ՎԱՐԱԳ ՎԱՐԻ, Варг Варя, Varag Vari – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Վան ք-ի մոտ, տ Վարազավանք:

ՎԱՐԱԳ ՎԵՐԻ, Варг Веря, Varag Veri – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Վան ք-ի մոտ, տ Վարազ Վերին:

ՎԱՐԱԳ ՎԵՐԻՆ, Варг Верин, Varag Verin, Ս Նաչ, Նարարաքիլիսե, Ս Նչան, Վարազ Վերի –

Վ ա ն ք Արմ Հայաստանի Վանի նահ-ում: Հնում մտնում էր Մեծ Հայքի Վասպուրական աշխ-ի Տոսպ գավ-ի մեջ: Գտնվում է Վան ք-ից հը-արլ, Վարազա լ-ան լանջին, Վարազավանք (նաև Ներքին Վարազ) վանքից հս-արլ, բարձունքի վրա: Ըստ ավանդության՝ վանքը հիմնադրել է Գրիգոր Լուսավորիչը (3–4-րդ դդ) Հոփսիմեն կույսի թաքցրած Կենաց փայտի տեղում: Բաղկացած էր 2 եկեղեցիներից, մեկը՝ խաչաձև, մյուսը՝ քառանկյունի: Ուներ խցեր, պարիսպներ, մատուռներ: Շինություններից և ոչ մեկի վրա արձանագրություններ չկային: Մոտակայքում կային աղբյուրներ: 20-րդ դ սկզբներին վանքի ողջ համալիրը ավերված ու լքված էր:

ՎԱՐԱԳ ՅԱՄՐԻ, Варг Яаг'ря, Varag C'acri – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Վան ք-ի մոտ, տ Վարազավանք:

ՎԱՐԱԿ, Варак, Varak – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Վան ք-ի մոտ, տ Վարազավանք:

Ս ՎԱՐԴԱՆ, Св Вардан, St Vardan – Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Համանուն գավ-ի Հայոց Ձոր գվոկ-ի Սուրբ Վարդան ք-ում: Կառուցվել է համեմատաբար ուշ ժամանակներում, Վանա լճի ջրերի մակարդակի բարձրանալու հետևանքով ջրասույզ եղած ավելի հին և նույն անունն ունեցող եկեղեցու փոխարեն: Մինչև 1915 թ եկեղեցուն կից գործում էր վարժարան: Կողոպտվել, ավերվել է 1895 և 1915 թթ:

Ս ՎԱՐԴԱՆ, Св Вардан, St Vardan – Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստանում, Վանի նահ-ի Վան ք-ում:

Ս ՎԱՐԴԱՆ, Св Вардан, St Vardan – Ե կ ե ղ ե ց ի Երևանի նահ-ի Նոր Բայազետի գավ-ում, Այրիջա (այժմ՝ Արգիճի) գետի հովտում, Աղսաղթոյուղ ավերակ ք-ից հը-արլ:

Ս ՎԱՐԴԱՆ, Св Вардан, St Vardan – Ե կ ե ղ ե ց ի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հաղբութի շրջ-ի Տող ք-ում, նրա հը-արմ կողմում, գերեզմանոցի ծայրամասում: Գերեզմանոցում պահպանված ավելի հին եկեղեցին կոչվում է Ս Ստեփանոս Նահատակ:

Ս ՎԱՐԴԱՆ, Св Вардан, St Vardan – Ե կ ե ղ ե ց ի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մար-

տունու շրջ-ի Շեխեր ք-ում:

Ս ՎԱՐԴԱՆ, Св Вардан, St Vardan – Ե կ ե ղ ե ց ի Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջուլիսի (պատմական՝ Մառաշիչեն) ք-ում: Կառուցվել է 5-րդ դ: Ըստ ավանդության՝ այստեղ է թաղված Վարդան Մամիկոնյանի գինակից Տաճատ Գնթունին (5-րդ դ): Ապարանքի ջրամբարի կառուցման պատճառով եկեղեցին տեղափոխվել է մոտակա Ուաչեր բարձունքի վրա:

Ս ՎԱՐԴԱՆ, Св Вардан, St Vardan – Ե կ ե ղ ե ց ի Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գյուղ ք-ում, տ Ս Աստվածածին:

Ս ՎԱՐԴԱՆ, Св Вардан, St Vardan, Ս Վարդանի վանք – Ե կ ե ղ ե ց ի (վանք) Արմ Հայաստանում, Վանի գավ-ի Սուրբ Վարդան ք-ում, լճափին: Վանա լճի ջրերի բարձրանալու հետևանքով ջրասույզ է եղել: Հետագայում ափից 5–6 կմ վրա, Սուրբ Վարդան լ-ան լանջին կառուցվել է նույնանուն նոր եկեղեցի:

Ս ՎԱՐԴԱՆ, Св Вардан, St Vardan, Ս Վարդանի վանք – Ե կ ե ղ ե ց ի (վանք) Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Վանի գավ-ի Առեղ ք-ում, բլրի ստորոտին: Ըստ ավանդության՝ այստեղ ամփոփված է Վարդան Մամիկոնյանի (5-րդ դ) գլուխը: Ավերվել, լքվել է 20-րդ դ սկզբներին:

Ս ՎԱՐԴԱՆ, Св Вардан, St Vardan – Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստանի Բայազետ ք-ում, հայկական Ավրիգոռ թաղում:

Ս ՎԱՐԴԱՆ, Св Вардан, St Vardan – Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Խիզանի գվոկ-ի Մզրո ք-ում: Գ-ի երկրորդ եկեղեցին կոչվում էր Ս Գևորգ:

Ս ՎԱՐԴԱՆ, Св Вардан, St Vardan – Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստանում, էրզրումի նահ-ում, էրզրումի գավ-ի Քրիլի գվոկ-ի Ամառիճ ք-ում: Մինչև 1915 թ եկեղեցուն կից գործում էր վարժարան:

Ս ՎԱՐԴԱՆ, Св Вардан, St Vardan – Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Վանի գավ-ում, Վարազա վանքի մոտ գտնվող Ապագավանք վանքում: Այսպես է անվանվել ի Հիշատակ Վարդան Մամիկոնյանի:

Ս ՎԱՐԴԱՆ, ՇԵՆ ԲԱՐՃԱՆ, St Vardan – Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Վանի դավ-ում, Համանուն դավ-ի Շատախի գվդկ-ի Արմշատ գ-ում:

Ս ՎԱՐԴԱՆ, ՇԵՆ ԲԱՐՃԱՆ, St Vardan – Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Կարճկանի գվդկ-ի Կութ գ-ում: Մյուս եկեղեցին կոչվում էր Ս Ստեփանոս:

Ս ՎԱՐԴԱՆ, ՇԵՆ ԲԱՐՃԱՆ, St Vardan – Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Վանի դավ-ում, Նարեկա վանքի մոտ: Եկեղեցու անունով նաև այդպես է կոչվել Ապաղվանք վանքը (տ):

Ս ՎԱՐԴԱՆ, ՇԵՆ ԲԱՐՃԱՆ, St Vardan – Ե կ ե ղ ե ց ի Մեծ Հայքի Սյունիք աշխ-ի Շահապոնք դավ-ի Գուրի (այժմ՝ Բյուքյու, ներկայիս Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Շահրուզի շրջ-ում) գ-ում: Հիշատակված է 1471 թ Հայերեն ձեռագրական Հիշատակարանում:

Ս ՎԱՐԴԱՆ, ՇԵՆ ԲԱՐՃԱՆ, St Vardan, Աստապատի Ս Վարդան, Աստապատիս Վարդանի վանք, Ս Վարդանի վանք, Ս Վարտան – Ե կ ե ղ ե ց ի (վանք) Մեծ Հայքի Վասպուրական աշխ-ի Նախճավան դավ-ի Աստապատ գ-ում: Բաղկացած էր եկեղեցու շենքից և գավթից, որոնք կառուցված էին թրձած աղյուսով: Եկեղեցին ուներ սլացիկ գմբեթ, 2 ավանդատուն, 3 մուտք: Պատերի ստորին շարքերը քարից էին, ներսից ունեին որմնանկարներ: Գավթի մեջ բացվող արմ մուտքի ճակատին պատկերված էր Տիրամայրը՝ Հիսուսը գրկին: Պատերի վրա, դրսից, կային 17-րդ դ Հայերեն վիմագիր արձանագրություններ: Միջին դռ ուներ դպրոց և մատենադարան, պահպանվել են այստեղ գրված մի քանի ձեռագրեր: 19-րդ դ վերջերից եկեղեցին կիսավեր էր և չէր գործում: Նախիջևանի ջրամբարը կառուցելուց հետո Աստապատ գ-ը և Ս Վ եկեղեցին մնացին ջրի տակ: Ըստ ավանդության՝ այստեղ են թաղվել 451 թ Ավարայրի ճակատամարտում զոհված Հայ մարտիկները, և եկեղեցին էլ կոչվել է գորավար Վարդան Մամիկոնյանի անունով:

Ս ՎԱՐԴԱՆ, ՇԵՆ ԲԱՐՃԱՆ, St Vardan – Ե կ ե ղ ե ց ի Մեծ Հայքում, Հավանորեն Վասպուրական աշխ-ի

տարածքում տեղադրվող Գրդիբան գ-ում: Հիշատակված է 17-րդ դ Հայերեն Ավետարաններից մեկի Հիշատակարանում:

Ս ՎԱՐԴԱՆ, ՇԵՆ ԲԱՐՃԱՆ, St Vardan – Ե կ ե ղ ե ց ի (վանք) ներկայիս Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Զուլֆայի շրջ-ի Շոթոթ գ-ում:

Ս ՎԱՐԴԱՆ, ՇԵՆ ԲԱՐՃԱՆ, St Vardan – Ե կ ե ղ ե ց ի (վանք) Պարսկահայաստանում, Մակուի դավ-ի Մակու ք-ում:

Ս ՎԱՐԴԱՆ, ՇԵՆ ԲԱՐՃԱՆ, St Vardan – Ե կ ե ղ ե ց ի Պարսկահայաստանի Մակու ք-ում:

Ս ՎԱՐԴԱՆ, ՇԵՆ ԲԱՐՃԱՆ, St Vardan – Մ ա տ ու ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջ-ի Մուշկապատ գ-ում: Կառուցվել է 12-րդ դ:

Ս ՎԱՐԴԱՆ, ՇԵՆ ԲԱՐՃԱՆ, St Vardan, Թուխ Մանուկ – Մ ա տ ու ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Փարպի գ-ում, Շաղավարդ գետի ձախ ափին, բարձունքի վրա: Կառուցված է մանր բազալտի քարերով, ունի ուղղանկյուն հորինվածք: Պաշտոնական Հիշատակարաններում անվանվում է Թուխ Մանուկ: Կառուցվել է 13–14-րդ դդ: Շրջակայքում կան դամբարանաբլուրներ և թաղումներ:

Ս ՎԱՐԴԱՆ, ՇԵՆ ԲԱՐՃԱՆ, St Vardan, Վարդան Զորավար, Ս Վարդանի մատուռ, Փոքր մատուռ – Մ ա տ ու ու (սրբատեղի) Պարսկահայաստանում, Նոյի դավ-ում, Նոյ ք-ից մոտ 40 կմ հս-արլ, Դիզա և Սեյդավար գ-երի մոտ, բլրի վրա: Գմբեթը փլված էր, ներսում կային խոշոր քարերից գերեզմաններ, որոնք ամբողջապես թաղված էին գետնի մեջ: Ըստ ավանդության՝ այստեղ է թաղված զորավար Վարդան Մամիկոնյանը (5-րդ դ):

Ս ՎԱՐԴԱՆ, ՇԵՆ ԲԱՐՃԱՆ, St Vardan – Ս ր բ ա տ ե ղ ի Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդանի ք-ի մոտ, նրա հրկողմում, բլրի վրա: Ըստ ավանդության՝ այստեղ իր գործով կանգ է առել զորավար Վարդան Մամիկոնյանը (5-րդ դ):

Ս ՎԱՐԴԱՆ, ՇԵՆ ԲԱՐՃԱՆ, St Vardan, Ս Մինաս, Մոկսի Ս Վարդանանց վանք, Նանենից Ս Մինաս, Նանենից վանք, Նանենց վանք,

Նոնենից ձորի Ս Վարդանանք վանք, Նոնենից Ս Մինաս, Նոնենից Ս Նշան, Նոնենից վանք, Վասպուրականի Մոկաց Ս Մինաս, Ս Վարդանանց վանք, Ս Վարդանա վանք, Վարդան Զորավարի վանք, Վարդանի վանք, Ս Վարդանի վանք – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Մոկսի գվդկ-ի Նանենց գ-ի մոտ, Անտոս լ-ան ստորոտին: Ուներ քարաշեն եկեղեցի, որը 1704 թ նորոգել է տվել Նաչատուր սարկավազը: Միջին դռ եղել է Հայ գրչու թյան կենտրոն: Պահպանվել են այստեղ ընդօրինակված 1 Մաշտոց և 1560, 1572 թթ (այլ վկայություններ՝ 1676, 1696 թթ) գրված 2 Ավետարան:

Ս ՎԱՐԴԱՆ, ՇԵՆ ԲԱՐՃԱՆ, St Vardan – Վ ա ն ք Տրապիզոնի նահ-ի Սյուրմենի գվդկ-ի Սյուրմեն գ-ում: 19-րդ դ վերջերից ավերված ու լքված էր: Այստեղ գտնվում էր նաև Ս Լուսավորիչ եկեղեցին:

Ս ՎԱՐԴԱՆ, ՇԵՆ ԲԱՐՃԱՆ, St Vardan, Ապաղվանք, Ապավանք, Ս Վարդան անապատ, Ս Վարդանանց վանք, Վարդանա վանք, Վարդանա ուխտ, Ս Վարդանի անապատ, Ս Վարդանի վանք – Վ ա ն ք (անապատ) Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Գավաշի գվդկ-ի Պատականց գ-ի մոտ, նրանից արմ, Աղթամար կղզու դեմ-գիմաց: Հնում մտնում էր Մեծ Հայքի Վասպուրական աշխ-ի Ռշտունիք դավ-ի մեջ: Եկեղեցին կոչվում էր Ս Վարդան: Հիշատակվում է 14-րդ դ գրիչ Ծերունի Հիշատակարանում ոմն Մինասենց Թովման իր տարեգրությունում Հիշատակում է այս վանքի վանահայր Թովմային, որը նորոգել է վանքը: Միջին դռ եղել է Հայ գրչության կենտրոն, պահպանվել են այստեղ գրված մի քանի ձեռագրեր: Այստեղ ապրել ու ստեղծագործել է Աստվածատուր արեղան (15-րդ դ), որը նկարագարել է ձեռագրեր: Ըստ ավանդության՝ այստեղ է թաղված Վարդան Մամիկոնյանի (5-րդ դ) մասունքը:

Ս ՎԱՐԴԱՆ, ՇԵՆ ԲԱՐՃԱՆ, St Vardan – Ու խ տ ա տ ե ղ ի Արմ Հայաստանում, Նարբերդի նահ-ի Նոր Մալաթիա ք-ի մոտակայքում: Հիմնահատակ ավերվել է 1915 թ:

Ս ՎԱՐԴԱՆ, ՇԵՆ ԲԱՐՃԱՆ, St Vardan – Ու խ տ ա տ ե ղ ի Արմ Հա-

յաստանում, Խարբերդի նահ-ի Նոր Մալաթիա ք-ում:

Ս ՎԱՐԴԱՆ ԱՆԱՊԱՏ, Св Вардан апат, St Vardan apapat – Վ ա ն ք (անապատ) Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Գավաշի գվոկ-ի Պատականց գ-ի մոտ, տ Ս Վարդան:

ՎԱՐԴԱՆԱՆՅ, Вардананц, Vardananc' – Մ ա տ ու ո Արմ Հայաստանում, Էրզրումի նահ-ի Խոտրջրի գվոկ-ում:

Ս ՎԱՐԴԱՆԱՆՅ ՎԱՆՔ, Св Вардананц ванк*, St Vardananc' vank' – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Մոկսի գվոկ-ի նանենց գ-ի մոտ, տ Ս Վարդան:

ՎԱՐԴԱՆԱՆՅ ՎԱՆՔ, Вардананц ванк*, Vardananc' vank' – Վ ա ն ք Տրապիզոնի նահ-ում, Սյուրմենեն գք-ի մոտ, տ Ս Վարդանի վանք:

Ս ՎԱՐԴԱՆԱՆՔ, Св Вардананк*, St Vardanank' – Ե կ ե ղ ե ց ի ն ե ռ ի Հ ա մ ա լ ի ը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Անգեղակոթ գ-ի մոտ, նրա արմ կողմում, բարձրադիր վայրում: Դրանց չուրջը կային տապանաքարեր, որոնցից մեկը 1281 թ: Ե. Լալայանի վկայությամբ՝ 20-րդ դ սկզբներին Համալիրը ավերված էր: Այժմ այս շինություններից ոչինչ չի մնացել: Վայրը որպես ուխտատեղի անվանվում է Վարդան Ջորավար:

Ս ՎԱՐԴԱՆԱՆՔ, Св Вардананк*, St Vardanank' Գրեբու Ս Վարդանանք – Մ ա տ ու ո Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Ոստան գք-ից հր գտնվող Վարդպատրիկ բլրի վրա: Փայտաշեն փոքրիկ շինություն էր: Ըստ ավանդության՝ մատուռի տեղում Վարդպատրիկ իշխանը կառուցել է մի հոյակապ եկեղեցի: Երբ իշխանը մահանում է, նրան թաղում են այդ եկեղեցում և ծածկում հողով, որպեսզի թշնամիները չնկատեն: Այսպես էլ առաջացել է վերոհիշյալ բլուրը:

Ս ՎԱՐԴԱՆԱՆՔ, Св Вардананк*, St Vardanank' Գրեբու Ս Վարդանանք – Ու խ տ ա ե ղ ի Արմ Հայաստանում, Էրզրումի նահ-ի Խոտրջրի գվոկ-ի Գրեբ գ-ում: Ավերվել է 1915 թ:

Ս ՎԱՐԴԱՆԱ ՎԱՆՔ, Св Вардана ванк*, St Vardana vank' –

Վ ա ն ք Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Համանուն գավ-ի Մոկսի գվոկ-ի նանենց գ-ի մոտ, տ Ս Վարդան:

ՎԱՐԴԱՆԱՎԱՆՔ, Варданаванк*, Vardanavank' – Վ ա ն ք Մեծ Հայքի Սյունիք աշխ-ի Բաղք գավ-ում: Հիշատակված է 10-13-րդ դդ Հայկական աղբյուրներում:

ՎԱՐԴԱՆԱ ՎԱՆՔ, Вардана ванк*, Vardana vank' – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Գավաշի գվոկ-ի Պատականց գ-ի մոտ, տ Ս Վարդան:

ՎԱՐԴԱՆԱՅ ՈՒՆՏ, Варданац Ухт, Vardanac' Uxt – Վ ա ն ք (ուխտ) Հայաստանում: Տեղադրությունը՝ անորոշ: Հայտնի է, որ այստեղ 1303 թ արտագրվել է Ավետարան:

ՎԱՐԴԱՆԱ ՈՒՆՏ, Вардана Ухт, Vardana Uxt – Վ ա ն ք (անապատ) Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Գավաշի գվոկ-ի Պատականց գ-ի մոտ, տ Ս Վարդան:

ՎԱՐԴԱՆ ԶՈՐԱՎԱՐ, Вардан Зоравар, Vardan Zoravar – Մ ա տ ու ո (արբատեղի) Պարսկահայաստանում, Խոյի (Հեր) գավ-ում, Խոյ (Հեր) ք-ից հս-արլ, տ Ս Վարդան:

ՎԱՐԴԱՆ ԶՈՐԱՎԱՐ, Вардан Зоравар, Vardan Zoravar – Ու խ տ ա տ ե ղ ի Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Անգեղակոթ գ-ի մոտ, Ս Վարդանանք եկեղեցիների տեղում (տ):

Ս ՎԱՐԴԱՆ ԶՈՐԱՎԱՐ, Св Вардан Зоравар, St Vardan Zoravar – Ե կ ե ղ ե ց ի Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ալափարս (Այլաբերք) գ-ում, մտնում է Միրանավոր վանքի Համալիրի մեջ (տ):

Ս ՎԱՐԴԱՆ ԶՈՐԱՎԱՐ, Св Вардан Зоравар, St Vardan Zoravar, Ս Վարդան – Մ ա տ ու ո Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջ-ի Մուշկապատ գ-ում: Գ-ի եկեղեցին կոչվում է Ս Աստվածածին:

ՎԱՐԴԱՆ ԶՈՐԱՎԱՐԻ ՎԱՆՔ, Вардан Зоравари ванк*, Vardan Zoravari vank' – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Համանուն գավ-ի Մոկսի գվոկ-ի նանենց գ-ի մոտ, տ Ս Վարդան:

Ս ՎԱՐԴԱՆ ԶՈՐԱՎՈՐ, Св Вар-

дан Зоравор, St Vardan Zoravor – Ե կ ե ղ ե ց ի Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ալափարս (Այլաբերք) գ-ի Միրանավոր վանքի Համալիրում: Կառուցել է Գրիգոր իշխանը 901 թ, վերանորոգվել է 1857 թ: Այստեղ 1828-1829 թթ Մակուից գաղթածները բերել ու տեղադրել էին մի քարաբեկոր, որը ըստ ավանդության՝ ցողված է եղել 451 թ Ավարայրի ճակատամարտում զոհված Վարդան Մամիկոնյանի արյունով:

Ս ՎԱՐԴԱՆԻ ԱՆԱՊԱՏ, Св Вардани апат, St Vardani apapat – Վ ա ն ք (անապատ) Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Գավաշի գվոկ-ի Պատականց գ-ի մոտ, տ Ս Վարդան:

Ս ՎԱՐԴԱՆԻ ՄՄՏՈՒՌ, Св Вардани матур*, St Vardani matur' – Մ ա տ ու ո (սրբատեղի) Պարսկահայաստանում, Խոյի (Հեր) գավ-ում, Խոյ (Հեր) ք-ից հս-արլ, տ Ս Վարդան:

Ս ՎԱՐԴԱՆԻ ՎԱՆՔ, Св Вардани ванк*, St Vardani vank' – Ե կ ե ղ ե ց ի (վանք) Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Վանի գավ-ի Հայոց Ձորի գվոկ-ի Առեղ գ-ում, տ Ս Վարդան:

Ս ՎԱՐԴԱՆԻ ՎԱՆՔ, Св Вардани ванк*, St Vardani vank' – Ե կ ե ղ ե ց ի (վանք) Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Վանի գավ-ի Սուրբ Վարդան գ-ում, տ Ս Վարդան:

Ս ՎԱՐԴԱՆԻ ՎԱՆՔ, Св Вардани ванк*, St Vardani vank' – Ե կ ե ղ ե ց ի (վանք) Մեծ Հայքի Վասպուրական աշխ-ի Նախճավան գավ-ի Աստապատ գ-ում, տ Ս Վարդան:

Ս ՎԱՐԴԱՆԻ ՎԱՆՔ, Св Вардани ванк*, St Vardani vank' – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Մոկսի գվոկ-ի նանենց գ-ի մոտ, տ Ս Վարդան:

ՎԱՐԴԱՆԻ ՎԱՆՔ, Вардани ванк*, Vardani vank' – Վ ա ն ք Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Մոկսի գվոկ-ի նանենց գ-ի մոտ, տ Ս Վարդան:

ՎԱՐԴԱՆԻ ՎԱՆՔ, Вардани ванк*, Vardani vank' – Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Վաղատին գ-ում: Կառուցվել է 9-12-րդ դդ: Վանքի Համալիրի մեջ մտնում են Ս Լու-

սավորիչ, Ս Կարապետ, Ս Ստեփանոս եկեղեցիները: Ըստ ավանդությունն՝ այս եկեղեցիներից մեկը բուժում է օձի խայթոցը:

Ս ՎԱՐԴԱՆԻ ՎԱՆՔ, ՏՅ **Վարդանի վանք**, St Vardani vank', Վարդանանց վանք - Վ ա ն ք Տրապիզոնի նահ-ում, Սյուրմենի գլուխի Սյուրմեն գ-ի մոտ: 20-րդ դ սկզբներին ավերված ու լքված էր:

Ս ՎԱՐԴԱՆԻ ՎԱՆՔ, ՏՅ **Վարդանի վանք**, St Vardani vank' - Վ ա ն ք (անապատ) Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Գավաշի գլուխի Պատական գ-ի մոտ, տ Ս Վարդան:

ՎԱՐԴԱՆՅԱՅ ԱՆԱՊԱՏ, **Վարդանյա անապատ**, Vardanyac' anapat - Վ ա ն ք (անապատ) Մեծ Հայքի Սյունիք աշխ-ում:

ՎԱՐԴԱՆ ՆԱՀԱՏԱԿ, **Վարդան Nahatak**, Vardan Nahatak - Մ ա - տ ու ո Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ձոճկան գ-ի մոտ, նրա արմ կողմում, անտառում: Ունեցել է շրջապարիսպ: Այստեղ ուխտի են գալիս Զատիկին և Վարդանանց տոնին:

ՎԱՐԴԱՎԱՆՔ, **Վարդավանք**, Vardavank' - Վ ա ն ք Մեծ Հայքի Սյունիք աշխ-ի Բարձր-Աճանան գավ-ում, Վարդավանք գ-ում:

Ս ՎԱՐԴԵՆԻ, ՏՅ **Վարդենի**, St Vardeher - Վ ա ն ք Արմ Հայաստանում, էրզրումի նահ-ում, Բայազետի գավ-ի Ալաշկերտի գլուխի Ալաշկերտ գ-ում, Հին չուկայի տարածքում: Սրա մոտ էր գտնվում Ս Կիրակոս վանքը:

ՎԱՐԴԵՆԻ, **Վարդենի**, Vardeher - Վ ա ն ք Կարսի մարզի Կաղզվանի օկրուգում, տ Վարդենի:

ՎԱՐԴԵՆՈՐ, **Վարդենոր**, Vardehor, Վարդենոր, Վարդենուր - Վ ա ն ք , մ ե ն ա ս տ ա ն Կարսի մարզի Կաղզվանի օկրուգում, Կաղզվան ք-ից մոտ 20 կմ հր-արմ, բարձունքի վրա: Ըստ ավանդությունն՝ այստեղ են ամփոփված Մեսրոպ Մաշտոցի (5-րդ դ) աշակերտներ Վարոս և Թաթուլ եղբայրների աճյունները: Վանքի եկեղեցին կոչվում էր Ս Մամաս:

ՎԱՐԴԵՆՈՒՐ, **Վարդենուր**, Vardehur - Վ ա ն ք Կարսի մարզի Կաղզվանի օկրուգում, տ Վարդենի:

ՎԱՐԴԵՆԻԿ, **Վարդենիկ**, Vardenik - Գ յ ու ղ Արմ Հայաստանում,

էրզրումի նահ-ում, Սպերի գլուխ-ում: Հնում այստեղ գտնվել է Անահիտ դիցուհու մեհյանը:

ՎԱՐԴԵՆԻՍ, **Վարդենիս**, Vardenis, Պապղովանք - Վ ա ն ք Մեծ Հայքի Վասպուրական աշխ-ի Քաջբերունիք գավ-ում:

ՎԱՐԴԵՆԻՔԻ ԱՆԱՊԱՏ, **Վարդենիքի անապատ**, Vardenik'i anapat - Վ ա ն ք Մեծ Հայքի Սյունիք աշխ-ում: Դ. Ալիջանը ենթադրաբար նույնացնում է Մեծից անապատին:

ՎԱՐԴԵՆՈՅԱՅ ՎԱՆՔ, **Վարդենոյա անապատ**, Vardenoc'ac' vank', Վարդենոյի վանք, Վարդենոյի վանք - Վ ա ն ք Մեծ Հայքի Բարձր Հայք աշխ-ի Դարանաղի գավ-ում: Եկեղեցին կոչվում էր Ս Ստեփանոս Նախավկա: 1476 թ Հովսեփ Եպիսկոպոսը այստեղ ընդօրինակել է Սաղմոսարան:

ՎԱՐԴԵՆՅԻ ՎԱՆՔ, **Վարդենյի վանք**, Vardenci vank' - Վ ա ն ք Մեծ Հայքի Բարձր Հայք աշխ-ի Դարանաղի գավ-ում, տ Վարդենոյացի վանք:

ՎԱՐԴԵՆՅՈՅ ՎԱՆՔ, **Վարդենոյ վանք**, Vardenc'oc' vank' - Վ ա ն ք Մեծ Հայքի Բարձր Հայք աշխ-ի Դարանաղի գավ-ում, տ Վարդենոյացի վանք:

ՎԱՐԴԻԿ ՀԱՅՐ, **Վարդիկ հայր**, Vardik Hayr, Վարդիկհայր, Վարդիկհայր, Վարդիկհայր, Վարդիկհայր, Վարդիկհայր - Վ ա ն ք Կարսի մարզի Կաղզվանի օկրուգում, Կաղզվան ք-ից մոտ 20 կմ հեռավորությանը, խոր ձորի մեջ: Հնում մտնում էր Մեծ Հայքի Այրարատ աշխ-ի Արշարունիք (Երասխաձոր) և Գարեղյանք գավ-ների սահմանամերձ տարածքի մեջ, Վիշապաձոր կոչված վայրից 2-3 կմ հր: Հիմնադրվել է 7-րդ դ Մաթուսաղա Եպիսկոպոսի ջանքերով: Անունը կապում են ոմն Վարդիկ կրոնավորի հետ (10-րդ դ): Ըստ ավանդությունն՝ այստեղ պահվում էր Քրիստոսի խաչափայտի մի բեկորը (գետարգել նշան): 19-րդ դ վերջերին վանքի համալիրից մնում էր միայն ավերված եկեղեցին, որի ներսում կային մի քանի գերեզմաններ: Սրա մոտ հիշատակվում է մի քարակույտ Արջու գերեզման անունով: Մոտակայքում հիշատակվում է Վառվառե Կույսի մատուղը: Վ հ-ը նույնացվում է Թաթուլ վանքին:

ՎԱՐԴԻԿ ՀԱՅՐ, **Վարդիկհայր**, Vardikhayr - Վ ա ն ք Կարսի մարզի Կաղզվանի օկրուգում, տ Վարդիկ հայր:

ՎԱՐԴԻԿ ՀՈՐ ՎԱՆՔ, **Վարդիկ հոր վանք**, Vardik Hor vank' - Վ ա ն ք Կարսի մարզի Կաղզվանի օկրուգում, տ Վարդիկ հայր:

ՎԱՐԴԻԿ ՀԱՅՐ, **Վարդիկհայր**, Vardikhayr - Վ ա ն ք Կարսի մարզի Կաղզվանի օկրուգում, տ Վարդիկ հայր:

ՎԱՐԴԻԿՆԵՐ, **Վարդիկհայր**, Vardiher - Վ ա ն ք Կարսի մարզի Կաղզվանի օկրուգում, տ Վարդիկ հայր:

ՎԱՐԴ ԽԱՇԻ ՎԱՆՔ, **Վարդ Խաչի վանք**, Vard Xaci vank' - Վ ա ն ք Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Մուշի գավ-ի Վարդխաչ գ-ի մոտ: Շրջակայքի հայություն սիրած ուխտավայրերից էր: Ավերվել ու լքվել է 19-րդ դ վերջերին:

ՎԱՐԴԿԱՆ ԱՆԱՊԱՏ, **Վարդկան անապատ**, Vardkan anapat, Վարդկան - Ա ն ա պ ա տ (վանք) Կիլիկիայի Հայկական պետությունում, ձկեր գավ-ում, Սև լ-ների շրջ-ում: Ավերվել է երկրաշարժից՝ 1114 թ, որի ժամանակ գոհվել է բանաստեղծ Գրիգոր Մաշկեղիցի:

ՎԱՐԴԿԱ ՎԱՆՔ, **Վարդկա վանք**, Vardka vank' - Վ ա ն ք Կարսի մարզի Կաղզվանի օկրուգում, տ Վարդիկ հայր:

ՎԱՐԴԿՈՒՆ, **Վարդկուն**, Vardkun - Ա ն ա պ ա տ (վանք) Կիլիկիայի Հայկական պետությունում, ձկեր գավ-ում, տ Վարդկան անապատ:

ՎԱՐԴՆԵՐ, **Վարդենի**, Vardher - Վ ա ն ք Կարսի մարզի Կաղզվանի օկրուգում, տ Վարդիկ հայր:

ՎԱՐԴՄԽԱՏԻ ԽԱՇԻ, **Վարդմխատի Խաչի վանք**, Vardmxati Xaci - Ե կ ե ղ ե յ ի Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այգեհովիտ գ-ում, նրա հր-արլ կողմում, փոքրիկ բլրի վրա: Շուրջը կան գերեզմաններ և 17-րդ դ մի քանի խաչքարեր: Գրտնրվում է ավերակ վիճակում:

ՎԱՐԴՅԱ ՀԵՐ, **Վարդյա հեր**, Vardya Her - Ս Ր ք ա տ ե ղ ի , մ ա - տ ու ո Կարսի մարզի Կաղզվանի օկրուգում, Կաղզվան ք-ի մոտ, տ Վառվառե Կույսի մատուղ:

ՎԱՐԴ ՊԱՏՐԻԿ, **Վարդ Պատրիկ**, Vard Patrik, Վարդ Պատրիկի մատուղ, Վարդ Պատրիկի վանք - Մ ա տ ու ո Արմ Հայաստանում,

Վանի նահ-ում, Համանուն գավ-ի Հայոց Ջոր գվով-ի Նորգոմ գ-ի մոտ: Հիշատակվում է նաև իբրև վանք: Այսպես է կոչվել Արծրունի իշխան Վարդ Պատրիկի անունով (10-րդ դ.): Սխալմամբ նույնացվում է Ջարահան Ս Նշան վանքին:

ՎԱՐԴ ՊԱՏՐԻԿԻ ՄԱՏՈՒՌ, Вард Патрики матур*, Vard Patriki matur* - Մ ա տ ու ո Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Հայոց Ջոր գվով-ի Նորգոմ գ-ի մոտ, տ Վարդ Պատրիկ:

ՎԱՐԴ ՊԱՏՐԿԱ ՎԱՆՔ, Вард Патрка ванк*, Vard Patrka vank* - Մ ա տ ու ո Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Ոստանի գվով-ի Նորգոմ գ-ի մոտ, տ Վարդ Պատրիկ:

ՎԱՐԶԱՀԱՆ, Варзахан, Varzahan - Վ ա ն ք Արմ Հայաստանում, էրզրումի նահ-ում, Համանուն գավ-ի Բարերդի գվով-ի Թոմրա գ-ի մոտակայքում:

ՎԱՐԶԵՆՅ ՎԱՆՔ, Варзенц ванк*, Varzenc' vank* - Վ ա ն ք Տրապիզոնի նահ-ի Տրապիզոնի գավ-ում:

ՎԱՐԶՈՒՀԱՆ, Варзухан, Varzuhan - Վ ա ն ք (եկեղեցի) Արմ Հայաստանում, էրզրումի նահ-ում, Բարերդի գվով-ի Վարդահան գ-ում, նրա հս-արլ կողմում: Ավերված էր:

ՎԱՐԻ ԳԵՂ, Вари Гер*, Vari Geγ - Ու խ տ ա տ ե ղ ի Արմ Հայաստանում, էրզրումի նահ-ում, Համանուն գավ-ի Բարերդի գվով-ի Ավերակ գ-ի մոտ: Աստվածածնի տոնի ժամանակ այստեղ տեղի էին ունենում մասսայական տոնախմբություններ:

ՎԱՐԻՋՆԱՅԻ Ս ՆՇԱՆ, Варидж-найи Св Ншан, Varijnyai St Nšan, Ս Նշան - Վ ա ն ք Արմ Հայաստանում, էրզրումի նահ-ում, Համանուն գավ-ի Բարերդի գվով-ի Վարիջնա գ-ում:

ՎԱՐԻ ՎԱՆՔ, Вари ванк*, Vari vank* - Վ ա ն ք Արմ Հայաստանում, էրզրումի նահ-ում, Երզնկայի գավ-ի Բագաոիճ ավանի մոտ, նրանից 1-2 կմ արլ: 1915 թ պահպանվել էին միայն 2 պատերի հետքերը:

«ՎԱՐԻ ՎԱՆՔ», «Вари ванк*», «Vari vank*» - Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստանում, էրզրումի նահ-ում, Երզնկայի գավ-ի Բագաոիճ ավանում, դրանից մոտ 1,5 կմ արլ: 20-րդ դ սկզբներին ավերված էր:

ՎԱՐԻ ՎԱՐԱԳԱ ՎԱՆՔ, Вари Варара ванк*, Vari Varaga vank* - Վ ա ն ք Արմ Հայաստանում, Վանի նահ-ում, Վան ք-ից արլ, տ Ս Գրիգոր:

ՎԱՐՇԱՄԱԿ, Варшамак, Varšamak - Վ ա ն ք (վանքեր) Արմ Հայաստանում, էրզրումի նահ-ում, Քաջքար լ-ան վրա, տ Նաչեքարո վանք:

ՎԱՐՇԱՄԱԿԻ ՎԱՆՔ, Варшамаки ванк*, Varšamaki vank* - Վ ա ն ք (վանքեր) Արմ Հայաստանում, էրզրումի նահ-ում, Քաջքար լ-ան վրա, տ Նաչեքարո վանք:

ՎԱՐՈՍԻ ՎԱՆՔ, Вароси ванк*, Varosi vank* - Վ ա ն ք Մեծ Հայքի Այրարատ աշխ-ի Արշարունիք գավ-ում: Հիշատակում է վարդան Արեվիցին (13-րդ դ) մի քանի ուրիշ վանքերի հետ միասին:

ՎԱՐՈՍԻ ՎԱՆՔ, Вароси ванк*, Varosi vank* - Վ ա ն ք Մեծ Հայքի Սյունիք աշխ-ի Կովսական գավ-ում, Վարոսի գ-ում: Ավերակները զրտ-նրվում են Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի ձակատեն գ-ի մոտ, անտառում: Տարածքում կան գերեզմաններ:

ՎԱՐՍԱՄԲԵԿ, Варсамбек, Varsambek - Վ ա ն ք (վանքեր) Արմ Հայաստանում, էրզրումի նահ-ում, Քաջքար լ-ան վրա, տ Նաչեքարո վանք:

ՎԱՐՍԱՄԲԵԿԻ ՎԱՆՔ, Варсамбеки ванк*, Varsambeki vank* - Վ ա ն ք (վանքեր) Արմ Հայաստանում, էրզրումի նահ-ում, Քաջքար լ-ան վրա, տ Նաչեքարո վանք:

ՎԱՐՍԱՄՊԵԿ, Варсампек, Varsampek - Վ ա ն ք (վանքեր) Արմ Հայաստանում, էրզրումի նահ-ում, Քաջքար լ-ան վրա, տ Նաչեքարո վանք:

ՎԱՐՍԱՄՊԵԿԻ ՎԱՆՔ, Варсампеки ванк*, Varsampeki vank* - Վ ա ն ք (վանքեր) Արմ Հայաստանում, էրզրումի նահ-ում, Քաջքար լ-ան վրա, տ Նաչեքարո վանք:

ՎԱՐՍԱՄՊԻԿ, Варсампик, Varsampik - Վ ա ն ք (վանքեր) Արմ Հայաստանում, էրզրումի նահ-ում, Քաջքար լ-ան վրա, տ Նաչեքարո վանք:

Ս ՎԱՐՎԱՌ, Св Варвар*, St Varvar* - Ս ր ք ա տ ե ղ ի պատմական Փոքր Հայքում, Սեբաստիայի նահ-ում, Սեբաստիա ք-ից հս, Դավրա գ-ի մոտ:

Ս ՎԱՐՎԱՌԵ, Св Варвар*e, St Varvar'e - Ու խ տ ա տ ե ղ ի Կարսի մարզում, Ախուրյան և Տեկորի գետերի ջրբաժանում, Բվիկ և Նախիջևան գ-երի մոտ գտնվող Յաղլուջա լ-ան վրա: Ըստ ավանդույթյան՝ այստեղ է գտնվում Վարվառե Կույսի գերեզմանը, ուր Վարվառուի տոնին ուխտի էին գալիս շրջակայքի հայերը:

Ս ՎԱՐՎԱՌԵ, Св Варвар*e, St Varvar'e - Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Սասունի Փսանք գվով-ի Բլոյնք գ-ում:

Ս ՎԱՐՎԱՌԵ, Св Варвар*e, St Varvar'e - Ու խ տ ա տ ե ղ ի Արմ Հայաստանում, էրզրումի նահ-ում, Համանուն գավ-ի Բարերդի գվով-ի Բլուր գ-ի մոտ, Ս Եղիա ուխտավայրից ոչ հեռու: Հ. Ոսկյանի կարծիքով հնում եղել է վանք:

ՎԵՐԻՆ ԶԱԿԱՄԻ ՀԱՐԱՆՅ ԱՆԱՊԱՏ, Верин Заками hАранц анапат, Verin Zakami Haranc' anapat - Վ ա ն ք (անապատ) այժմյան Ադրբեջանի Հանրապետության Գետարեկի շրջ-ում, տ Նամշի վանք:

ՎԵՐԻՆ ԷՋՄԻԱՄԻՆ, Верин Эджмиацин, Verin Ejmiasin - Մ ա տ ու ո (եկեղեցի) Արմ Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Սպարկերտի գվով-ի Բագենց (Բագմենից) գ-ում, Բագենցի վանքի համալիրում:

ՎԵՐԻՆ ԹԱՂԻ ԵԿԵՂԵՑԻ, Верин Т'аг'и екег'еци, Verin t'ayi ekeγec'i - Ե կ ե ղ ե ց ի Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Շուշի ք-ում, տ Կանաչ ժամ:

ՎԵՐԻՆ ԹԱՂԻ ԵԿԵՂԵՑԻ, Верин Т'аг'и екег'еци, Verin t'ayi ekeγec'i - Ե կ ե ղ ե ց ի ներկայիս Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Օրդուբադի շրջ-ի Վերին Ագուլիս գ-ում, տ Ս Քրիստափոր:

ՎԵՐԻՆ ՎԱՆՔ, Верин ванк*, Verin vank* - Վ ա ն ք Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում, տ Գեղարդ:

ՎԵՐԻՆ ՎԱՆՔ, Верин ванк*, Verin vank* - Տ ա ճ ա ր , Ե կ ե ղ ե ց ի Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունաչեն գ-ի մոտ, տ Երիվանք:

ՎԵՐԻՆ ՎԱՆՔ, Верин ванк*, Verin vank* - Վ ա ն ք ներկայիս Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Զուլփայի շրջ-ի Քոնա գ-ի մոտ: Եկեղեցու անունով նաև այս-

պես է անվանվում **Քոնայի Ս Աստվածածին վանքը (տ):**

ՎԵՐԻՆ ՎԱՆՔ, *Верин ванк**, *Verin vank'* – **Վ ա ն ք**, **ու խ** – **թ** ընդօրինակել է Ավետարան: **Ս** Աստվածածինը պահպանվում էր մինչև 1915 թ, որին կից, գործում էր երկսեռ վարժարան:

ՎԵՐԻՆ ՏԱԹԵՎՈ ԱՆԱՊԱՏ, *Верин Тат'ево анапат*, *Verin Tat'ev o anapat* – **Վ ա ն ք**, **մ ե ն ա ս** – **տ ա ն** Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում, Տաթևի վանքի մոտ, **տ Հարանց անապատ:**

ՎԵՐԻ ՎԱՆՔ, *Вери ванк**, *Veri vank'* – **Ե կ ե ղ ե ց ի** Հայաստանի Հանրապետության Տաշիրի մարզի Մեծավան գ-ում: Գործող եկեղեցի է: **Գ**-ի մոտ գտնվող մյուս եկեղեցիները կոչվում են **Նարարի վանք կամ Ս Հովհաննես և Նաչ Բար:**

ՎԵՐԻ ՎԱՆՔ, *Вери ванк**, *Veri vank'* – **Վ ա ն ք Արմ** Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Բիթլիս ք-ի մոտ: Հիշատակում է գրիչ Թուման 1406 թ իր գրած ձեռագրի հիշատակարանում, թե ձեռագիրը ընդօրինակվել է վանքի Ս Աստվածածին և Ս Գևորգ եկեղեցիներում: Հմմտ **Ննդրակատար Ս Աստվածածին:**

ՎԵՐԻ ՎԱՆՔ, *Вери ванк**, *Veri vank'* – **Ու խ տ ա տ ե ղ ի** պատմական Փոքր Հայքում, Սերաստիայի նահ-ում, Համանուն գավ-ի Տերիկի գվոկ-ի Ջիմարա գ-ի մոտ գտնվող **Նաչի-գյոլ լճի շրջ-ում:**

ՎԵՐՆԱՇԵՆԻ ՍՊԻՏԱԿԱՎՈՐ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, *Вернашени Спитакavor Аствац'ад'иш*, *Vernašeni Spitakavor Astvacacin* – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզում, Վերնաչեն գ-ից հս-արլ, **տ Սպիտակավոր Ս Աստվածածին:**

ՎՋԱՆԱ ՎԱՆՔ, *Вѣжана ванк**, *Vəžana vank'* – **Վ ա ն ք Արմ** Հայաստանում, էրզրումի նահ-ում, Դերջանի գվոկ-ի Վժան գ-ում, **տ Վժանա վանք:**

ՎՃԱՆԱ ՎԱՆՔ, *Вѣжана ванк**, *Vžana vank'*, **Վրժանա վանք, Վժանի վանք** – **Վ ա ն ք Արմ** Հայաստանում, էրզրումի նահ-ում, էրզրումի գավ-ի Դերջանի գվոկ-ի Վժան գ-ում: Հնում մտնում էր Մեծ Հայքի Բարձր Հայք աշխ-ի Դերջան գավ-ի մեջ: 14-րդ դ մի հիշատակարանում վանքի համալիրում մատնանշվում

են Ս Աստվածածին և Ս Նշան եկեղեցիները, որտեղ վանքի միաբան Սարգսի համար Ներսես գրիչը 1304 թ ընդօրինակել է Ավետարան: **Ս** Աստվածածինը պահպանվում էր մինչև 1915 թ, որին կից, գործում էր երկսեռ վարժարան:

ՎՃԱՆԻ ՎԱՆՔ, *Вѣжани ванк**, *Vžani vank'* – **Վ ա ն ք Արմ** Հայաստանում, էրզրումի նահ-ում, էրզրումի գավ-ում, Դերջանի գվոկ-ի Վժան գ-ում, **տ Վժանա վանք:**

ՎԻՄ, *Вим*, *Vim* – **Ա ն ա պ ա տ**, **վ ա ն ք** Կիրիկիայի Հայկական թագավորությունում: Ձեռագրական հիշատակարաններից մեկում ասված է, որ Վիմի անապատի Ս Աստվածածին եկեղեցում ոմն Ստեփանոս ընդօրինակել է Ավետարան:

ՎԻՇԱՊԱՊԱՋՈՐ, *Вишападжор*, *Višapajor* – **Վ ա ն ք** Կարսի մարզի Կաղզվանի օկրուգում: Շրջակայքում քարանձավներ լինելու պատճառով նաև այսպես է կոչվել **Թաթլո վանքը (տ):**

ՎԻՇԱՊԱՍՊԱՆ Ս ԳԵՎՈՐԳ, *Вишапаспан Св Геворг*, *Višapaspan St Gevorg* – **Ե կ ե ղ ե ց ի Արմ** Հայաստանում, Բիթլիսի նահ-ում, Սասունի Փանք գվոկ-ի Ջրթնիկ գ-ում:

ՎԻՐԱՊ, *Вирап*, *Virap* – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում, **տ Նոր Վիրապ:**

ՎԻՐԱՊ ԱՐՏԱՇԱՏՈՒ, *Вирап Арташату*, *Virap Artasatu* – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում, **տ Նոր Վիրապ:**

Ս ՎԼԱՍ, *Св Влас*, *St Vlas* – **Ե կ ե ղ ե ց ի** պատմական Փոքր Հայքի Սերաստիա ք-ում: Ք-ի հայկաթողիկների հոգևոր հաստատությունն էր, հմմտ **Ս Վլասիոս:**

Ս ՎԼԱՍԻՈՍ, *Св Власиос*, *St Vlasios* – **Ու խ տ ա տ ե ղ ի**, **վ ա ն ք** պատմական Փոքր Հայքում, Սերաստիայի նահ-ի Սերաստիա ք-ում: Վանքին վերագրվում էր աչքացավ բուժելու հատկություն: Հայերի հետ այս վանքը հաճախում էին նաև թուրքերը:

ՎԿԱՅԱՐԱՆ ՍՐԲՈՒՅՆ ՍԱՐԳՍԻ, *Вкайран Србуѣн Саргси*, *Vkayaran Srbuyen Sargsi* – **Տ ա ճ ա ր (եկեղեցի, վանք)** Կարսի մարզի Կաղզվանի օկրուգի Տեկոր գ-ում, **տ Տեկորի տաճար:**

ՎՆԱՍՊ, *Внасп*, *Vnasp* – **Հ ե թ ա ն ո ս ա կ ա ն ս ր ք ա վ ա յ ր**

Մեծ Հայքում: Հիշատակում է Ստեփանոս Ասողիկը (10–11-րդ դդ)՝ առանց որոշակի տեղադրություն:

ՎՍԿԱԹԵՎ, *Вскар'ел*, *Vskat'el* – **Մ ա տ ու ու** այժմյան Արրբջանի Հանրապետության Դաշքեսանի շրջ-ի Չովղար (անցյալում՝ Հարցհանգիստ) գ-ում, նրա հս կողմում: **Գ**-ում պահպանվում էր ոմն Մարգարիտի 1155 թ կանգնեցրած խաչքարը: Բարբառում այդպես է անվանվում **Ոսկեթեղ (տ):**

ՎՍԿԱՆԱՉ, *Вскахац*, *Vskaxac'* – **Ս ր ք ա տ ե ղ ի** Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջ-ում, Աչան գ-ի մոտ, բլրի կատարին:

S

ՏԱԹԵՎ, *Tat'ev*, *Tat'ev* – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում, **տ Տաթևի վանք:**

ՏԱԹԵՎԻ ԱՆԱՊԱՏ, *Tat'ev o anapat*, *Tat'evi anapat* – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Սյունիքի շրջ-ում, **տ Տաթևի վանք:**

ՏԱԹԵՎԻ ՄԵԾ ԱՆԱՊԱՏ, *Tat'ev o Mec*, *Tat'evi Mec anapat* – **Վ ա ն ք**, **մ ե ն ա ս տ ա ն** Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում, Տաթևի վանքի մոտ, **տ Հարանց անապատ:**

ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔ, *Tat'ev o vank'*, **Աթևա անապատ, Եվստաթե, Եվստաթեսու Առաքյալ, Ըստաթե, Ստաթե, Ստաթեի Առաքելո վանք, Ս Ստաթեի Առաքելո վանք, Ստաթեի վանք, Ստաթև, Տաթև, Տաթևի անապատ, Տատև, Տատիվ** – **Վ ա ն ք** Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում, հնում՝ Սյունիք աշխ-ի Ծղուկ գավ-ում: Վանքը տեղադրված է գ-ի հր-արլ ծայրամասում, Տաթևի գետի և ձախից նրան միացող անդրնդախոր ձորի ուղղաձիգ ժայռի գագաթի թեք հարթակի վրա, որը արհեստականորեն հարդարվել ու հարմարեցվել է շինարարության համար: Ենթադրում են, որ նախաքրիստոնեական շրջ-ում վանքի տեղում գոյություն է ունեցել հեթանոսական մեհյան: 4–5-րդ դդ այստեղ կառուցվել է մի անշուք քրիս-

տոնեական եկեղեցի: 839 թ Գավիթ եպիսկոպոսը Այունիքի Փիլպե իշխանից 10.000 դրամով գնում է վանքի տարածքը, իսկ 895 թ Հովհաննես եպիսկոպոսը Հայոց թագավոր Սմբատ Բագրատունու (890-914) և Այունիքի իշխանների օժանդակությամբ հիմնադրում է Ս Պողոս-Պետրոս եկեղեցին, որի շինարարությունը ավարտվում է 906 թ: 17-րդ դ այս եկեղեցու արմ կողմին կից ավելացվել է զանգակատունը, որը Հայ ճարտարապետության մի գլուխգործոց է: 930 թ Այունյաց Հակոբ եպիսկոպոսը նկարագրողել է տալիս եկեղեցու ներսի պատերը:

Համալիրի մյուս հուշարձանը Ս Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին է, որը հիմնադրվել է 848 թ և հիմնավորապես վերակառուցվել 1295-ին՝ Այունյաց եպիսկոպոս ու Հայտնի պատմիչ Ստեփանոս Օրբելյանի նախաձեռնությամբ: Ենթադրում են, որ այս եկեղեցու ճարտարապետը Մոմիկն է:

Ճարտարապետական մի հրաշալի կոթող է վանքի բակում, մուտքի մոտ գտնվող Ս Աստվածածին երկհարկանի եկեղեցին՝ կառուցված 1087 թ: Այն հիմնավոր վերակառուցման է ենթարկվել 1980-ական թթ: Վանքի գավիթ-սրահը կառուցվել է 1043 թ: Ճարտարապետական հազվագյուտ կերտվածք է նաև Համալիրի զարդը կազմող Գավազանը կամ ճոճվող հուշայունը (կառուցված 10-րդ դ), որը տեղադրված է Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուց արլ: Այն իրենից ներկայացնում է ութանիստ քարեղեն մի պրիզմա՝ գլխին քանդակազարդ խաչ: Պողոս-Պետրոս տաճարի հը մուտքի առջև է գտնվում մեծ փիլիսոփա Գրիգոր Տաթևացու գերեզմանը, որի վրա 1787 թ կառուցվել է մատուռ-դամբարանը: Համալիրի մեջ են մտել նաև տարբեր ժամանակներում կրթական, տնտեսական և կենցաղային նպատակների համար կառուցված միաբանների խուցերը, պահեստները, մատենադարանը, հյուրատները են: Ողջ Համալիրը, ձորահայաց մասից բացի, չըջապատված է եղել հղկված քարերով շարված բարձրաբերձ ու ամրակուռ, բրգավոր պարիսպներով: Շինարարության մեջ օգտագործված են բազմերանգ տուֆ և բազալտ՝ կրաշաղախով:

Տ վ վերելքը սկսվում է 9-րդ դ կեսերից, երբ այն դարձավ Այունյաց եպիսկոպոսության կենտրոնը: Վալելելով Բագրատունի թագավորների և Այունյաց իշխանների հովանավորությունը՝ վանքը արդեն դ վերջերին ձեռք էր բերել մեծ թվով գ-եր, ուներ կալվածքներ, վարելահողեր, այգիներ, խոտհարքեր, ձիթհաններ, ջրղացներ, խոշոր ու մանր եղջերավոր անասուններ, ձիեր, ջորիներ: Գոյացած եկամուտները ծախսվում էին մեծ թվով միաբանների վրա, կատարվում էին շինարարական ու վերանորոգչական աշխատանքներ, կառուցվում աղբյուրներ, անց էին կացվում ոռոգիչ առուներ ու ջրանցքներ: 9-10-րդ դդ **Տ վ** ուներ շուրջ 50 սեփական գ, իսկ Այունիքի տարածքում նրան հարկատու բնակավայրերի թիվը հասնում էր 677-ի: 17-18-րդ դդ Հայաստանում ստեղծված քաղաքական անբարենպաստ պայմանների պատճառով, հարկատու գ-երի թիվը նվազում ու հասնում է 260-ի, որից ստացված միայն պտղի հարկը կազմում էր մոտ 600.000 պարսկական շահի (մեկ շահին այն ժամանակ հավասար էր 0,25 ֆրանկի):

9-10-րդ դդ **Տ վ** առանձին հոգևորականների թույլ տված չարաչառումները և բռնությունները առիթ են տվել նրան ենթակա գ-երի գյուղացիների ըմբոստությունը, որը երբեմն կրել է բացահայտ ապստամբության բնույթ:

Տաթևը Հայաստանի ամենախոշոր կրոնական հաստատություններից ու գիտական կենտրոններից էր, որտեղ միայն հոգևորականների թիվը 500-ից ավելի էր: Վանքի գիտամանկավարժական գործունեությունը ծավալվել է վաղ միջնադարից սկսած: 5-րդ դ Այունյաց Անանիա եպիսկոպոսի ջանքերով այստեղ բացված դպրոցի վերակացուն Բենիամինն էր, որին Սահակ կաթողիկոսն ու Մեսրոպ Մաշտոցը (5-րդ դ) Հանձնարարել էին մեկնել Ս Գիրքը: Հետագայում իրենց գիտական բեղմնավոր գործունեությունն են ծավալել Պետրոս և Մաթուսողա եպիսկոպոսները: 8-րդ դ այստեղ է ապրել ու ստեղծագործել Մովսես եպիսկոպոսի աշակերտ Ստեփանոս Այունեցին, որը գրել է Ս Գրքի զանազան հատվածների մեկնություններ, ճա-

ռեր, շարականներ, մեղեդիներ ու երաժշտական շատ գործեր: 9-րդ դ վանքի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսը նորոգում և ընդարձակում է վանքի համալիրը «գիանպատշաճ էր այնպիսի մեծի մայրաքաղաքի և աշխարհագրամար ժողովարանի առանց մեծ կաթողիկեի լինել»: Վանքն Հայտնի էր «ծովամատոյց», «անյաղթ» փիլիսոփաներով, երաժիշտներով «բանիբուն» վարդապետներով, նկարիչ-ծաղկողներով, գրիչներով և ձեռագրական արվեստի հմուտ վարպետներով:

Տ վ գործունեությունը մի առանձին իրադ է ստանում 13-րդ դ Այունյաց մետրոպոլիտ ու պատմիչ Ստեփանոս Օրբելյանի ժամանակ: Օրբելյանն իր եռանդուն գործունեությամբ սանձահարում է Այունիքի հոգևոր կենտրոնների միջև ծագած վեճերը, թարմացնում է վանքի միաբանությունը, միջոցներ է տրամադրում գրչության արվեստի զարգացման համար, ավելացնում է մատենադարանի ձեռագրերի և արխիվային վավերագրերի քանակը: **Տ վ** լավագույն ավանդները շարունակվեցին նաև 14-15-րդ դդ անվանի գիտնականներ Հովհան Որոտնեցու, Առաքել Այունեցու, Գրիգոր Տաթևացու և մյուսների ժամանակ: 14-15-րդ դդ Տաթևը համահայկական խոշորագույն ուսումնագիտական հաստատություն էր, որտեղ 1390-1435 թթ գործել է բարձր տիպի համալսարան: Այդ ժամանակ արդեն **Տ վ** միաբանների ու գիտնականների թիվը հասնում էր 1000-ի: **Տ վ** համալսարանը ունեցել է 3 բաժին՝ ուսումնարան ներքին և արտաքին գրոց, գրչության արվեստի և երաժշտություն: Առաջին բաժնում դասավանդվել են փիլիսոփայություն, ճարտարապետություն, քերականություն, մանկավարժություն, լեզուներ, գրականություն և պատմություն, երկրորդում՝ գեղագրություն, մանրանկարչություն և գրչության արվեստ, իսկ երաժշտության բաժնում ուսումնասիրում էին երգ, երաժշտություն և երաժշտության տեսություն: Այստեղ ստեղծագործող գիտնականները գիտությունների տարբեր բնագավառներին վերաբերող ստեղծագործություններից ու թարգմանություններից բացի, գրում էին նաև դա-

սավանդվող առարկաների դասագրքեր: Համալսարանն ունեցել է իր կանոնադրությունը և ուսումնագիտական աստիճանավորումը: Այստեղ ուսանելու էին գալիս Հայաստանի ամենատարբեր վայրերից, Կիլիկիայից, Ղրիմից ևն: Ուսուցիչների թիվը երբեմն հասնում էր 300-ի: Ուսման տևողությունը 7 տարի էր: Համալսարանը պատրաստում էր նաև բարձրաստիճան հոգևորականներ: Որպես կրթական ու գիտական խոշորագույն կենտրոն՝ վանքն ուներ իր հարուստ մատենադարանը: Պահպանվել են այստեղ գրված Տ-ի բազմաթիվ Աստվածաչնչեր, Ավետարաններ, Մաշտոցներ, գիտական աշխատանքների ժողովածուներ, Քարոզգրքեր, ճաշոցներ, ժամագրքեր (9-17-րդ դդ): Թե ինչպիսի ձեռագրական հարստություն է ունեցել Տ վ-ն, երևում է այն փաստից, որ սելջուկ թուրքերը 1170 թ մի արշավանքի ժամանակ այստեղ ցիրուցան են արել ու ոչնչացրել 10.000 ձեռագիր և բազմաթիվ եկեղեցական մատուցներ: Օտարերկրյա հրոսակալների պատճառած ավերածություններից բացի, վանքը հաճախ տուժել է նաև ահեղ երկրաշարժերից: Վանքի տարածքում մեծ ավերածություններ են տեղի ունեցել Հատկապես 1840 թ հունիսի 20-ից մինչև սեպտեմբերի 28-ը տևած և 1931 թ երկրաշարժերի ժամանակ: 1435 թ մոնղոլների արշավանքի ժամանակ վանքը փլատակների վերածվեց, կողոպտվեց, իսկ կենդանի մնացած միաբանները ցրվեցին տարբեր տեղեր: Թուրքմեն վաչկատուն ցեղերի տիրապետության և պարսկա-թուրքական ավերիչ պատերազմների ժամանակ (15-17-րդ դդ) Տ վ գործունեությունը լավագույն դեպքում արտահայտվում էր անշուք միաբանության և փոքրիկ դպրոցի գոյությունը: Վանքի հիմնադրման և անվանման մասին կան մի քանի ավանդություններ: Մի դեպքում այն կապում են Եվստաթե Առաքյալի (1-ին դ), մեկ այլ դեպքում «Գահնամակում»-ում հիշատակված «Տաթևյանք» նախարարական տոհմի անվան հետ: Ասում են նաև, որ վանքի կառուցումից հետո, քարագործ վարպետը դիմելով ներքևում գտնվող բանվորներին 2 տաշեղ է պահանջում, հետո համ-

բուրում է դրանք և ասում «Հոգին Սուրբ տա թե» և վանքի անունը մնում է Տ: Ղ. Ալիշանը անվան ծագումը կապում է Ս Թաղեի անվան հետ: 1980-ական թթ-ից Տ վ տարածքում իրականացվում են վերանորոգչական խոշոր աշխատանքներ: **SU.ԹԵՎՈ ԱՆԱՊԱՏ, Tat'evvo anapat, Tat'evvo anapat - Վ ա ն ք , մ ե ն ա ս տ ա ն ն** Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում, Տաթևի վանքի մոտ, **տ Հարանց անապատ:** **SU.ԱՇԱ ՎԱՆՔ, Талаша ванк*, Talaša vank' - Վ ա ն ք** պատմական Փոքր Հայքում, Սերաստիայի նահում, Կողտ գվոկ-ի Տալաչ գ-ում, **տ Տալաչի վանք:** **SU.ԱՇԻ ՎԱՆՔ, Талаши ванк*, Talaši vank', Տալաչա վանք, Տալաչու վանք - Վ ա ն ք** պատմական Փոքր Հայքում, Սերաստիայի նահում, Շապին Գարահիսարի Կողտ գվոկ-ի Տալաչ գ-ում: Համայնքի մեջ մտնում էին Ս Աստվածածին և Ս Գևորգ եկեղեցիները: Այստեղ, Պողոս վանահոր ժամանակ 1018 թ գրիչ Հովհաննեսը Շոփուկ տիկնոջ համար ընդօրինակել է Ավետարան: **SU.ԱՇՈՒ ՎԱՆՔ, Талашу ванк*, Talašu vank' - Վ ա ն ք** պատմական Փոքր Հայքում, Սերաստիայի նահում, Կողտ գվոկ-ի Տալաչ գ-ում, **տ Տալաչի վանք:** **SU.Ն, Tax, Tax, Դախն - Ե կ ե - ղ ե ց ի** Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում, Դավիթ Բեկ գ-ի մոտ, նրանից մոտ 3 կմ արլ, Տ լքված գ-ի տարածքում: **SU.ՅԻԱՐ, Таїнар, Taynar - Վ ա ն ք** Երևանի նահ-ի Ալեքսանդրապոլի գավ-ում, այժմյան Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկաձոր գ-ի արմ կողմում: Հավանաբար Հոռոմոսի վանքն է, գուցեև այդպես է կոչվել Կարսի մարզի Շորագյալի տեղամասի Թայլար գ-ի եկեղեցին: **SU.ՅՈՅԱՅԻ ՎԱՆՔ, Таїноцайи ванк*, Tayoc'ayi vank' - Վ ա ն ք** պատմական Փոքր Հայքում, Սերաստիայի նահ-ի Դեկքսե գ-ում, **տ Դեկքսեի Ս Գևորգ:** **SU.ՅՈՅ ԿՈՂԱ ՎԱՆՔ, Таїоц Ког'а ванк*, Tayoc' Koga vank' - Վ ա ն ք** Մեծ Հայքի Տայք աշխ-ում, **տ Կողա վանք:** **SU.ՅՔԻ Ս ԽԱՉ, Таїк'и Св Хач,**

Tayki St Xac', Սուխբեչա եկեղեցի - Ե կ ե ղ ե ց ի Արմ Հայաստանում, էրզրումի նահ-ում, համանուն գավ-ի Կիսկիմի գվոկ-ի Սուղբեչա (Ս Ուաչ) ամառանոցավայրի հս-արմ կողմում: Գտնվում էր ավերված վիճակում: **SU.ՅՔԻ Ս ԽԱՉ, Таїк'и Св Хач, Tayki St Xac' - Վ ա ն ք , ե կ ե - ղ ե ց ի , տ ա ճ ա ր Արմ** Հայաստանում, էրզրումի նահ-ում, Թորթումի գվոկ-ի Իչխան գ-ում, **տ Իչխանի վանք:** **SU.ՆՁԱՓԱՐԱՆ, Таңдзап'арax, Tanjaparax, Անապատ, Արիստակես, Արիստակի անապատ, Բեխի անապատ, Գանձափարախ, Տանձափարախ անապատ, Տանձափարախ - Ա ն ա պ ա տ (վանք) Մեծ** Հայքի Սյունիք աշխ-ի Ջորք գավ-ում, Բեխ գ-ից արլ: Սխալմամբ տեղադրել են նաև Արևիք, Կովսական գավ-ներում: Գտնվել է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շահարջիկ (Շեկք) գ-ի մոտ, Վահանավանքից ոչ հեռու: Չպետք է շփոթել Բեխ գ-ից հս գտնվող Փառավարտա վանքի հետ, որը նույնպես անվանվել է Անապատ: Հիշատակվում է 10-13-րդ դդ-ից: 1393 թ Գրիգոր Տաթևացու (14-15-րդ դդ) աշակերտ Մատթեոս վարդապետը այստեղ ընդօրինակել է Քարոզգիրք: **SU.ՆՁԱՓԱՐԱՆ ԱՆԱՊԱՏ, Таңдзап'арax анапат, Tanjar'arax anapat - Ա ն ա պ ա տ (վանք) Մեծ** Հայքի Սյունիք աշխ-ի Ջորք գավ-ում, **տ Տանձափարախ:** **SU.ՆՁԻՎԱՎԱՆՔ, Таңдзикаванк*, Tanjikavank' - Վ ա ն ք** Հայաստանում: Տեղադրությունը՝ անորոշ: 1593 թ Մարգարե երեցը այստեղ ընդօրինակել է «Ձեռնադրություն Մաշտոցայ» գիրքը: **SU.ՆՁՓԱՐԱՆ, Таңдзп'арax, Tanjparax - Ա ն ա պ ա տ (վանք) Մեծ** Հայքի Սյունիք աշխ-ի Ջորք գավ-ում, **տ Տանձափարախ:** **SU.ՇԲՈՒՐՈՒՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆ, Ташбуруни hУшардзан, Tašburuni Hušarjan - Տ ա ճ ա ր , ե կ ե ղ ե - ց ի** Երևանի նահ-ի Սուրմալուի գավ-ում, հին Յոլակերտ ավանի տարածքում, **տ Յոլակերտի Հուշարձան:** **SU.ՊԱՍ Ա.ՂԲԻՐ, Тапас ар'бир, Tapas aybir - Ու խ տ ա տ ե ղ ի Արմ** Հայաստանում, Նարբերդի նահ-ում, Արաբկիր ք-ի մոտ:

ՏԱՎԱՐԱԾԻ ԵԿԵՂԵՑԻ, Тавара-
цъи екер*ѣци, Tavaraci ekeycēi –
Ե կ ե ղ ե ց ի Մեծ Հայքի Այրարատ
աշխ-ում, Անի մայրաքաղաքում, **տ**
Հովվի եկեղեցի:

ՏԱՏԱՍԿՎԱՎԱՆՔ, Татаскаванк*,
Tataskavanċ' – Վ ա ն ք Արմ Հա-
յաստանում, Էրզրումի նահ-ի Եր-
զրնկայի գավ-ում, Տուժիկ լ-ների
ստորոտին, **տ Չարչարանաց վանք:**

ՏԱՏԱՍԿԻ ՎԱՆՔ, Татаски ванк*,
Tataski vanċ' – Վ ա ն ք Արմ Հա-
յաստանում, Էրզրումի նահ-ի Եր-
զրնկայի գավ-ում, Տուժիկ լ-ների
ստորոտին, **տ Չարչարանաց վանք:**

ՏԱՏՐԱԲՆԱԿ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ,
Татрабнак Аствац*адъин, Tatrabnak
Astvacacin – Վ ա ն ք Արմ Հայաս-
տանում, Բիթլիս ք-ի Գոմք թաղա-
մասում, **տ Գոմաց Ս Աստվածածին:**

ՏԱՏՐԱԿԱԲՆԱԿ ԱՍՏՎԱԾԱ-
ԾԻՆ, Татракабнак Аствац*адъин,
Tatrakabnak Astvacacin – Վ ա ն ք
Արմ Հայաստանում, Բիթլիս ք-ի
Գոմք թաղամասում, **տ Գոմաց Ս
Աստվածածին:**

ՏԱՏՐԱԿԱՎԱՆՔ, Татракаванк*,
Tatrakavanċ' – Վ ա ն ք Արմ Հա-
յաստանում, Բիթլիսի ք-ի Գոմք թա-
ղամասում, **տ Գոմաց Ս Աստվա-
ծածին:**

ՏԱՐԱՊԻ ՎԱՆՔ, Тарапи ванк*,
Tarapi vanċ' – Վ ա ն ք Արմ Հա-
յաստանում, Բիթլիսի նահ-ի Մուշի
գավ-ում, **տ Ս Հակոբ:**

ՏԱՐԱՍԱՄՊ, Тарасамп, Tara-
samp – Վ ա ն ք Պարսկահայաս-
տանում, Մակուի խանությունից Դա-
րաշամբի գավ-ում, **տ Դարաշամբի
Ս Ստեփանոս Նախավկա:**

ՏԱՐՈՆԻ ՎԱՆՔ, Тарони ванк*,
Taroni vanċ' – Վ ա ն ք Մեծ Հայքի
Տուրուբերան աշխ-ի Տարոն գավ-
ում, **տ Ս Կարապետ:**

ՏԱՐՈՆՈ Ս ԿԱՐԱՊԵՏ, Тароно
Св Карапет, Tarono St Karapet –
Վ ա ն ք Մեծ Հայքի Տուրուբերան
աշխ-ի Տարոն գավ-ում, **տ Ս Կա-
րապետ:**

ՏԱՐՈՒՄՈՒՇ ԱՍՏՈՆ ՏԱՃԱՐ,
Тарумуш астц*о тац*ар, Tarumuš
astco tačar – Հ ե թ ա ն ո ս ա կ ա ն
տ ա ճ ա ր Հնագույն Հայաստա-
նում (Հայասայում), Կումմախա
(Կամախ) ք-ում:

Ս ՏԱՐՈՒՅՆՔ, Св Таруѣнк*, St
Taruyċk', **Տարունից վանք** – Վ ա ն ք
Արմ Հայաստանում, Էրզրումի նահ-

ում, Բայազետի գավ-ի Բայազետ
ք-ում: Կառուցվել է 7-րդ դ ոմն
Աշոտի ջանքերով:

ՏԱՐՈՒՆԻՑ ՎԱՆՔ, Таруниц
ванк*, Tarunic' vanċ' – Վ ա ն ք Արմ
Հայաստանում, Էրզրումի նահ-ում,
Բայազետի գավ-ի Բայազետ ք-ում,
տ Ս Տարույնք:

ՏԱՔՍԻԱՐԳՈՍ, Так*сиаргос,
Tak'siargos, Յանարթաչ, Յանար-
տաչ – Վ ա ն ք պատմական Փոքր
Հայքում, Կեսարիայի նահ-ի Դար-
սիախ գ-ում, նրա արլ կողմում: Ըստ
Ղ. Ինձիճյանի՝ եղել է կուսանոց:
Համալիրը կենտրոնական եկեղե-
ցուց բացի, ուներ նաև 20–25 սեն-
յակներ:

ՏԵԿՈՐ, Текор, Tekor – Տ ա -
ճ ա ր (եկեղեցի, վանք) Կարսի
մարզի Կաղզվանի օկրուգի Տեկոր
գ-ում, **տ Տեկորի տաճար:**

ՏԵԿՈՐԻ ԵԿԵՂԵՑԻ, Текори еке-
г*ѣци, Tekori ekeycēi – Տ ա ճ ա ր
(եկեղեցի, վանք) Կարսի մարզի
Կաղզվանի օկրուգի Տեկոր գ-ում, **տ
Տեկորի տաճար:**

ՏԵԿՈՐԻ ՎԱՆՔ, Текори ванк*,
Tekori vanċ' – Տ ա ճ ա ր (եկեղեցի,
վանք) Կարսի մարզի Կաղզվանի
օկրուգի Տեկոր գ-ում, **տ Տեկորի
տաճար:**

ՏԵԿՈՐԻ ՏԱՃԱՐ, Текори тац*ар,
Tekori tačar, Դիգորի տաճար, Ս
Երրորդություն, Վկայարան Սրբույն
Սարգսի, Տեկոր, Տեկորի եկեղեցի,
Տեկորի վանք, Տիգորի վանք, Տիկոր,
Տիկորա վանք, Տիկորի վանք – Տ ա -
ճ ա ր (եկեղեցի, վանք) Կարսի
մարզի Կաղզվանի օկրուգի Տեկոր
գ-ում: Կառուցվել է 5-րդ դ 2-րդ
կեսին իշխան Սահակ Կամսարակա-
նի նախաձեռնությամբ: Ունի քառա-
կուսի հատակագիծ, գմբեթը Հեն-
վում է ներսից բարձրացող 4 քառա-
կուսի հաստահեղույս, կամարակապ
